

ՀՅՈՒՄԱՆԻ



ԱՆԺ
ԺԷ ՏԱՐԻ


Օգոստոս

ԷՂՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՈՆԱԿԱՆ ԱՐՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՂՄԻԱԾԻՆԻ

Ը

1960



ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	կը
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հանուն խաղաղության	3
Ա. Հ.—Աստվածածեի տոները	5
ՄԱՅՐ Ա. Թ Ո Ռ Ո Ւ Մ	13
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ—Աստվածաշնչի հայերեն տպագրության պատմությունից	15
ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵՒԹ-ԲԵԿ — Սայար-Նովայի բոռք՝ Տեր Մոլ- սես ավագ քահանա Սայարենյանց	29
Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ—Մեսրոպյան այրբենարանները ԺԵ—ԺԷ դաշերում	34
Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ—Հայկական խաչքարերի արվեստը	43
Հ. ՄԵԼԻՔԱՐՅԱՆ—Առօգանություն	53
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	60
Ապրո Ապրոյան	62
Մարտիրոս Տեր-Մատֆանյան	63




ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՌ. ԷջՄԻԱՃԻՆ
«ԷՇՄԻԱՃԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин».
Redaction of the monthly review «Etchmiadzin», Etchmiadzin, Armenia SSR.

Երևան, 1960 թ.





ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՅ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵԽ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Երջերս դժբախտաբար միշագային հարաբերությունների մեջ ստեղծվեց ոչ ցանկալի և անհենավճերով լի լարված մըրճուրտ, որը արդար տագնապ և երկյուղ առաջացրեց բարի կամքի տեր, խաղաղության ձգող միլիոնավոր ազնիվ մարդկանց սրտերում, որոնց համար կյանքի շափ բաղցր և բանկ է աշխարհում մնայուն խաղաղությունը, ժողովուրդների համագործակցությունը, պետությունների խաղաղ գոյակցությունը:

Ժողովուրդների բարօրության և խաղաղության երկնակամարի վրա նորից կուտակվող ատելության և քշնամանքի բոլոսպ ամսերը իրենց վրա հրավիրեցին խաղաղության ուժերի լարված ուշադրությունը։ Արդարե, երկրագնդի որոշ մասերում դեռևս կատարվում են անավոր գեների փորձարկումներ, ավելացվում են մահացու գեների պաշտաները, որոնք խորունկ տագնապ և անվտանգություն են ներշնչում ժողովուրդներին, ստեղծում լարվածություն, ինչպես նաև բացորդ հնարավորություն նոր և անավոր պատերազմի։

Մյուս կողմից, այս տիսուր երևույթի դիմաց, միիքարական է հաստատել, որ անում և ծավալվում է խաղաղության ձգող ուժերի շարժումը, որ միաժամանակ արքուն և գրասուն է ժողովուրդների գիտակցությունը և աննահանջ՝ ներաց վեռականությունը՝ կանխելու նոր պատերազմի բոլոր հնարավորությունները։

Ստեղծված այսպիսի տագնապալի իրադրության մեջ, սփոփարար և վեռական է

հնշում խաղաղության ձգող և խաղաղություններ պաշտպանող միլիոնավոր մարդկանց, այդ բվում կրոնական ու քաղաքական տարբեր դավանանքի տեր, մշակույթի, արվեստի, գիտության մարդկանց բողոքի ձայնը, այն պայծառ գիտակցությամբ, որ մեր օրերում մանավանդ պատերազմը ոճիր է մարդկության վեճ և նվիրական իդեալների դեմ, մարդկության կոչման դեմ, քաղաքակրության դեմ։

Այս մտածումների լույսի տակ և ստեղծված այսպիսի սխուր, տագնապալի հանգամանների մեջ, երեք էլ պատերական չեն, որ պատերազմը, իր բոլոր տեսակի մահասիյուն զենքերով, և պատերազմի վտանգը, իր բոլոր հնարավորություններով, աշխարհի բոլոր ժողովուրդների ամենախոր ատելությունն ու ցասումն են առաջ բերել։

Մեր օրերում մարդկային բանականությունը և մարդու բարոյական խիդենը, որոնք բնորոշում են մարդուն և նրան տարբերությունը գազաններից, երեք չեն կարող բարոնել, և մանավանդ երեք չեն կարող բույլատել պատերազմի սահմանագերծումը։

Խաղաղության Համաշխարհային Խորհրդի բյուրոյի Ստոկհոլմի հոսկայան սեսիան, արտահայտելով խաղաղասեր բոլոր ժողովուրդների, կազմակերպությունների և բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց ցանկությունները, ընդունել էր վերշերս աշխարհի բոլոր խաղաղության ուժերին ուղղված սրտագին կոչ՝ ավելի ակտիվութեա պայծառ ծավալելու աշխարհում կայուն խաղաղության ամրապնդման, պետություն-

ների խաղաղ համագործակցության, ընդհանուր ու լրիվ զինաքաղման համար:

Խաղաղության պաշտպանության սովորական կոմիտեի հախազանությունը, օգոստոսի 2-ին, հանուն Սովետական Միության բոլոր ժողովուրդների, լիովին հավանություն տալով Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուռոյի սեսիայի ոռոշումներին ու պաշտպանելով բոլոր խաղաղասերությին ուղղված նրա կոչը՝ սկսելու միահմատ պայքար զինաքաղման և խաղաղության համար, իր հերթին ոռոշում էր ընդունել կոչ անել սովետական ժողովրդին՝ պաշտպանելու Խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուռոյի սեսիայի պահանջը և օգոստոսի 6-ը նշելու որպես առոմային պատերազմի դեմ, զինաքաղման համար միութենական ժողովուրդների պայքարի օր:

Ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ մեր հայրենի քաղաքներում, գյուղերում, ձեռնարկություններում, ամենունք հայ ժողովուրդը օգոստոսի 6-ը նշեց որպես առոմական պատերազմի սպառնալիքի դեմ զինաքաղման համար սովետական ժողովրդի պայքարի օր:

«Տասնմեկ երեխայի մայր եմ, — գրում է այս առքիվ հերոսունի հայ մայրերից մեզը: — Ինք տղա եմ անեցել ու մեծացել, նրանցից 5-ը զնացել են պատերազմ և չեն վերադարձել: Ով մայր է, կիմանա, թե քանի՞-քանի՞ անեռն զիշերներ կիննեմ լուսացրած որդիներին կորուսը սգալով: Ճիշտ է, շատ ժամանակ է անցել, բայց սրբաւու կոկիծ կա, որդեկորույս մոր խորին կոկիծ»:

Ազգուր բայց հերոսունի մոր թերեակ խոսում են աշխարհի բալոր մայրերը, և դատապարտելով արյունու պատերազմը, պահանջում են խաղաղության՝ հանուն իրենց զաված զավակների, եղբայրեների, ամուսինների, որպեսզի այլևս աշխարհում երբեք արյուն ու արցունք չլինեն, որ երկրագնդի բոլոր մայրեն ապրեն երշանիկ ու խաղաղ՝ իրենց սիրասուն զավակների և ամուսինների հետ, և երբեք ու երբեք այլևս շարունի ոչ մի մոր սիրո, չկրի ահավոր վիշտ ու կոկիծ, և մանուկները անեն, հասակ առնեն խաղաղ երկների տակ:

Այսօր ավելի քան երբեք աշխարհը կարիքն ունի մնայուն խաղաղության: Աշխարհի բոլոր ազերիլ մարդիկ առում են պատերազմը, որ շարիք է թերում ժողովուրդներին, և ձգում են այն քանին, որ այս աշխարհը դառնա իրավու բարիքներով նոխացած և աշխատավոր բարդու արդար վաստակով գե-

ղեցկացած մի բուրաստան, որտեղ, բայ հումանիստ բանաստեղծի՝ «Ամեն մարդու հավասար բող բաժնի ամեն զանձ, թող պարտեզները բացվին և բող խուժեն հոն մարդկի, բայց չկոտրեն ոչ մեկ ծառ, չեզմեն ոչ մեկ ծաղիկ»:

(Վ. ԹեքեՅԱՆ)

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին. Մայր Արք Ս. Էջմիածնի զինավորությամբ և իր արժանքնախր Գահակալ նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա.-ի թերենվ, որ այս օրերին, խաղաղության ժիրենին ի ձեռին, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում կատարում է խաղաղության ուղևորություն, իր վեռական ձայնն է միացնում եր հարազատ ժողովրդի ձայնին՝ հօգուտ խաղաղության և մարդկային բարօրության, հանուն կյանքի հաղթանակի, հանուն բաղաժակր-բության պահպանման, ընդդեմ պատերազմի, արյան, թշվառության և մասնաւության գիշեցներին է արդարութեան ընդ անօրէնության, և կամ զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ թելիարայ» (ՊԿՐԸ. Զ 15—16):

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և մեր ժողովրդի համար այսօր չկա ավելի վեճի և նվիրական բաղանք, քան մնայուն խաղաղությունը աշխարհի: Գուցե ոչ մի ժողովուրդ, իր բազմադարյան պատմության ընթացքում, այնքան չի երազել, անհացել խաղաղության, որքան մեր ժողովուրդը, որը անցյալու կրել է բազում տառապանեներ և վշաեր:

Խաղաղասեր հայ ժողովուրդը սրբի անսահման հենքանենով է ողջունում խաղաղության պաշտպանների՝ պատերազմի վտանգն ու սարսափը վերացնելու համար կատարած բոլոր ջաներն ու ոռոշումները: Պատահական չէ ուրեմն, որ խաղաղության Համաշխարհային Խորհրդի Բյուռոյի սեսիայի ոռոշումը մի անգամ ևս լայն արձագանք գտավ ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ հավատացյալ ժողովրդի սրբում:

Վեհափառ Հայրապետը, արտահայտելով հայ հավատացյալ ժողովրդի ձգումներն ու մատածումները, 1959 թվականի դեկտեմբերի 1-ին, Հայ եկեղեցու թեմակալ առաջնորդներին ի նպաստ խաղաղության ուղղած հայրապետական եր պատգամի մեջ արդարացիան գրում էր.

«Ինչպես ՔԱԶ ՏԵՂՑԱԿ եք, ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻ ԵՎԱ, ՄԱՆԱՎԱՆԴ Ս. ԷջՄԻԱՌՆԻ ԲԱՐ-

ՉՈՒՆՔԵԼ, ՄԻՇՏ ԻՐ ԶԱՅՆԸ ԼՍԵԼԻ ԴԱՐ-
ՉՈՒԹԱԾ Է ՎԱԾՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻ:

ՄԵՐ ԽՈՍՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ ՎԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿԲԻՆ ՆԱԽ ՄԵՐ ՔՐԻՍՏՈ-
ՆԵԿԱՆ ԽՂՃՆ ԵՎ ՆԱԵՎ ՄԵՐ ԲԱԶՄԱՑԱՐ-
ԶԱՐ ԺՈՂՈՎՈՒԹՅԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՊԱՏՄՈՒ-
ԹՅԱՆ ՓՈՐՁԵՆ:

ԱՀԱ ԹԵ ԽՆՁՈՒ ՄԵՆՔ ԱՆՎԱՐԱՆ ԿԵՐՊՈՒ
ՄԵՐ ԶԱՅՆԸ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ՄԻՇՏ
ԵՎ ԱՄԵՆ ԱՌԹԻՎ ՀՕԳՈՒՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԴԱՏԻՆ, ՀՕԳՈՒՏ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ, ՀՕԳՈՒՏ
ԺՈՂՈՎՈՒԹՅԵՐՈՒԻ ՏԵՎԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒ-
ԹՅԱՆ ԵՎ ՇԽՆԱՐԱՐ ԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ, ԱՅՆ
ՀԱՍՏԱՏ ՀԱՎՈՋՈՒՄՈՎ, ԹԵ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ
ԲԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԵՐ
ԿԱՐԵԼ ՊԻՏԻ ԸԼԱԱ ԼՈՒԾԵԼ ՀԱՄԲԵՐՈՒ-
ԹՅԱՄԲ, ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ, ՓՈԽԱԴԱՐՁ
ՓՈԽԸՄԲՈՆՈՒՄՈՎ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ
ԶԳԱՅՈՒՄՈՎ:

ՊԱՏԵՐԱԶՄ, ԵՐԲԵՇ, ԵՎ Ո՞Չ ՈՓԻ ԴԵՄ.
ԱՅՍ Է ԵՎ ԱՅՍ ՊԵՏՔ Է ԸԼԱԱ ՓՐԿԱՐԱՐ
ԿԱՐԳԱԽԵՈՍՔ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՈՒՂԻՆ ԲՈԼՈ-
ՐԻՆ ՀԱՄԱՐ, ԲՈԼՈՐԻՄ ՀԱՄԱՐ, ԱՄԵՆ ՄԵԿՍ
ՄԵՐ ԴԻՐՔԵՐԵՆ, ԱՄԵՆ ՄԵԿՍ ՄԵՐ ՈՒԺԵ-
ՐՈՎ»:

Վեհափառ Հայրապետը 1959 թվականի
մայիսին Մոսկվայում կայացած Խաղաղու-
րյան սպետական կոմիտեի համագումարում
արտասահած իր նոյակապ նաոի մեջ
խոսում էր նաև պատերազմի տագեապի և
սարսափով վարակված մրենլուտում բնդ-
հանապես Քրիստոնեական եկեղեցու կա-
տարելիք մեծ գարծի մասին՝ ժողովուրդնե-
րին վստահություն և բաշուրյուն ներշնչե-
լու բնագավառում.

«ՄԵՆՔ, ՄԱՆԱՎԱՆԴ ՄԵՆՔ ՀՈԳԵՎՈՐԱ-
ԿԱՆՆԵՐՄ, ԵՐԿՅՈՒԴԻ ԵՎ ԱՆՍՈՒԳՈՒԹՅԱՆ,
ՄԵԶ ՏԱՆՃՎՈՂ ԱՅՍՈՐՎԱՄ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ
ՊԱՐՏԻՆՔ ՑՈՒՅՑ ՏԱԼ ԲԱՐԻՒՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ,
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ: ԱՅԴ Է
ՓԱՌՔ ՄԱՐԴՈՒՆ: ԱՅԴ ԼԻՆԵԼՈՒ Է ՓԱՌՔ Բ-
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՈՒ ՊԵ-
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՈՐՈՆՑ
ԶԵՌՔՈՒՄ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՄԲՈՂԶ ԱՇԽԱՐՀԻ
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ, ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴ-
ԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԼԻՆԵԼ ԶԼԻՆԵԼՈՒ ՀԱՐ-
ՑԸ»:

ՎԵ՛Ր պատերազմին: Թող զա խաղաղու-
րյան, բարօնության ժամանակաշրջանը,
ժողովուրդների եղբայրացման, պետու-
րյանների խաղաղ համագործակցության
շրջանը, որի համար պայքարում, աշխա-
տում և աղորում է Քրիստոնեական եկեղե-
ցին մոտ բան դար:

Աշխարհի բոլոր ժողովուրդները, տարբե
դավանանք ունեցող բոլոր կրոնները, այսօ-
մանավանդ, գիտության ծաղկման և ատո-
մական դարում, գիտակցում և խորապես
պատերազմը կանխելու աներածեատությունը
և չերմորեն հավատում խաղաղությունը
պահպանելու և մանավանդ այն պայքարով
նվաճելու հնարավորության գաղափարին:
Խաղաղությունը պետք է նվաճել համատեղ
աշխատանքով, պայքարով և աղորենվ:

Մարդկությունը չի կարող երեք հրա-
ծարվել մեայուն խաղաղությունը նվաճելու
և հույսից և վեռականությունից:


Խաղաղության հզոր, անող ուժերի պայ-
քարով, պետք է բնդմիշտ փակել նոր և ա-
հավոր պատերազմների բոլոր հանապարհ-
ները:

Այս ազնիվ նպատակների իրագործման
հանապարհի վրա մեծ և առաջնորդ բայլ
է մեր կառավարության առաջ բաշած բնդ-
հանուր և լրիվ զինաքափման, տարբեր հա-
սարակական սիստեմներ ունեցող պետու-
թյունների խաղաղ գոյակցության ծրագիրը:

Խաղաղության անող ուժերի և խաղաղա-
սեր ժողովուրդների անկատում կամքի ա-
ռաջ՝ «բ'ղ փշշվեն բոլոր աղեղները, խոր-
տակվեն բոլոր զենքերը, այրվեն բոլոր աս-
պարեները» (Սաղմ. ԽԵ 10), և «գայլը քը ն-
գառան հետ մակաղի, նորը, ցուլը, ապու-
ծը միասին նարակեն և դեռափ մանուկը
նովվի նրանց», ինչպես նախատեսել է անց-
յալի խաղաղության մեծ բարոգիչներից ն-
սայի մարգարեն (Խսայի ԺԱ. 6—9):

Խաղաղության համար ժողովուրդների
ծալալած պայքարը կաղըանակի, որով-
հետև խաղաղության գաղափարը գրավել է
միլիոնավոր ազնիվ մարդկանց սրտերն ու
խոները:





ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐԸ

(ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ)


այ եկեղեցու Տոնացույցում և մեր
եկեղեցական տոների, կրոնական
հանդիսությունների և ուխտագնա-
ցությունների շարքում, յուրահա-
տուկ տեղ են գրավում Աստվածա-
ծնի կյանքին և մանավանդ հիշատակին
նվիրված մի շարք տոներ:

Եկեղեցին խորին հարգանք, շերմ սեր է
տածել դեպի Աստվածածինը որպես «Մայր
Փրկչի», «Մայր հաստատութեան մարդկան»,
«բոլորից փրկութեան Մայր», «միջնորդ Աս-
տուծոյ և մարդկան»: Աստվածածինը միա-
ժամանակ մարմնացումն է եղել տիպար,
հավատավոր, առաքինի կնոջ և անձնազո՞չ
մոր, որի կյանքի օրինակով և կատարած
լուսավոր դերով բարձրացել է նաև կնոջ, մոր
հասարակական դիրքը հին աշխարհում:

Աստվածածնի տոները թեև շատ վաղուց
չեւ որ սկսվել են նշվել եկեղեցում, այնու-
ամենայնիվ ավետարանական և առաքելա-
կան վկայություններն ու ավանդությունները
պերճախոս ապացույցն են այն բանի, որ
առաքյալները և առաջին քրիստոնյաները
մեծ հարգանքով էին շրջապատել Ս. Կույսին:

Քրիստոս, խաչի վրա կրած իր շարշա-
րանքների մեջ իսկ, մտածելով իր Մոր մա-
սին, առաքյալների խնամքին էր հանձնում
«ամենեն սիրունակ ու սրբազն ժառանգու-
թյունը, զոր կթողուր երկրի վրա», այսինքն
Ս. Կույսին:

Եվ առաքյալները, Քրիստոնեական անդ-
րանիկ եկեղեցին, սրբությամբ և գուրգուրան-

քով պահեցին այդ թանկագին ավանդը,
Քրիստոսի համբարձումից հետո մանավանդ,
Աստվածածնին շրջապատելով շերմ հոգա-
ծովիամբ:

Հովաս ավետարանիշը պատմում է, ոռ
Քրիստոսի համբարձումից հետո, երբ առա-
քյալները «դարձան յերուաղէմ յանուանեալ
լեռնէն Զիթենեաց... և ելին ի Կերնատունն,
ուր վանքն իսկ էին», նրանց հետ էր նաև
Աստվածածինը. «սոքա ամենեքեան էին
հանապազորդեալ միաբան յազօթս հանդերձ
կանամքը և Մարեմաւ Մարըն Յիսուսի»
(Գործք Ա. 14):

Հովասի վկայությունը վերջին ակնարկու-
թյունն է Աստվածածնի մասին նոր Կտակա-
րանում:

Հստ առաքելական ավանդության, Քրիս-
տոսի համբարձումից հետո Աստվածածինը
ապրում է 15 տարի և մահանում երուսաղե-
մում: Առաքյալները մեծ հանդիսությամբ
թաղում են նրան երուսաղեմում, Գեթսեմա-
նիի պարտեզում, իրենց ընտանեկան դամ-
բարանում, որի վրա հետո շինվում է Ս.
Աստվածածնի անունով եկեղեցի, որը կան-
գուն է մինչև այսօր և որտեղ ամեն օր սուրբ
պատարագ են մատուցում հայերն ու հոգյ-
ները, դարերի հողովով մեջ ապրեցնելով
հիշատակը Ս. Կույսի:

Սուրբելական դարի հաջորդ շրջաններում
Քրիստոնեական եկեղեցին իր ծոցում վառ
է պահել միջաւ Ս. Կույսի հիշատակը դավա-
նաբանական, քրիստոնաբանական հարցե-
րի հուղման առաջին իսկ օրերից, երբ մի

շարք հերետիկուններ աշխատում էին նսեմացնել Աստվածածնի դերը մարդեղության խորհրդի մեջ:

Առաջին տիեզերական ժողովը, 325 թվականին գումարված Նիկիայում, վերջնականապես և Հստակորեն բանաձեւեց Աստվածածնի դերը մարդեղության խորհրդի մեջ. Քրիստոս «մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարեմայ Սրբոյ Կուսէն, Հոգովին Սրբով, որով էտո զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշշմարապէս և ոչ կարծեօք»:

Երրորդ տիեզերական ժողովը, գումարված 431 թվականին Եփսոսուում, դատապարտելով Նեստորին, որ մերժում էր «Աստվածածնի» բացատրությունը և Ս. Կուլյսի համար ընդունում էր «մարդածնի» բացատրությունը, ընդունեց Ս. Մարիամի համար «Թէոդոկոս» տիտղոսը, որ թարգմանվում է «Աստուածակիր», իսկ մեր Եկեղեցում ընդհանրացել է «Աստուածածնի», «Աստուածամայր» բացատրությունը:

Ե դարից հետո, երբ դավանաբանական, քրիստոսաբանական միտքը հստակվեց երեք տիեզերական ժողովների որոշումների և ընդունած բանաձերի լույսի տակ և հերետիկոսությունները դատապարտվեցին, Եկեղեցում բարձրացվեց նաև Աստվածածնի դիրքը և սահմանվեցին Աստվածածնի հատուկ տոնները, որոնք «Հետզհետե ավելի փառափոր արտահայտության մը վերածեցին այն շերմենանդությունը, զոր քրիստոնյայք միշտ ունեցած էին արդեն Մարիամումասին» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, «Սիոն», 1933 թ., էջ 267):

Եկեղեցական մատենագրության մեջ ևս Եկեղեցու ուղղափառ կեցվածքը Ս. Կուլյսի հանդեպ արտահայտվել է Աստվածածնին նվիրված բազմաթիվ ներբողների, գովեստների, տաղերի ու շարականների միջոցով:

Փրկչի Սոր հիշատակի հանդեպ Եկեղեցու ցուց տված խանդապառ զգացմունքն ու երկուությունը ամենահին ժամանակներից իվեր բացատրվում էն նաև նրանով, որ Աստվածածնը ամեն բանից առաջ տիպար Մայր է և ազնիվ ու անձնազո՞ն կին, որի օրինակով ու շնչով պետք է դաստիարակվեն հավատացյալները:

Եկեղեցական տոնները, կրոնական հանդիսությունները բացառիկ առիթներ են հավատացյալների՝ համար՝ հետևելու այն առարինազարդ կյանքին, որով ապրել են և սըրբացել այդ մեծ հոգիները:

Եվ դա հասկանալի է նաև մարդկայնութեան Մեր քաղաքական, հասարակական, գրական կյանքում սրբությամբ և գուրգուրանքով ենք պահում հիշատակը բոլոր նրանց, որոնք իրենց նպաստը բերել են մեր

կյանքի առաջընթացին, մեր մշակութի, գրականության, արվեստի զարգացման: Համախ ենք նշում անցյալի մեր մշակութի վաստակավոր մարդկանց ծննդյան և կամ մահվան տարեդարձները, ոգեկոչում նրանց հիշատակը, ապրեցնում ենք նրանց մեր կյանքում, նրանց համար թանգարաններ ենք բացում, գորգուրանքով պահում այն ամենը. ինչի նրանց ձեռքն է հպել, ինչում կա նրանց շունչը:

Եկեղեցին, տոնելով հիշատակը իր սրբերի, մեծարում և գնահատում է նրանց ապրած և դավանած ավետարանական, քրիստոնեական տիպար կյանքը և սկզբունքները: Այս իմաստով Եկեղեցու կողմից սրբերի և մանավանդ Աստվածածնին ընծայված հարգանքու «հների է պաշտելություն մը լլլալի, անհիկա փրկագործության խորհրդին միջոցեղած բարի էակի մը նկատմամբ զգացված երկյուղած սիրո արդար գործ մըն է սոսկի: Ի սկզբան այդ Երկյուղածությունը կարտահայր՝ Փրկչին տերունի և տերունական տոններուն հետ խան հիշատակությամբ միայն: Ե դարեն ետքն է, որ Աստվածածնի կյանքին զանազան պարագաներու առարկա կդառնան ուրույն տոննական հանդիսությանց, նաև Արևելքի մեջ, ուրկե հետո կանցնի Արևմուտք» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, «Սիոն», 1933 թ., էջ 270):

Մեր Եկեղեցում Աստվածածնին են նվիրված հետեւյալ տոնները. «Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ», «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն», «Տօն ծննդեան Սրբոյ Կուսին յԱննայէ», «Աւետառուն Ս. Աստուածածնի», «Վերափոխումն Ս. Աստուածածնի», «Գիւտ գուտույ Ս. Աստուածածնի», «Գիւտ տիփոյ Ս. Աստուածածնի»:

1. «Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ». — Եկեղեցին դեկտեմբերի 9-ին կատարում է Ս. Կուլյսի «յԱննայէ» հղության տոնը: Աստվածածնի ծնողները՝ Հովակիմն ու Աննան, եղել են Դավիթի սերնդից. մայրը՝ Մատիան քահանայի աղջիկը:

Աննան ամուկ էր. նա ուկսուվ և աղոթքով ունեցավ Մարիամին. «աւետեօք հրեշտակի ընկալաւ զցանկալի զաւակն»: Մարիամը ուկսուի զալակ էր, ինչպես իսահակն ու Սամսոնը:

Հայ շարականագիրը շատ գեղեցկորեն է նկարագրում Աստվածածնի հղության տոնի նշանակությունը. «Ի յամուկ երկրէ ալսոր բուսաւ մեզ բարեբեր բոլուն բարի, շուշան հովտաց, ծաղիկն զաշտաց, միհամայրն Մարիամը, արմատ տնկոյն անմահութեան»:

Մարիամը երեք տարեկան հասակում նվիրվում է Տաճարին, հանձնվելով Տաճարի. այրի կանանց և բարեպաշտ կուլսերի ինամբին, կրթության և հոգածության: Տաճարում

Մարիամը մեծանում է մինչև 12 տարեկան հասակը, և ապա վերադառնում է նազարեթ, իր ծնողների մոտ, նշանվում հյուսն Հովսեփի հետ, որը նույնպես «ի տանէ Դավթի» էր:

Հստ Եկեղեցու վարդապետով թյան, Մարիամը թեև ծնված գրութեան օրինաց համաձայն ի հօրէ և ի մօրէ», բայց բարոյապես զերծ է համարվում սկզբնական կամ աղամական մեղքից: Այդ պատճառով Եկեղեցում տոնվում է ոչ միայն Աստվածածնի ծնոնդը, այլ նաև «յորդիմն ի յԱննայէ»:

Թեև յաղագս անախտ ծննդեան Սրբոյ Կուսին շոնիմք յայտնապէս աւանդեալ ի Սուրբ Գիրս (Հ. Գ. Ավետիքյան, «Բացատրովիմ շարականաց», Վենետիկ, 1814, էջ 1), այնուամենայնիվ Կաթոլիկ Եկեղեցին կազմել է «անարատ հղության վարդապետովիոն»-ը որպես «հավատի մասն»: Մեր Եկեղեցին շի ընդունում այդ վարդապետովիոնը և շեշտում է Աստվածածնի հղության տոնի առթիվ այն միտքը, որ Ս. Կույսը Քրիստոսի ծննդից առաջ աստվածային շնորհներով նախապատրաստվել և մաքրազարդվել էր իր մեծ կոչման և եղակի դերի համար, որ է «Մայր Աստուծոյ»: «այսուիմանայ զամենայն մաքրութիւն գիտակցարար, որ վայել է Մօր Աստուծոյ»: Կարեռն այն չէ, թե ե՞րբ է տեղի ունեցել մաքրազարդումը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դավանում է, որ Մարիամը «ի սկզբան յափտենից և յաստուծակոյս կողմանէ» որոշվել էր որպես Մայր Փրկչի և Աստված Նրան զարդարել էր մայրական շնորհներով: «Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ» (Ղուկ. Ա. 30):

Առաջին կինը՝ Եվան, եղավ պատճառ մարդկության անկման. Մարիամը եղավ «պատճառ սկզբնաշահիդ այսքաննաց բարեաց» (Նարեկացի): «Եվան,— գրում է Ս. Իրենիոսը, հրապուրվեց Աստված լինելու խոստումով, Մարիամ համոզվեց հնազանդվել Աստծոն... Կուսական անհնազանդությունը Եվայի հավասար հատուցում գտավ Մարիամի կուսական հնազանդության մեջ» (Իրենիոս, «Ընդդէմ հերետիկոսաց», գիրք Գ, գլ. 14):

Մեր շարականագիրը շատ պատկերավոր ձևով նկարագրում է, որ Մարիամը «զնախամօրն Եւայի զանէծս երարձա և հանդիսացավ «փափկութեան դրախտին բացող բանալի»:

Պետրոս Սյունեցի (Զ դար) «ի գովեստ Աստուծածնի» ճառում գրում է, որ «ցանկակի է այսօր մեզ ջրհորն Դավթի; յորմէ գիտն Աստուծոյ յորդահոս իշխութ բղինեալ գտիեզերս արրուցանէ»:

Աստվածածնի հղության տոնը Ս. Կույսի կյանքի ժամանակագրության մեջ թեև առաջին տոնն է կամ դրվագը, բայց հին չէ որպես Եկեղեցական տոն: Զգիտենք, թե ե՞րբ է սահմանված այս տոնը, որը հատուկ շարական է լունի: Այդ օրվա Օրհությունն է օնրգեցէք որդիք Սիոնի երգ նոր», գրված Հակոբ գիտնական Կայացի կաթողիկոսի կողմից ժգ գրառում ավելի պատշաճում է Աստվածածնի ծննդյան և ընծայման տոնին՝ իր բովանդակությամբ և պատկերներով, քան հղության տոնին:

? «Տօն ծննդեան Սրբոյ Կուսին յԱնենայէ».— Տոնացուցում Ս. Աստվածածնի Երկրորդ տոնն է նրա ծնունդը, որն անփոփոխ կերպով կատարվում է սեպտեմբերի 8-ին: Եկեղեցին ոչ մի սրբի ծննդյան տոն չի կատարում, քրացի հրաշափառ ծննդենէ Քրիստոսի Տեան մերոյ՝ տօնախմբել զծընունդը ըստ մարմնոյ այլոց սրբոց, բայց միայն զՍրբուհոյ Աստուծածնին և զՅովհաննէս Սկրտչին» («Բացատրովիմ Շարականաց», էջ 1):

Մինչև Զ դարի վերջերը Եկեղեցական պատության և մատենագրության մեջ շունենք որոշ հիշատակություն Աստվածածնի ծննդյան տոնի կատարման մասին: Շատ հավանաբար Աստվածամոր ծննդյան տոնի կատարումն սկզբել է է դարում և հարորդ դարերին ընդհանրացել: Ժթ դարում հունաց կիո էմմանվել կայսրը հրահանգել էր մեծ հանդիսությամբ տոնել Աստվածածնի ծննդյան տոնը:

Շատ հավանաբար Աստվածածնի ծննդյան տոնը Հայ Եկեղեցում տոնվել է սկզբել Ժթ դարի վերջերին, Հայ և Հույն Եկեղեցիների միության փորձերի ժամանակ:

Արդարու օրվա տոնի շարականը՝ «Կանոն ծննդեան Ս. Աստուծածնի», առաջին պատկեր՝ «Երգեցէք որդիք Սիոնի երգ նոր» (Հակոբ Կայացի) և Երկրորդ պատկեր՝ «Որ նախիմաց իմաստութեամբ», Ժթ—ժգ դարերի ստեղծագործություններ են:

Ավետարաններում չի պահվել ոչ մի տեղեկություն Աստվածածնի ծննդյան մանրամասնությունների մասին: Մանոթ յեն ո՛չ Նրա ծննդյան մայրը և ո՛չ էլ ճշգրիտ թվականու: Այնուամենայնիվ, Եկեղեցին տոնում է Աստվածածնի ծննդյան տոնո, կրոնական իմաստով, որպես մարդկալին ազգի նույնություն կության օրվա սկզբնավորության. «Ճընծացէր որդիք մարդկան այսօր ծննդեամբ Սրբուհոյ Կուսին», որովհետև ուղարկութիւն աշխատին ծնաւ աւսոր զՄարիամ ամուլն Աննա (Շարական ծննդյան Ս. Աստուծածնի), դրանով «Անրսկիզբն Աստուծածնի մարդասիրեալ տնօրինաբար արկեր հիմունս նորոյ

աշխարհի և ի սկզբանց յափտենից խնամարկեցր զորդիս Աղմամայք:

Պետրոս Սյունեցին Աստվածածնի ծննդյան դեպքի մեջ տեսնում է աշխարհի հոգևոր լուսավորությունը. «արեգակնաբար զաշխարհս ամենայն լուսաւորեաց ի նմանէ»: Աստվածածնի ծնունդը նարեկացու համար «ցաւոց անիժից արմատ օրհնութեան հօրն Աղմամայ որդի բերկութեան» է:

Հայ շարականագիրը գեղեցկորեն նկարագրում է Աստվածածնի ծնունդով աշխարհին շնորհված հոգևոր ուրախությունը. Աստվածողորմելով «ի մեջս ծնեալ մարդկան», ծնունդ տվեց Աստվածածնին, որպեսզի հոգեպես տառապած և վշտահար մարդկության համար ծագի «առաւօտ խաղաղութեան և արուսեակ զուարթարար»: Աստվածածնի ծնունդը եկեղեցու համար եղավ «ծագումն արևու լուսոյն ճշմարտի, որով հերքեաւ խաւարն առաջին»:

3. «Ընծայումն Ա. Աստուածածնի ի Տանարե երից ամաց».— Աստվածածնի երրորդ տոնն է երեք տարեկան հասակում նրա ընծայումը Տաճարին, որպես ուխտի զավակ:

Ընծայման տոնը հաստատում կերպով կատարում են բոլոր եկեղեցիները նոյեմբերի 21-ին: Ըստ ավանդության, Մարիամը Տաճարում մնացել և զաստիարակվել է բարեպաշտ կանաց և հոգեոր բուրյերի խնամքի տակ մոտ 9 տարի, մանավանդ որպես հոգեոր սանիկը Տաճարում բնակվող Ասերի ցեղից, Փանվելի զուսար Աննա մարգարեաւունու. «Սա ինքն անցեալ էր զաւորքք բազմօք... ոչ մեկնէր ի Տաճարէն, ալլ պահօք և ազօթիք պաշտէր զցայգ և զցերեկ», — գրում է Դուկաս ավետարանիչը (Բ 36): Աննա մարգարեաւին ապրեց երկար և Տաճարում, Մարիամի գրկում ողջունեց Փրկվի քառասնօրյա ընծայումը Տաճարին, և Սիմեոն ծերունու նման, լցված աստվածային ներշնչմամբ, «հօսէր զնմանէ (զՔրիստոսէ) ընդ ամենեսին, որ ակն ունէին փրկութեանն երուսաղէմի» (Ղուկ. Բ 38):

Նարեկացին, ակնարկելով Ընծայման տոնին, զորում է Աստվածածնի մասին, որ «նախքան զննանել թանին առ ի քէն անթերի լրականութեամբ, հրեշտակական թեոցն սքոդմամբ՝ ցանդ արկեալ պահէիր անաղարտ անքութեամբ»:

Տաճարի շրջափակում, հոգեոր խոկմունքների և սրբազն ներշնչումների մթնոլորտում, աճում էր իմացապես և մարմնապես Մարիամը, «որպէս ծիթենի պտղալից», «որպէս ծառ, որ տնկեալ է ի գնացս ջուրց, որ պտուի իւր ի ժամու տացէ» (Սաղմ. Ա 3):

Տաճարում Մարիամը պատրաստվում էր, երկնքի քաղցր նայվածքի տակ, մայրության իր վեհ և նվիրական կոշմանը:

Ընծայման տոնը շունի առանձին շարական: Այդ օրվա կանոնն է նույնպես «Երգեցէք որդիք Սիոնի երգ նորօ-ը»:

Ընծայման տոնով վերջանում է զուտ Մարիամի կանքի՝ այն է զղության, ծննդյան և Տաճար ընծայման տոների շարքը:

Աստվածածնի հաջորդ տոները, հիմնված նույնպես ավետարանական պատմությունների և ավանդությունների վրա, «Հավասարապես և նույնիսկ առավելապես կպատկանին Հիսուսի կենաց, իրոն մասն փրկագործական տնօրինությանց: Ասոնք են.

Ավետումը, որ մեկ կողմէ Քրիստոսի տնօրինությունն է և մյուս կողմէ Մարիամի կանքին ողիսավոր պարագաներեն: Եղիսաբերի այցելության երթալ... Աստվածանայտնությունը, որ Մարիամի մայրության տոնն է, Քրիստոսի 40-օրյա ի Տանարե ընծայումը, որ ուրիշների կկոչվի նաև «Սրբութիւն Մարիամու» և այլն և այլն (տե՛ս Թորգոմ պատրիարք, «Սուրբք և տօնք», Երուաղեմ, 1939 թ., էջ 307): Մարացից և ոչ մեկը «առանձին տոնական հիշատակություն ունի, ամենքն ալ խառնված են Քրիստոսի տնօրինական հիշատակներուն» (նույն տեղում, էջ 308):

4. «Աւետումն Ա. Աստուածածնի».— Ապրիլի 7-ին հաստատում կերպով մեր եկեղեցին կատարում է Աստվածածնի Ավետման տոնը:

Ավետման պատմությունը հանգամանուրեն և գեղեցիկ կերպով նկարագրել է Պուկաս ավետարանիշը իր Ավետարանի Ա. գլխի 26—38 համարներում. «...առաքեցա Գաբրիէլ հրեշտակ լԱստուծոյ... և անոն Կուսին Մարիամ... և եկեալ առ նա ասէ. Ուրախ լեր, բերկեալդ, Տէր ընդ քեզ... զի գտեր շնորհաւ Աստուծոյ...»:

Մարիամը համակերպվեց աստվածային կամքին և խոնարհամտությամբ ընդունեց Աստուծու Մայր լինելու բացառիկ պատիվը. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցին ինձ ըստ բանի քում»:

Ավետման տոնն ոմի իր հատուկ շարականը՝ «Կանոն աւետեաց Ս. Աստուածածնին», «Խորհուրդն անձառ ծածկեալն յազգաց և յափտեանց, յայտնեցա իշմամբ հրեշտակապետին այսօր առ Կոյսն Մարիամ»: Այս շարականը ոմանց կողմից ընծայվում է Գրիգոր Վկայասերին, իսկ ուրիշների կողմէ՝ Գրիգոր Գ Պահապուն, ներսես Շնորհաւու եղրորը (տե՛ս «Զայնքադ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 3): Ավետման կանոնի միտքն այն է, որ Աստուծու հավիտենական խորհուրդը մեղավոր մարդկության դարձի և փրկության վերաբերյալ, հայտնվում է Մարիամին, հրեշտակային պատգամավորությամբ: «Հայեաց քաղցր ի

բնութիւնս, յորմէ ընտրեցար միայն լինել գերագոյն քան զրովանդակ զարմաւ և զշառակիշեալս անդրաւատ, ոչ ումեք զուգադասական ունելով պատիւ և փառս մծութեան», — գրում է Հովհաննես Սարկավագ վարդապետը Աստվածածնին նվիրված իր ներբողի մեջ:

Ս. Կույսը ավետման օրն արտասանում է երկրորդ մեծ «Եղիշի»-ն, կնքում է զաշինք Աստուծու և մարդկության միջև, Աստված հաշովում է անառակ որդու հետ: «Հաշտարար Հօր ընդ արարածս», — գրում է Հովհաննես վարդապետ Գառնեցին: «Կուսին մեծն իմն աւետարանեցաւ, — ասում է Հովհանն Ոսկերեանը Ավետման մասին խորհըրդածելով: Աֆրիկյան Եկեղեցու մեծ վարդապետ Օգոստինոսը գրում է, որ Աստվածածնի Ավետման օրը «սքանչելի հավանությամբ աշխարհը փրկվեց և նրա միջնորդությամբ գտնվեց փրկության ճանապարհի մուտքը»:

Ավետման տոնը մայրության ավետման երջանիկ օրն է. Մարիամը զգաց մայրության կողման սրբությոմը և քաղցրությոմը, «աւանյոյսն յուսով հաւտաց..., յաւետեացն Աստուծոյ ոչ երկմտեաց անհաւտութեամբ..., հաստատեցաւ ի միտս իւր եթի որ խոստացաւ՝ կարող է առնել» (Հոռվմ. Դ 18—21):

Նարեկացին, խորհրդածելով Ավետման տոնի փրկարար նշանակության և Ս. Կուսին վիճակված մայրական փառավոր դերի մասին, գրում է. «Ուրախացիր ձայնի ողջունի Գարբիէլեան աւետեացն, բերկրեալդ ի կանայս... թէ չէր յղացեալ յանփորձականդ քում արգանդի՞ ոչ էր մարմնացեալ: Ի քէն հիմնարեաց զսկիզբն մարդեղութեան անեղն իսկութիւն»:

Եկեղեցին շեշտել է միշտ, փրկագործության խորհրդի մեջ, Աստվածածնի դերը, որպիս մարդեղության «գործիական պատճառ»-ի: Մեր շարականագիրը այս մտքով Ս. Կույսին համարում է «Բարձրելոյն զօրութեամբ Հովհաննաւորեալ և Ս. Հոգոյն Եկատոռութեամբ լուսաւորեալ, զբոլորից փրկութեան Մայրը, Տաճարը և Աթոռը Աստուծոյ Բանին»: Եկեղեցու հայրերի համար Ս. Կույսը Ավետման տոնով Եկեղել է «սկիզբ և պատճառ և գլուխ մերոյ փրկութեան»:

Ավետման տոնի մասին մեր մատենագրության մեջ կա վկայություն Ը դարից: Հովհանն Օձնեցին Դվինի ն ժողովում (719թ.) իր սահմանած կանոնների 24-րդում հրահանգում է՝ «Աւետիքն և Սոնունդն և զՄկրտութիւնն Քրիստոսի ի միասին առեալ տօնախմբել» (տե՛ս Ներսես վրդ. Մելիք-Թանգարան, Հայոց Եկեղեցական իրավունքը), Ա գիրք, Շուշի, 1903, էջ

420): Սամվել Կամրչածորեցին իր «Տօնապատճառում (Փ դար) վկայում է, որ Ավետյաց տոնը կատարվում էր Քրիստոսի ծննդյան 4-րդ օրը: Իրապես, մինչև այսօր էլ Քրիստոսի ծննդյան «Կանոն Դ աւոր» շարականը՝ «Այսօր Գարբիէլ ցնծութեամբ երգեց Սրբոյ Կուսին, աւեսիս», խոսում է ավետման գեղքի մասին, եղրակացնելով, որ «Այսօր աւետիք հրեշտակապետին ցնծութեամբ լցին զկոյսն Սուրբ»: Սննդյան շորորդ օրում սուրբ պատարագին ընթերցվում է նույնապես Ավետյաց Ավետարանը (Ղուկ. Ա 26—38):

Հավանաբար Շնորհալու ժամանակ է, որ հաստատվում է վերջնականապես Ավետումը ապրիլի 6-ին կամ 7-ին տոնելու սովորությունը: Հայ Եկեղեցու պատմությունից հայտնի է, որ այս տոնի կատարման մասին Շնորհալու ժամանակ վեճ էր գնում հայերի և հովների միջև: Հովները հայերին մեղադիմում էին, որ Ավետման տոնը կատարում են հովիլի 6-ին, Քրիստոսի ծննդյան մի օր առաջ: Շնորհալին, հունաց Ալեքս իշխանին ուղղած իր թղթում վկայում է, որ հայերը Ավետման տոնը կատարում են ապրիլի 6-ին, իսկ Սննդյան Ճրագալուցից օրը լինում է միայն «յիշատակութիւն աւետման»: «Ուշին զարմանք են այսպիսի փոփոխութիւններն ինելոյ լԱզգի մերում, վասն զի այս երկրորդական տօնին տէրունականք ի մէջ Եկեղեցու հետգետէ ընկալան զկարգաւորութիւն և ի զանազան ազգս քրիստոնէից փոփոխումն կրեցին ըստ ժամանակի» («Բացատրութիւն շարականաց», էջ 27):

5. «Վերափխումն Ս. Աստուծածնի».— Ս. Կույսի հիշատակին նվիրված տոների մեջ հնագույնն է այս տոնը, միաժամանակ ամենաժողովրդականը և սիրվածը՝ նվիրված Աստվածածնի մահվան հիշատակին կամ վկարափխումն:

Դիրնիսիոս Արիսպազու Ա (դար) առ Տիրոս եպիսկոպոս ուղղած թղթում կա ակնարկություն այս մասին, բայց եղրակացնում է Հ. Ավետիքյանը, «յաղագս տոնի Վերափխումն, թէ երբ սահմանեցաւ յԵկեղեցուց, շունիմք յիշատակս հաւասարի յառաջին դարուց» («Բացատրութիւն շարականաց», էջ 485): Եկեղեցու նշանավոր հայրեր, ինչպիսիք են Հերոնիմոս, Օգոստինոս, Ուսկերերան, Աթանաս, Կյուրեղ և ուրիշներ, ունենած առերգներ և ներբողներ նվիրված այս տոնին:

429 Թվականին Կոստանդնուպոլիսի Պրոկլ պատրիարքը նեստորի գեմ գրած իր ճառում և 431 Թվականին Եփսոսի երրորդ տիեզերական ժողովում արտասանած իր ճառի մեջ Կյուրեղ Աղեքսանդրացին նույնպիս ակնարկում են այս տոնին:

Ս. Սահմակ Պարթևի կանոնների 43-րդը հիշում է Ս. Աստվածածնի տոնը. «Հետևյալ տոնները ամուսնացյալ քահանաներին թող լինեն, Զատիկի շաբաթը, Ս. Զատիկը, Երկրորդ Զատիկից հետո բոլոր կիրակինները, Պենտեկոստեն, Ս. Աստվածածնի տոնը, Վարդավառը» («Հայոց եկեղեցական իրավունքը», Ա. գիրք, էջ 528):

Խորենացին Սահմակ Արծրունուն գրած իր թղթում հիշատակում է նույնպես, որ իր ժամանակ Հայ Եկեղեցին կատարում էր «Տօն Խսկուաւոյն»: Խորենացին գրում է, որ Սահմակ իշխանը իր մոտ է կանում իրեն, իսկ Խորենացին չի կարողանում գնալ, ինչպես ինքն է գրում «մինչև կատարեսցի տօն Խսկուաւոյն»: Խորենացուն է վերագրվում նաև Սատվածածնի վերափոխման առաջին օրվա կանոնը՝ «Այսօր ժողովեալ սրբոց»:

Հայազգի Մորիկ կայսրը (588—602 թ. թ.) Զ դարի վերջերին հրամայում է այս տոնը կատարել օգոստոսի 15-ին: Արևմուտքում այս տոնը արդեն ընդունվել էր է դարում, որպես «տօն փոխման», Սարգիս Ա պապի օրով (687—701 թ. թ.): Մեծն Կարուլոսի 813 թվականի հրամանագիրն այն հիշատակում է, իսկ Լոռն Դ պապը սահմանում է 8 օր հանդիսություն (տե՛ս «Բացատրութիւն շարականաց», էջ 486):

Զաքարիա Զագեցի կաթողիկոսը իր «Ննջման» ճանի մեջ վկայում է, որ Վերափոխման տոնը սահմանել են կատարել առաքյալները ևսաղմոսիւր և օրհնութեամբք: Նարեկացին գրել է Հոյակապ ներքովյան, Շնորհալին հաստատել է իննօրյա տոնախմբություն, կամբըռնացին գովերգել է այս տոնը, իսկ Կիրակոս Երզնկացին գրել է իր գեղեցիկ «Արևելք գերարդիւ-ն կամ «Անձինք փոխման»-ը, «իբր զի յօրինեալ է ամբողջ թուով և կարգաւ այրուենից ըստ օրինակի շարականի Հոփիսիմեանց»:

Ըստ ավանդության, որը այնքան գեղեցկորեն օգտագործել է Կիրակոս Երզնկացին Աստվածածնին նվիրված իր Հոյակապ «Արևելք գերարդիւ» շարականի մեջ, Փրկչի համբարձումից 15 տարի հետո, վախճանվում է Ս. Կուլյա Երուսաղեմում: Առաքյալները ներկա լինելով, բացի Բարթողիմեոսից, մեծ հանդիսությամբ, սաղմոսներով և օրհնությամբ կատարում են թաղման արարողությունը և Աստվածածնի մարմինը ամփոփում Գեթսեմանիի ձորակում: Երեք օր հետո համում է Բարթողիմեոս առաքյալը: Առաքյալները, նրա ցանկության գոհացում տալու համար, բաց են անում Ս. Կուլյա գերեզմանը, բայց ամստեղ չեն գտնում Աստվածածնի մարմինը: Աստվածածնը չը մեռել, այլ ննջել էր, «ի քուն էր լոկ», և թե

Հիսուս, ըստ իր կանխագույն խոստմանը, երկինք էր փոխադրել նրան:

Ս. Կուլյա ննջման կամ մահվան ներկա է լինում նաև Փրկիլը: «Յերկնից իշեր Հօր Թան, ի յօր Կուաի Մօր քո ննջման», ինչպես երգվում է շարականում, «Տէրն տէրանց խոնարհեալ յաւանդումն ամենասուրը հոգու Մօր և Կուաի»:

Նարեկացին այս առթիվ խորհրդածում է, խոսքը դիմառնաբար ուղղելով Ս. Կուլյան: «Որ ալացար հասեր ի բարձուն երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուժման մարմին, յորմէ պակասեաց ամօթիվ պարտիքն մահու և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկին, Տեառնդ կենակից Սուրբ Տիրամայր»:

Ներսես Շնորհալին նույնպես գրում է Ս. Կուլյա վերափոխման դեպքի մասին: «Անձահդ մահուամբ զմահ մեռուցեր և զմեկ կեցուցեր, երեքօրեայ յարուցեալ, համբարձար առ Հայոյ ի յերկինս, խոստացար Կուտին Տիրումոյ ի տիպ համայնիցն զալ վերստին՝ առնուլ առ քեզ յանձնառ բնակութիւնսն»:

Ս. Կուլյա յերկինս հոգեւվ և մարմնով զվերափոխում՝ յոյնք կոչեն մեղաքասիս, այսինքն փոխումն, անցումն, կամ բիմսիս, այսինքն նեղումն, հանգիստ: Լատինք կոչեն ասոս մեցի, այսինքն վերառումն կամ վերացումն» («Բացատրութիւն շարականաց», էջ 484):

Մեր հին ձեռագրերի մեջ հանդիպում ենք փոխումն, նեղումն ձեռին, իսկ ընդհանրապես գործածվում է վերափոխումն ձեզ, խոտանելով և հունական և լատինական ձեռիր մեկ բառի մեջ:

Հույներն ու լատինները այս տոնը կատարում են օգոստոսի 15-ին, «յո՞ր օր և բերէ ամիսն», «իսկ մենք հավանաբար Շնորհալիի ժամանակեն է, որ եթե ոչ գեռ ավելի ետքը, 15-ի մերձափորագույն կիրակին սովորություն ըրած ենք կատարել զայն, ոչ միայն երեք՝ ինչպես եղած է առաջ, այլ ինն օրեր երկարածելով տոնին շարունակությունը» (Թորդոմ պատրիարք, «Սուրբք և տօնք», էջ 309):

Վերափոխման առաջին օրվա կանոնի շարականն է «Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին», ընծարաված Մ. Խորենացուն, որտեղ սրտառուց կերպով պատմվում է այն մասին, որ «առաքեալք և սուրբ կուսանքն... «համբարձար» լուսապայծառ լապտերով» Ս. Կուլյան դնում են «առ դրանն զերեզմանին, սպասէին և ակն ունէին Տեառն», իսկ Տերը, «Եկեղեցալ բազում գրեշտակօք և ամպեղէն կառօք», տանում, փոխադրում է Ս. Կուլյան «յերկինս», «յեօթնաստեղեան խորանս», «ի լոյն անստուեր», «ի լառագաստ անապական յանմտանելին»:

Աստվածածնի «Կանոն երկրորդ աւուրն» և «Կանոն երրորդ աւուրն շարականները՝ «Այսօր զանձառելի ծննդեան քո, Տէր»-ը և «Այսօր հրաշափառ կողմանքը»-ը՝ գրել է Ն. Շնորհալին, որը միաժամանակ «արդեն գոյություն ունեցող եռօրյա տոնախմբությունը վերածեց իննօրյալի, կարգադրելով, որ երեք օրերու շարականներու և ընթեցումներու կարգը երից կրկնվի մնացյալ վեց օրերուն մեջ»:

Աստվածածնի Վերափոխման տոնի հետ առնվում է նաև Ս. Կույսի պատկերի նիշատակը: Հստ ավանդության, առաքյալները, միիթարելու համար Բարթողիմեոս առաքյալին, որ Ս. Կույսի թաղման ներկա չէր կարողացել լինել, նրան նվիրում են այն կենդանագիր պատկերը, որը Ս. Կույսը օրհնելուց հետ հանձնել էր Հովհաննես ավետարանին: Բարթողիմեոս առաքյալը, ըստ հայկական զրոյցների, այլ նկարը բերում է Հայաստան իր քարոզության և առաքելության ժամանակ և պահում Անձնացյաց գավառի Դաշրենց հար կոշված վայրում, որտեղ հիմնում է նաև առաջին հայ կոսանաց վանքը՝ Հոգվոց կամ Հոգյաց կոշված, պահպանելու համար Աստվածածնի պատկերը:

Թորգոմ պատրիարք Գուշակյան, իր «Սուլքը և տօնք» աշխատության մեջ (էջ 311), վկայում է, որ «մինչև վերջը կշարունակեր պատկերին ուխտավորությունը, հակառակ որ չկար ան ի միջի, զի կավանդեին, թե հալածողաց երեսեն պահելու համար զայն՝ հյուսած էին պատի մեջ»:

Մեր եկեղեցական օրացուցում Աստվածածինն ունի նաև «Գիտ գոտոյ» և «Գիտ

տփոյ» առները: «Տիրամոր մարմնական մասունքներու շգոյությունը հավատացյալ-ներու երկյուղածությունը ուղղեց դեպի անոր սնիփական իրեղենները, որոնք հալածանքի դարերուն թաքուցված լինելով, հետո երկան եկան» («Սուրբ և տօնք», էջ 311): Դրանցից են Աստվածածնի գոտին կամ կամարը և փոքրիկ տփիկը կամ արկղիկը, ո՞րի մեջ պահպան էր Ս. Կույսի գիւանոցը:

Այս երկու տոները կամավոր էին: Դրանք Հայ եկեղեցու մեջ Աստվածածնի տոների շարքում տեղ են գրավել ծմբ դարում միայն, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հրատարակած Տոնացուցում:

Աստվածածնի նկատմամբ եկեղեցու տածած հարգանքն ու սերը նախապես արտայիշայտվում էր Փրկչի տերունի կամ տերունական տոների հետ խանն հիշատակությամբ: Ե դարից հետ է միայն, որ եկեղեցական Տոնացուցներում սահմանվում են ուրույն հանդիսություններ. և ուխտագնացություններ Ս. Կույսի կյանքի զանազան դրվագների և հիշատակների համար:

Եկեղեցին դաստիարակչական նպատակներով մեծարում է Ս. Կույսի հիշատակը որպես առաքինի, հավատարիմ կնոջ, աղնիվ, անձնազոհ մոր, մարդեղության խորհրդի մեջ դիմելով միշտ նրա միջնորդությանը և բարեխոսությանը. «Մայր Սուրբ սքանչելի լուսոյն..., աղաշեա..., զի լուսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի»:

Ա. 2.





ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 17-ին, ԿիրԱկի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը:

Սուրբ պատարագին ներկա էին ԱՄՆ-ից, ՄԱՌ-ից և Լիբանանից Հայրենիք ժամանած ուխտավորներ, որոնք սուրբ պատարագի վերջավորության հաղորդվեցին:

ՀՈՒԼԻՍԻ 31-ին, ԿիրԱկի, 15 օր ծովափում Հանգատանալուց հետո, Մայր Աթոռ վերադան Հոգևոր Ճեմարանի Գ լսարանի շըրշանավարտ սարկավագները, որոնք հաջորդ օրն իսկ սկսեցին իրենց դիպլոմային աշխատանքներին:

ՕԳՈՍՏՈՍԻ 7-ին, ԿիրԱկի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուբյանը:

Սուրբ պատարագին ներկա էին Հայրենիք ժամանած ուխտավորներ, որոնք նաև հաղորդվեցին:

ՀՈՒԼԻՍԻ 24-ին, ԿիրԱկի, «Վարդավառ, պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»:

Մայր Տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց լուսարարապետ գերազնորհ Տ. Սահակ արքապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց օրվա տոնի մեծ նշանակության մասին»:

Սուրբ պատարագին ներկա էին ԱՄՆ-ից և Միջին Արևելքի երկրներից Հայրենիք ժամանած հայ ուխտավորներ:

ՀՈՒԼԻՍԻ 30-ին, ՇԱԲԱԹ, «տօն սրբոցն Թադէոսի առաքելոյն և Սանդիտոյ կուսին»:

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

ՀՈՒԼԻՍԻ 31-ին, ԿիրԱկի, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը:

ՕԳՈՍՏՈՍԻ 13-ին, ՇԱԲԱԹ, «տօն Շողակաթի Սրբոյ Էջմիածնի ըստ տեսլեան Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»:

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուբյանը:

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ին, ԿիրԱկի, «Վերափխումն Ս. Աստուածածնի»:

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեզնորհ Տ. Հովհաննիսյանը կատարեց «օրհնութիւն խաղաղոյ», ըստ Ճաշոց գրքի ցուցմունքների:

Օրվա տոնի առթիվ Մայր Տաճար ուխտի էին եկել բազմաթիվ ուխտավորներ:

ՕԳՈՍՏՈՍԻ 15-ին, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոց»:

Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչանը:


Հավարտ սուրբ պատարագի, լուսարարապետ սրբազն հոր նախագահությամբ, կատարվեց «Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

ՕԳՈՍՏՈՍԻ 17-ին, ՀինգշԱթի, մի ամիս Սույնում հանգստանալուց հետո, կազ-

գուրված Մայր Աթոռ վերադարձավ Գերագույն Հոգեկոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Եղնիկ Եպիսկոպոս Աղնավուրյանը:

ՀՈՒԼԻՍ ԵՎ ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ Մայր Աթոռ Ա. Էջմիածին այցելեցին բազմաթիվ հայ և օտար ուխտավորներ, տուրիստներ և հյուրեր, որոնք եղան Մայր տաճարում, և կեղծական արվեստի թանգարանում և մեկնեցին լավագույն տպավորություններով:





ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փախանորդ
Արտասյան քննիչ)

ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա.Ի.Ա.ԶԻՆ ՆԱԽԱՓՈՐՁԵՐԻ

Տասնհինգերորդ դարի հիսունական թվականներին տպագրության Գուտենբերգյան գյուտը, խոշոր հեղաշրջում առաջացնելով Եվրոպայում, լայն հնարավորություն բացեց միաժամանակ ժողովորդների իմացական զարգացման, առաջադիմության և մշակության մեջ:

Տպագրության գյուտը տեղի է ունեցել 1455 թվականին Գուտենբերգի միջոցով Գերմանիայում: Նրա նշանակությունը շատ շուած է գնաճատվում և տպագրությունն սկսում է արագ տարածվել Եվրոպայի զանազան մասերում: Գյուտից ընդամենը 9 տարի անց, տպագրությունը մտնում է իտալիա, 15 տարուց հետո՝ Ֆրանսիա, 18 տարուց հետո՝ Հոլանդիա և Հայորդարար Եվրոպական այլ երկներ: Եվրոպական պետությունները, գիտական, հասարակական հաստատությունները հովանավորում էին իրենց երկրներում բացված տպարանները: Այսպիսի պետական հաստատությունները շկային Հայաստանում ժամանակի քաղաքական, տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով:

Սակայն «հայ մարդու որոնող միտքը ձըգտում է դեպի Գուտենբերգի հրաշագործ գյուտը, տիրանում է նրան այնպիսի մի եղանակով, որ հրաշքի նման մի բան է թվում և հիացնում է դիտողին, դնելով նրա առջև

հայ ժողովրդի ճակատագրի ամենառուղիշ և ամենահուսահատ երևոյթներից մեկը: Տպագրության գյուտից հազիվ մի 57 տարի անցած հայերն ունեին իրենց տպարանը, իրենց տպագրած գրքերը, Այդպիսով նրանք առաջավոր էին հանդիսանում ոչ միայն իրենց շրջապատող բոլոր ազգերից, այլև մի քանի քաղաքակիրթ երկրների վերաբերմամբ» (Լեռ, «Հայոց Պատմություն», Երևան, 1946թ., էջ 224—225):

Հայկական առաջին տպագրությունները, ինչպես հայտնի է, տեղի են ունեցել Վենետիկում, ուր այդ օրերին գործում էին մոտ 200 տպարաններին, Այսպես, 1512—1513 թվականներին, «վասն հայկական 961 թուականին», Հակոբ Մեղապարտի ձեռքով, Վենետիկում լույս են ընծայվում գրքեր, որոնց մասին գժրախտարար չունենք սպառիշ տիղեկություններ:

Հայկական առաջին տպագրությունները կատարվել են D.I.Z.Ա. սկզբնատառերը կրող իտալական տպարանում, բայց հայ աշխատակիցների օգնությամբ, «որոնց գուցից պատկանում էր և ամբողջ նախաձեռնությունը» ըստ Լեոյի, որովհետև Վենետիկում կար հոծ հայկական գաղութ: 1512—1513 թվականներին Վենետիկում տպագրվում են հինգ գրքեր՝ «Պարզատումար», «Պատարագատետը», «Ուրբաթագիրք», «Աղթարք» և «Տաղարան»: Գարեգին Լևոնյանը, իր «Հայ գիրը և տպագրության արվեստը» արժեքավոր աշ-

խատության մեջ (Երևան, 1958 թ., էջ 40—46) հանգամանորեն խոսում է հայերեն անդրանիկ տպագրված հիշյալ հինգ գրքերից յուրաքանչյուրի մասին:

Մինչև 1565 թվականը, մոտավորապես կես դար, Վենետիկում այլևս չեն հիշվում հայերեն տպագրություններ,

Երկրորդ հայը, որը Վենետիկում զբաղվել է հայերեն տպագրությամբ, Միքայել Սեբաստացի կաթողիկոսի (1567—1576 թ. թ.) կողմից 1563 թվականին, քաղաքական առաքելությամբ Հոռոմ ուղարկված Արքադադիր Թոխատեցին է: Նա Հոռոմում Պիոս Դ պապին է հանձնում Միքայել Սեբաստացու գրություններն ու ընծաները: Պապը լսելով Արքարի «իմաստուն խոսքերը», առաջարկում է նրան նախ «ի գիր մատուցանել Հայոց դավանանքը»: Արքար Թոխատեցին, սակայն, ինչպես հայտնի է, հաջողություն չունեցավ Պիոս Դ պապի մոտ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի գեսպան, ապա անցավ Վենետիկ և 1564 թվականին նոր տառեր ծովել տալուց հետո, 1565 թվականին հրատարակել առկեց, Միքայել կաթողիկոսի հանձնարարակամբ, հայերեն պատկերագրությամբ, մի ռազմուսարանք և «հոտանափնթուր», ընտիր և վստահելի տեքստից: Ինչպես Հակոբ Մեղապարտի, նույնպես և Արքար Թոխատեցու հրատարակությունները առաջին հայ տպագրության հաջողացուած օրինակներից են:

Կաթողիկական խիստ գրաքննությունը այնուհետև Վենետիկում կապում է Արքար Թոխատեցու ձեռքերը: Նա ցանկանում էր նաև տպագրել եկեղեցական այլ գրքեր, բայց անհաջողական էր դժվարությունների հանդիպելով, թողնում է Վենետիկը և 1567 թվականին, իր տպարանական պարագաները հետն առած, զնում է Կոստանդնուպոլիս, որտեղ սկսում է իր տպագրական գործունեության երկրորդ շրջանը: Կոստանդնուպոլիսում նա տպագրում է յոթը անոն գիրք՝ «Փօքր քերականութիւն կամ այրենարան» (1567 թ.), «Ճամագիրք կամ աղօթամատուց» (1568 թ.), «Տօնապոյց» (1568 թ.), «Պարզատումար» (1568 թ.), «Տաղարան» (1568 թ.) և «Մաշտոց» (1569 թ.): Այսպիսով, Կոստանդնուպոլիսը հանդիսանում է հայկական տպագրության երկրորդ օջախը:

1570—1580-ական թվականներին հայկական տպագրությունը մուտք է գործում Հոռոմ, պապի հովանավորության տակ, «Ճամայելու համար բացառապես կրոնական պետքերին և քարոզական նպատակներին» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 227): Ապա հայկական տպագրությունը մուտք է գործում Մարտի, Փարիզ, Լիլովոնո, Ամստերդամ:

1512—1580-ական թվականներին հայտպարանների գործունեությունները «երերուն, անհաստատ, տատամսական և շատ աղքատ էին, որպես սկզբնական գործեր: «Հայկական տպագրության սկզբնավորությունից, — ինչպես ճիշտ կերպով նշել է լեռն, — անցել էր հարյուր տարի և ավելի, բայց այդ հիմնարկությունը դեռ գտնվում էր սաղմնային դրության մեջ» («Հայոց պատմություն», Գ, էջ 438):

Ժէ դարի առաջին քառորդը նոր հնարավորություններ է ստեղծում հայկական տպագրության զարգացման համար: Տվյալ ժամանակաշրջանին հայկական տպագրությունը նորից զարգանում է Մայր Հայուննիթից հեռու, արևմտյան մի շարք երկրներում, մեր երկրի տնտեսական, քաղաքական ողբալի վիճակի հետևանքով: Որով, առաջվանման, հայ տպագրությունը Ժէ դարում նույնպես զարգանում է Եվրոպայի մի շարք հնարավորություններում:

Մեր եկեղեցական մատենագրության մեջ այդ շրջանին հիշվում է Սրապիոն կաթողիկոսը (1603—1606 թ.թ.), լուսամիտ, ուսումնասեր և անձնազո՞ն մի եկեղեցական, որը մտածում էր զբաղվել հայկական տպագրությամբ և Հայաստանում հիմնել առաջին հայկական տպարանը: Բայց լուսամիտ կաթողիկոսը աշքերը փակում էր և իր սրտի շերմ փափակի իրավործումը կտակում իր աշակերտ Գրիգոր Կեսարացուն, որը ժամանակի զարգացած հայ եկեղեցականներից էր, հմուտ գրաբարագետ և բանաստեղծ: «Էկր վկայեալ յամենեցունց և յոյժ հմուտ աստուածայնոց Հին և նոր Կտակարանաց, նաև տեղեակ արտաքնոցն հանձնարաց» (Ա. Ալպոյան, «Գրիգոր Կեսարացի պատրիարք և իր ժամանակը», «Սիոն», 1937 թ. օգոստոս, էջ 253):

Դժբախտաբար Գրիգոր Կեսարացին ևս չկարողացավ իրագործել իր ուսուցչի՝ Սրապիոն կաթողիկոսի ցանկությունը: Այս բախտը վիճակից Սրապիոնի աշակերտ, Գրիգոր Կեսարացու աշակերտակից Հովհաննես Անկյուրացի վարդապետին, որը հայ տպագրությամբ գրավվող երրորդ անձնավորությունն է: Անկյուրացին, ինչպես ինքն է վկայում, ծանոթ էր, «եթէ կարդալով և եթէ յեղուաւ» («Պատմութիւն հայ տպագրութեան», Վենետիկ, 1895 թ., էջ 89), լատին լեզվին և զպրության: Հոռոմի Պրոպագանդայի արխիվներում Հովհաննես Անկյուրացին կոշվում է «Զովանանո Սոլինոյ», Անկյուրացին մեկնում է Հոռոմ, ձեռնարկում տպարանական նախապատրաստական աշխատանքների, չորս տարի տառապանքներ է կրում, «զոր չէ հնար ի գիր արկանել»: Այնուամե-

նայնիվ նա առանձնապես պատրաստել է տալիս նոր հայկական տառեր և ծաղկագրեր, հատկապես Աստվածաշնչի տպագրության համար, Սրապիոն կաթողիկոսի ցանկությունը իրագործելու ազնիվ մտադրությամբ: «Տեսանէի, — գրում է նա, — զպակասութիւն գրեանց Ազգի Հայոց, և վարանէի ի մտի, եթէ զինչ հնար լինի բազմանալոյ Հին և նոր Կտակարանաց» («Պատմութիւն հայկական տպագրութեան», էջ 80—81):

Ուրեմն, Հովհաննես Անկյուրացին առաջին եկեղեցականն էր, Ս. էջմիածնից ուղարկված ելքովան՝ Աստվածաշնչի հայերեն տպագրության համար. նա ելքովայում տեսել էր այդ հույժ կարեոր և զգվար ձեռնարկի տպագրական բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները, բայց կաթոլիկ խիստ գրաբննության և մանավանդ Հոռմի Պրոպագանդայի դպրոցի մեքենայությունների հետանքով չեր կարողանում իրագործել իր աղնիվ մտադրությունը:

Հովհաննես Անկյուրացին Վենետիկում, 1642—1643 թվականներին տպում է մի «Սաղմոս» և ներսես Ծորհալու «Ճիսուս Որդի»-ն. Եվ «Այսբանով էլ սահմանափակվում է Հովհաննես Անկյուրացու տպագրական գործունեությունը» (Ի. Ի. «Հայոց պատմություն», Գ, էջ 440):

Այստեղ պետք է խոսել նաև Ազգարիա Զուղացի կաթողիկոսի (1584—1601 թ. թ.) հայերեն Աստվածաշունչ տպագրել տալու ցանկության մասին:

Բարգեն կաթողիկոս Կյուլեսերյանը իր «Պատմություն կաթողիկոսության Կիլիկիո» (Անթիւս, 1939 թ., էջ 150—151) աշխատության մեջ Ազգարիա Զուղացիցու մասին գրում է, որ նրա «կյանքը անդադրում գործունեություն մը եղած է իրեւ ուսուցիչ և կաթողիկոս և որպես պայծառ դեմք՝ Հայ Եկեղեցի իրեն ժամանակակից նշանավոր վարդապետներու շարքին մեջ, թե՛ իր գիտությամբ և թե՛ իր կաթողիկոսական բազմերանգ գործունեությամբ»:

Զուղացիցու վերակում է եկեղեցական հարաբերությունները Վատիկանի հետո 1565 թվականի ապրիլին նա նամակ է գրում Գրիգոր ԺԴ պապին և պատգամավորություն է ուղարկում Հոռմություն նամակում Զուղացին և այդ գնում է նաև հայերեն Աստվածաշնչի տպագրության վրա. «...Եւս սուսել կ'ուղարկեմք ի հետն զասացեալ Գրիգոր սարկաւոն քանի մը տղայով վասն ուսման ի զասատունն և Աստուծաշունչ գրքով մը Հայոց, վասն զի քո Սրբութիւնդ հրամայեսցէ որ պասմուի ի պէտս ամենայն Ազգի Հայոց: Բայց զԳրիգորն առաւել պասմային համար կու զրկեմք»:

Օրմանյան սրբազանը նույնպես հաստատում է, որ Ազգարիա Զուղացիցու Հոռմի հետ վերական եկեղեցական հարաբերությունների հիմնական նպատակներից մեկն է եղել մանավանդ Աստվածաշնչի տպագրությունը. «Առավել պասմայի համար և Աստվածաշունչը մըն ալ կղրկե ըստ այնմ տպագրելու համար» («Ազգապատում», թ. Կոստանդնուպոլիս, 1914 թ., էջ 228):

Վիեննայի Միհիթարյան միաբանության անդամ Հ. Գրիգոր Գալեմբրյանը «Հանդիս ամսօրյա»-ի 1914 թվականի հունվարի համարում տպագրել է մի հոգված «Հայ Աստվածաշնչի տպագրության շանքերը Ուկաննեն հառաջ» վերնագրով, որտեղ Հոռմի Պրոպագանդայի արխիվից վերցնելով, ամբողջությամբ տպել է Ազգարիա Զուղացիցու նամակը ուղղված Գրիգոր ԺԴ պապին: Հոդվածում Հ. Գ. Գալեմբրյանը իդուր գործում է ապացուցել այդ նամակով Ազգարիայի հպատակությունը Հոռմի պապին:

Բարգեն կաթողիկոսը ճիշտ հակառակ տեսակետն է ապացուցում: Նա գրում է. «Ազգարիա Զուղացիցին իրեւ ուղղափառ և հավատարիմ վարդապետ Հայաստանյաց Եկեղեցվո, իրեն արժանի տեղը տալու համար Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռին վրա Հոռմի հետ իր մշակած հարաբերություններուն մեջ, շատ զգուշավոր եղած է և միայն աշխատած է օգտվիլ որևէ կերպ պապական իշխանության ճոխութեննեն և դյուրություններեն, ինչպես որ կտեսնվի իր վավերական մեկ գրութեննեն, զոր ուղղած է Գրիգոր ԺԴ պապին:

Ինչպես կտեսնվի առ Գրիգոր ԺԴ պապ ուղղված նամակին ամփոփումնեն, Ազգարիա Հնարավոր զիշումներ ըրած է Վատիկանին՝ անկեց քաղաքականապես և նյութապես օգտվելու հուսերով, և փորձի համար ալ միայն հայերեն Աստվածաշունչ մը տպագրելու առաջարկն ըրած է պապին, այլ նաև քանի մը տղա զրկած է որ կրթվին, իհարկե այն նախատեսությամբ, որ անոնք սորվելով տիրող լեզուն և ուսումնասիրելով Հոռմի Եկեղեցին և պապությունը, օգտակար ծառայություններ պիտի ընեին Կիլիկիո Կաթողիկոսարանին մեջ:

Թե ի՞նչ եղավ այս խնդրանքներուն արդյունքը, այդ մասին լուր է պատմությունը և այդ լուրությունը նշանակալից է ինքնին, այսինքն՝ կեռնարդոյի պատմությունները Վատիկանի ուժին և Հնարավորության մասին իր ըրած խոստումներն հարստահարյալ Հայության վիճակը բարդություն կողմեն, հարկավ Ազգարիական իր եպիսկոպոսներուն բերնին չուրեր վազել տվին, բայց իրահանության մեջ առաջան հայերեն Ամասածա-

շունչ միսկ շկրցավ տպագրել, և Անթեպցի Հովհաննես եպիսկոպոս և Գրիգոր սարկա- վագ թերեւ նոր խոստումներով և եկեղեցա- կան նվիրներով վերադարձան Կիլիկիա, ուսերլու համար բոլորովին ձեռնունայն և հու- սախար:

Ահավասիկ բոլոր արժեքը և արդյունքը Ազարիա Զուլայեցիի Վատիկանի հետ մշա- կած հարաբերություններուն (ԲԱԿ, «Պատ- մություն Կիլիկիո Կաթողիկոսության», էջ 168—187):

Վատիկանը, որի հակողության և խիստ գրաքննության տակ էին գործում տպարան- ները Խտալիայում և Հրատարակչություննե- րը, ստիպում էր հայերին թարգմանել և տպել Աստվածաշնչի լատիներենից կատար- ված թարգմանությունը և էջմիածնից ու- ղարկված մեր առաջին տպագրիչները մեր- ժում էին և միաժամանակ մտածում հայերեն Աստվածաշնչը տպել տալ Հայաստանից բերված ընտիր հայերեն թարգմանության օրինակի վրայով Հոլանդիայում, որը բողո- քական ազատ հանրապետություն էր և որ- տեղ չէր կարողացել երկարել կաթոլիկական խիստ գրաքննության մոայլ թաթը: Վերջում, երբ Վատիկանը համոզվում է հայերի վճռա- կանության մասին՝ Աստվածաշնչը տպելու հայերեն թարգմանության լավագույն օրի- նակի համաձայն, նա դիմում է զիջումների:

Հստ Հ. Գ. Գալեմքյարյանի Պրոպագան- դայի ատենագրություններից քաղած տեղե- կությունների, 1632 թվականի փետրվարին «առաջարկուն կհաջորդե, թե Ջմյունիային, Վենետիկի հասարակականետության ներկայա- ցուցըն հայ թարգմանը՝ Հովհաննես Մոլի- նո, կառաջարկե Ս. Ժողովու ինչ-ինչ պայ- մաններով՝ որ Հայոց Աստվածաշնչը տպվի Հոռոմ, որպեսզի ըրլա թե հայերն, ինչպես քիչ առաջ փորձեցին, հերետիկոս հոլանդացվոց քով տպել տան: Ժողովը կորոշ սույն նյու- թին վրա ծանրությամբ խորհիլ և առ այժմ Հովհաննես Մոլինոյին գրել, որ հայերը ետ կեցնե Հոլանդա տպել տակն և կրնա հովս տալ, որ Հոռոմը նույնը պիտի տպե» («Հան- դես ամսօրյա», 1914 թ., № 1, էջ 12):

1634 թվականին, Աստվածաշնչի տպագրու- թյան համար, Հոռոմ է դիմում նաև Հովհան- նես պատրիարքը: 1637 թվականին Շնույն- պես հետամուտ եղած է հայ Աստվածաշնչի տպագրության Զաքարիա Երևանեցի պատ- րիարքը («Հանդես ամսօրյա», 1914 թ., № 1, էջ 14): 1637 թվականի սեպտեմբերին Պրո- պագանդայի դպրոցը որոշում է և պաշտոն հանձնում Ս. Էջմիածնում Փիլիպոս Կաթողի- կոսի ժամանակ որպես ուսուցիչ աշխատած Պիրումալիին՝ համեմատել հայերեն Աստ- վածաշնչը լատիներեն թարգմանության՝

Վուզգատայի հետ և նշել, թե արդյոք «սխալ կամ մոլար բան մը կա» հայերեն բնագրին մեջ» («Հանդես ամսօրյա», 1914 թ., № 1):

Օրմանյան սրբազնը Պիրումալիի կատա- րած աշխատանքի մասին գրում է հետևյալը: «Պիրումալիին 1639-ին Հոռոմ դարձած ատեն, հայոց կաթողիկոսի փափազը լրացնելու դիտմամբ, հայերեն Աստվածաշնչի տպա- գրության հետամուտ եղավ, բայց նախնյաց Յոթանասնից թարգմանությունը լատինա- կան Վուզգատային համաձայնեցնելու հա- մար շատ կտրոներ եղեց, այնպես որ պա- պական գրաքննությունն իսկ իրեն չներեց գայն հրատարակել» («Ազգապատում», թ., էջ 2539):

Կաթոլիկ տպարաններում հայերեն Աստ- վածաշնչը տպագրելու փորձերը չհաջողվե- ցին, և դա հասկանալի է, որովհետև Վատի- կանը բոլոր հարցերում ուզում էր թելադրել իր դավանանքը և կամքը, իսկ Հայ Եկեղեցին երբեք չէր կարող զիջել իր դավանական դիր- քերը:

Աստվածաշնչի տպագրության շատ սըր- տառուշ փորձեր կատարվեցին նաև բուն Հայաստանում և հայկական այնպիսի մեծ կենտրոնում, ինչպիսին Նոր-Զուղան էր:

1604—1605 թվականներին Հայաստանից և հատկապես Հին-Զուղայից Շահ-Արքաս Ա-ը հայ ժողովրդին բռնի գաղթեցնում է դեպի Պարսկաստանի խորքերը: Զուղայեցի գաղթականներն իրանի մայրաքաղաք Սպա- հանին կից հիմնում են մի գյուղաքաղաք, վերակռչելով այն ի հիշատակ իրենց հայրե- նի Զուղային՝ նոր-Զուղա:

Նոր-Զուղան ժիշտ դարի 30-ական թվականներին դառնում է տնտեսական և մշակութա- յին կարևոր հայ օշախներից մեկը: Նոր- Զուղայի առաջնորդ է ընտրվում Մեսրոպ արքեպիկոպոսը 1613 թվականին, որին հա- ջորդում է Խաչատուր Կեսարացին 1620 թվա- կանին (տե՛ս «Պատմութիւն Նոր-Զուղայի», թ., նոր-Զուղա, 1880 թ., էջ 21—22):

Խաչատուր վարդապետ Կեսարացին եղել է Գրիգոր Կեսարացու, ինչպես նաև ժիշտ դարի Հայ Եկեղեցու լուսավոր աստղ Մովսես Տա- թևացի կաթողիկոսի աշակերտը: Նա շրջա- գայել է Եվրոպա, եղել է հայ ժողովրդի լու- սավորության նվիրված Ծովերական, պայ- քարել է կաթողիկոսի դեմ կեհաստանում և ապա նշանակվել Նոր-Զուղայի առաջնորդ, 1620 թվականին: Խաչատուր վարդապետ Կեսարացին Նոր-Զուղայում հիմնում է դրա- րոց, գրադարան, հավաքում է Հայաստանից և այլ տեղերից բերված ձեռագրեր, գրքերը Խաչատուր արեղա Զուղայեցին հետևյալ խոսքերով է բնորոշում նրան:

«Սա իր այր հեղահոգի, և հզօր սովեստէս աստուածաբան՝ հմուտ Հին և նոր աստուածային Կտակարանաց, զամ իրբն տեսին զուղայիշիք լցեալ և ակաղձեալ երկնածիր շնորհօթ, և յորդահոսան իմաստութեամբ, նաև քննեցին իսկ զամբիծ և զուղիդ աստուածահանց վարս նորա՝ կոչեցին զնա ի պատիւ առաջնորդութեան» (Խաչատուր արեդայի Հուղայեցոյ, «Պատմութին պարսից», աշխատությամբ Բարգեն վարդապետ Աղավելանցի, Վաղարշապատ, 1905 թ., էջ 116—117):

Եվ ահա այս լուսավոր մարդը՝ Խաչատուր Կեսարացին, տեսնելով պարսկահայերի տընտեսապես առավել բարգոր վիճակը համեմատած այդ օրերին Հայաստանում տիրող ընդհանուր տիրուր կացության հետ, ցանկանում է Ամենափրկիլ վանքը դարձնել հայ Հշակութիւն և արվեստի վառ օջախ, և մատածում է դպրոցի, գրադարանի կողքին հիմնել նաև առաջին տպարանը Պարսկաստանում։ Եվ ահա 1639 թվականին նոր-Հուղայի լույս է տեսնում «Հարանց վարք» անունով գիրքը։

«Հրաշալին այն չէ, որ Աքեմենյան և Սասանյան շահերի հայրենիքն այժմ տպագրված գրքեր էր ուղարկում աշխարհին, այլ այն, որ նոր-Հուղայի տպարանը ամբողջովին շինվել էր տեսային միջոցներով։

Խաչատուր վարդապետը ու ոքից չէր սովորել տպագրական արվեստը։ Այսպես էին և նրան շրջապատողները։ Բայց նրանք կարողացան բնատուր խեցով բըբանել, թե ինչ է պահանջում, և փորագրեցին տառեր, շինեցին մամուլ, մինչև իսկ թուղթն էլ պատրաստեցին տեղն ու տեղը, շարեցին, տպագրեցին։ Ասել հարկավոր չէ, որ այդպիսի ինքնահնար միջոցներով գլուխ բերած գործը խոշոր պակասություններ պիտի ունենար։ Եվ իրոք, նոր-Հուղայի այդ անդրանիկ տպագրությունը տգեղ էր ու անկատար, աշխատավորների ՚անմտությունն էր ցուց տալիս։

Բայց պակասությունները ոչինչ են այն փաստի առաջ, որ այդ բոլորը պատրաստված էր հայ մարդու ձեռքերով, Ասիայում, առանց մասնագետ վարպետների ցուցմունքների և աջակցության։ Միայն դեպի գործն ունեցած խանդավար սերը կարող էր գրդել Խաչատուր վարդապետին և նրա օգնականներին հանձն առնել այդքան ծանր աշխատանք, չհուսահատվել հազարավոր դժվարություններից։ Գրքի հիշատակարանը թողնում է գեղեցիկ տպագրություն։ Դուք երևակայո՞ւմ եք մահմեղական աշխարհի մի հեռավոր անկյունում շինված քրիստոնեական վանք, ուր ևուսմ է գաղափարական

գործունեությունը։ Մտածում են, ծրագրեր են կազմում, թե ինչպես անեն, որ լույս ստանա դժբախտ ժողովուրդը Հայաստանում և ինչպես ստեղծեն այն գործիքը, որ այդ լույսի տարածողն է։ Հավաքված են հոգեբարականներ և աշխարհականներ, ծեր ու երիտասարդ, քահանա ու վարդապետ, աշակերտ ու վարպետ, բաժանել են աշխատանքը և գործում են մեծ համբերությամբ։ Անտարբեր ու անմասնակից չէ նույնիսկ ծերոնի խոհարար Տեր Հուափկը, նա էլ օգնում է եղբայրներին։ Նայելով շոշապատող պարսկական իշխանության, մտաբերելով, որ այդ աշխատավորներից շատերը տարիներ առաջ առաջ բոնությամբ հեռացված էին իրենց հայրենի հողից և արտասուբներով էին թրում այն երկար ճանապարհը, որ վերը բերեց հասցրեց նրանց այստեղ. տեսնելով, թե որպիսի հույսերով և սրբազն ակնածությամբ են այդ մարդիկ պտտվում իրենց ձեռքով շինած անարվեստ, կոպիտ մամուլի շուրջը, դուք հիշում եք ֆրանսիական պատմարան Միլլինի, որը 19-րդ դարի առաջին կեսից հիմքությունով նայում էր 16-րդ դարի Վենետիկյան մեծ տպագրիների գաֆան աշխատություններին և բացականչում էր «Սուրբ գործ» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 440—441):

Խաչատուր վարդապետը միջոցներ է ձեռք առնում կատարելագործելու համար իր հիմնած տպարանը։ Այդ իսկ մտագրությամբ 1639 թվականին, երբ տպագրվում էր «Հարանց վարք»-ը, նա ծվրոպա է ուղարկում իր աշակերտ Հովհաննես վարդապետ Զուղայեցուն, տպագրական արվեստի մեջ հմտանալու և նոր տեսակի հայ տառեր պատրաստելու համար։ Կեսարացու ավագ մտահոգությունն էր Աստվածաշնչի տպագրությունը։

Ամենափրկյան տպարանը կանգ չի առնում։ «Հարանց վարք»-ից անմիջապես հետո տպագրության է հանձնվում «Աւետինի ժամագիրք»-ը, որ լույս է տեսնում ՈՂԱ (1642) թվականին։ «Այս գրքի տառերն ուրիշ են, խոշոր տեսակի, այստեղ երեսում է նաև գըլխատառերի մի նոր կոմպլեկտ և, բացի թըռչնագրերից, գիրքը զարդարված է և կիսախորաններով։ Թուղթը համեմատաբար պվելի լավ է (ունի երևանի Հանրային գրադարանը)» (Գ. Լեռնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», էջ 87 և 88):

«Հարանց վարք»-ը, — ինչպես բնորոշում է Գ. Լեռնյանն իր նույն աշխատության մեջ (էջ 87), — մի մեծադիր, երկսյուն տպագրություն է 703 էջ, անարվեստ տառերով տպագրվել է 500 օրինակ, բայց ունի գլխազարդեր, թունագրեր և երկու տեսակի գլխատա-

ոեր: Այդ հրատարակությունից մի օրինակ ունի երուսաղեմի հայոց վանքի գրադարանը և մի քանի օրինակ Երևանի Պետական Հանրային գրադարանը»:

Այս հրատարակությունից ունի նաև Մատենադարանը՝ օրինակ, Պետական գրադարանը Յ հատ և մի օրինակ էլ կար մեզ մոտ, որը ձեռք էինք բերել պարսկահայ ներգաղթողներից, մեր սեփական միջոցներով և ուրախությամբ նվիրել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գրադարանին:

Հովհաննես վարդապետ Զուղայեցու ճանապարհորդությունը, ըստ Լեոյի և Կոլոյանի, տևում է հինգ տարի: Հովհաննես վարդապետի առաջ նորից Պրոպագանդան արգելքներ էր հարուցում, նա չէր կարող թույլ տալ, որ իր «Քթի տակ մի հերձվածող եկեղեցու վարդապետ տպարան կազմի, թեև նա շպիտի մնար Խտալիայի ուղղափառ Հողի վրա, այլ պիտի գնար մի հեռավոր և խավար երկիր» (Լեո, «Հայոց պատմություն», Գ, էջ 441):

Այնուամենայնիվ Հովհաննես վարդապետը, երկու տարի մնալով Հոռոմում, ձեռք է բերում հմուտ վարպետներ, պատվեր է տալիս հայերեն նոր տառեր և տեղափոխվում Լիվոնո քաղաքը, ուր արդեն գոյություն ուներ հայ վաճառականական մի գաղթականություն: Գաղութին օգնում է վարդապետին: Հովհաննես Զուղայեցին, Յ տարի Յ ամիս շարչարկելուց հետո, պատրաստել է տալիս հայերեն նոր տառեր և 80 օրում, 1643 թվականին, տպագրում մի «Սաղմոս», որի հիշատակարանում պատմում է իր կատարած գործի և հանուն լուսավորության կաթոլիկներից կրած տառապանքների մասին: Հիշատակարանից երեսում է, որ Հովհաննես վարդապետը պատրաստել տվեց նաև զանազան մեծությամբ տառեր, տպագրական բազմաթիվ զարդեր, նույնիսկ նոտաներ՝ հայկական երգերի և շարականների տպագրության համար:

Ըստ Կալկաթայի «Աղքասեր» շարաթաթերթի վկայության (տե՛ս 1845 թ. № 2 և 4), Հովհաննես վարդապետը ձեռնամուխ է լինում իր բուն գործին՝ Աստվածաշնչի տպագրական աշխատանքին, 1650 թվականին, որ, սակայն, ըստ «Աղքասեր»-ի վկայության, կիսատ է մնում:

Ըստ Գ, Լեոնյանի վկայության և, Հովհաննես վարդապետ Զուղայեցին, այդ ժրաշան տպագրիչը, Աստվածաշնչի տպագրական գործին ձեռնամուխ է լինում: Գործն

սկսում է, բայց Տաղիվ մի քանի մասով տպագրած, ստիպված է լինում թողնել ամեն ինչ և փախչել էջմիածին (էջ 90):

Խաչատուր արեղա Զուղայեցին, իր «Պատմութիւն Պարսից» աշխատության մեջ (էջ 121), Նոր-Զուղայում Աստվածաշնչի տպագրության աշխատանքների մասին պատմում է հետևյալը:

«Իսկ ի մէջ Աղքիս Հայկազեան՝ նախ ի նոր Զուղա սահմանեցին զտպագրատուն, որպէս զտարաղ օրինակին ի վեր անդ գրեցաք. բայց գիրն, և մելանն և թուղթս սակս տհասութեանն սակաւուք իմիք ապականեալ որպէս յայտնապէս երկի արդեօք ի տպեալ գրեանցն:

Ուր և ընդ բազում գրեանց՝ որք տպեցին. սկսան ընդ որոց և տպել զԱստուածաշունչ գիրն, այլ վասն մեղաց մերոց մնաց թերակատար, որպէս կայ մինչև ցայսօր ի միջի մերում սա կարի լաւագոյն ունենալով զթուղթն, և զգիրն քան զառաշին տպեալ գրեանսն»:

Աստվածաշնչի առաջին տպագրությունը գլուխ բերվեց, այսքան տենդագին նախափորձերից հետո, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հովհաննավորությամբ, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի (1655—1680 թ. թ.) նախաձեռնությամբ, Մայր Աթոռի միաբան Ուկան վարդապետ Երևանցու ջանքերով և հակողությամբ:

Խաչատուր արեղան իր հիշյալ աշխատության մեջ (էջ 121—122) վկայում է, որ Ուկան վարդապետը «մի էր յիմաստնայեղց աշակերտաց Տեառն Խաչատրոյ մեծի վարդապետին, ի ժամանակս Յակոբու Հայրապետի՝ որոյ համանաւ գնաց ի յԱմստերդամ, այս է՝ Մսրրդամ, որ է անուանի մայրաքաղաք յԱրևմուտս՝ ի Հոլլանդիայ գաւառի... Ուր գնացեալ սա՝ Երջանկափայլ վարդապետն Ուկան՝ այնպէս զարմանալի և գեղեցկագոյն գիր յօրինեաց, ըստ որում և հաւաստեաւ յայտնի իսկ է արդեօք ի յՈւկան վարդապետի տպեալ Աստուածաշնորհն, որ գրեթէ՝ ո՛չ Վանանդեցույնն, ո՛չ Միհիթարայ Աբրային, և ո՛չ Թուրքումու, և կամ թէ ալլոց տպեալ գրեանքն կարեն լինել նմին աղախնեայք»:

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՎԱՆՑԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ
ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՌԱՋԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հակոբ Զուղայեցին մեր լուսամիտ և հայրենասեր հայրապետներից մեկն է եղել, որը գահ բարձրանալուն պես, 1655 թվականին, առանձին հոգատարություն է դարձնում հայկական տպագրությանը, ինչպես այս մա-

սին վկայում է նաև Հեռն («Հայոց պատմություն», Գ, էջ 443):

Օրմանյան սրբազնը գրում է, որ Հակոբ Զուղայեցու հիմնական ծրագիրներից մեկն է եղել տպարան հաստատել Մայր Աթոռում.

«Այդ կենսական գործը Միքայել կաթողիկոսի հովանավորությամբ և Արքար Եղիշու կիացիի ձեռքով ստացած առաջին ազգային

յին ալ ետ չէր եկած կատարելագործություն թերելու, և նույն նպատակով 1637-ին Ելրոպա անցնող Հովհաննես Անկյուրացին ալ յուր գործունեությունը Խտալիո մեջ ամփոփած էր. մինչ Հակոբ կարողիկոս հետամուս էր արենատր ազգային կեդրոնին մեջ զարգացեն: Այդ նպատակով, յուր կարողիկոսուրյան սկիզբը Եվրոպա ուղարկեց Մատքես Շարե-



ՈՍԿԱՆՑԱՆ ԱՍՏՎԱԾԱԾՆՁԻ ՏԻՏՈՍԱԹԵՐԹԸ

շարժումնեն ետքը, թեպետ ընդհատ, բայց ոչ սպառած ընթացք մը ունեցավ, բայց միշտ հտալական քաղաքներու և առավելապես Վենետիկի մեջ, Արևելքի մեջ առաջին փորձը հաշատուր Կեսարացիինը եղավ 1640 թվին: Մակայն արդյունքը գոհացուցիչ չէր արհետական տեսակետին: Հովհաննես Զուղայե-

ցի սարկավագը» («Ազգապատում», Բ, էջ 2510: Ընդգծումը մերն է—Վ. Վ. Տ.):

1656 թվականին Հակոբ Զուղայեցու հրամանով Եվրոպա է մեկնում Փիլիպոս կաթողիկոսի քարտուղար Մատքես սարկավագ Մարեցին: Մարեցին մոտ երկու տարի ժամանակ է վատնում Վենետիկում և Հռոմում,

հանդիպում է մեծ ղգվարությունների՝ Պրոպագանդայի հալածանքների պատճառով։ Սարեցու տպագրական գործունեությունը արգելակում են նաև հայ կաթոլիկ կրոնավորները։ Կաթոլիկ Պրոպագանդան պաշտոնապես արգելում է Վենետիկի և Հռոմի տպագրական գործով զբաղվող վարպետներին և արհեստավորներին՝ չօժանդակել հայոց կաթողիկոսի հավատարմատարին։ Պրոպագանդան խիստ պատիժ է սահմանում տպագրական գործում Սարեցուն օգնողներին։ «Ով իշխացի օգնել յայս գործ, ծածուկ կամ յայտնի, պատիժ սաստիկ կրեսցեն» (Դ. Լեվոնյան, էջ 98):

Լեռն շատ սրտառուշ կերպով է ընութագրել հտալիայում լուսավորության և առաջադիմության համար պայքարող և աշխատող զարարադից հայ սարկավագի տոկում ընավորությունը, արգելքներ հաղթահարելու նրա վճռականությունը, հասնելու համար իր ազնիվ նպատակին։ Ընրա դեմ որոտում էին կաթոլիկ հոգևորականության սպառնալիքները։ Բարեբախտաբար լեռնցի (զարարադիցի) դպիրը հեշտ ընկնծող ընավորություններից չէր։ Նա, ինչպես ինքն է ասում, շվախեցավ այդ որոտումներից և մի շատ խելացի գործ կատարեց, այն է, թոթափելով իր ուների փոշին, հեռացավ հտալիայից, ունենալով այն պայժառ ըմբռնումը, որ եթե Ս. Պետրոսի գաղա հայկական տպագրությունը խեղճել է ուզում իր շահերի համար (ընդգծում մերն է — Վ. Վ. Տ., պետք է ուրեմն բախտը փորձել այնպիսի տեղ, ուր պապականության արգելքը բոլորովին նշանակություն չուներ» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 443). Եվ նա գնաց Հոլանդիա, Ամստերդամ։ Այդ օրերին Հոլանդիան բարգավաճ, ազատ բողոքական հանրապետություն էր, ուր ծաղկում էր հոլանդական գրականությունն ու արքեստը։ Ահա այդ երկիրն է գնում Սարեցին, որը համեմատած հտալիային, զերծ էր հալածանքներից։ «Սարեցին հայկական մտքի համար մի նոր ու բոլորովին անծանոթ Ավետյաց երկիր էր գրտնում։ Ամստերդամը պիտի դառնար այնուհետև հայոց լուսավորության մի նոր Վենետիկ, որ մի ժամանակ նույնիսկ գերազանցեց Ադրիականի գեղեցիկ թագուհին։

Եթե Վենետիկի փառքն ու պարծանքը տպագրական արվեստի մեջ Ալգոների ընտանիքն է, Հոլանդիան էլ ունեցել է ոչ պակաս հողակավոր էլզեվիրների տոհմը, որ նույնպես անմահացել է իր տպարանական գործունեությամբ։ Մատթեոս Սարեցու ժամանակ Ամստերդամում գործում էր Լյուդվիգ և Դանիել էլզեվիրների հարուստ տպարանը, որի համար տառեր փորագրողը մեծ անուն հանած Քրիստափոր Վան-Դեյկն էր։

Ահա այս արվեստագետին դիմեց Սարեցին և 1658 թվականի նոյեմբերի 27-ին կնքված պայմանագրով Վան-Դեյկն հանձն առավատարաստել հայերեն երեք տեսակ տառեր՝ Աստվածաշունչ տպագրելու համար։ Պետք է ավելացնել, որ Աստվածաշունչի տպագրությունն առանձնապես Ամստերդամի տպարանների սրբած գործն էր։ Հենց այդ ժամանակները էլզեվիրների տպարանն էլ սկըսել էր մի մեծ Աստվածաշունչի տպագրությունը, որ պատվավոր տեղ ունի պատմության մեջ (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 444):

1660 թվականին է վերջացնում Սարեցու պատվերը փորագրի Վան-Դեյկը։ Այդ պատրաստ տառերով Սարեցին սկսում է տպագրել Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի»-ն։ Նա շի տեսնում իր գործի վերջը, այնպես որ գրի տպագրությունը չափարտած, Սարեցին հիվանդանում է։ Մահվան երկյուղը ներշընչում է նրան խելացի կանխատեսություն, և նա տպարանի վիճակը տնօրինելու համար իր մոտ է կանչում Ղլիշենց Ավետիս անունով վաճառականին, առաջարկում նրան ընկերանալ իրեն հետ, վճարել տպարանի պարտքերը և ապա տպարանից ստացած շահին հավասար շափով ընկերանալ Սարեցու մահվան պարագային տպարանը դառնում էր Ավետիսի սեփականությունը։

Ավետիսը, մերժելով շահադիտական նպատակը, առաջարկեց տպարանը նվիրել Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի վանքին, որ հեռու չէր էջմիածնից, Ուշի գյուղի մոտ։ Խսկ թե ինչո՞ւ Ս. Սարգսի վանքն էր Ավետիսը տեր զարձնում էջմիածնի հետ միասին, այդ բացարկում է նրանով, որ Ավետիսի եղբայրն էր Ռոկան վարդապետը, Երևանցի կոչված, որ այդ միջոցին Ս. Սարգսի վանքի վանահայր էր։ Իր առաջարկած պայմանով Ղլիշենցը պատրաստ էր ոչ միայն իր բաժին փողը տալ, այլև անձամբ աշխատել տպարանում։ Այդպես էլ համաձայնություն կայացավ, Սարեցին կտակ գրեց և վախճանվեց 1661 թվի սկզբին, խսկ նրա սկսած հիմնարկությունը ստացավ «Յպարան էջմիածնի և Ս. Սարգսի» անունը (Լեռ, «Հայոց պատմություն», էջ 444):

Ուկան վարդապետի վաճառական եղբայրը՝ Ավետիսը գործի է անցնում, վճարում է ձուլարանի պարտքերը, ապա շարունակում է անկատար մնացած «Յիսուս Որդի»-ի տպագրությունը, որի հիշատակարանում Ղլիշենց Ավետիսն ասում է, որ «աշխատանք ունիմ ի վերայ այս գործիս, թէ դրամով և թէ օգնությամբ և ուխտադիր եղեր եմ, որ մինչ ի մաս պիտի որ աշխատիմ վասն Ս. Էջմիածնում... Մատթէոսն որ մեռաւ, թէ որ ես չէի՝ ո՞վ պիտի տիրեր ի վերայ քերխանային»։

լեռն, նկատի ունենալով՝ Ղիշենց Ավետիս վաճառականի այս հայտարարությունը, նշում է, որ նրա անունը պետք է մտնի հայ տպագրության պատմության մեջ, որովհետև «Սարեցոց հետո նա երկրորդ դեմքն էր, որի շնորհիվ Հոլանդիան դարձավ հայ լուսավորության երկրորդ հայրենիքը» (Լեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 445):

Այդ պատիվը վիճակվեց Մայր Աթոռի միաբան Ուկան վարդապետ Երևանցուն: Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի հրամանով, և իր եղբայր Ավետիսի հրավերով, Ուկան վարդապետը մեկնում է Էջմիածնից գեպի Հոլանդիա, 1662 թվականին, գլուխ կանգնելու Հոլանդիայի էջմիածնի տպարանին:



ՈՒԿԱՆՅԱՆ ԱՍՏՎԱՇԱՇՆՁԻ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ Էջը

Հոլանդիայի հայկական տպարանը հատկապես Զուղայեցի վաճառականների օգնությամբ առաջադիմում էր: Այդ տպարանից հաջորդաբար լույս տեսան ատենի «Ժամագիրք», «Յիսուս Որդի» և «Սաղմոս»:

Բայց Հոլանդիայի հայկական տպարանի առաջ դրված էր մի շատ կարևոր հարց, որ հայերն Աստվածաշնչի առաջին տպագրությունն էր:

Աստվածաշնչի տպագրության մասին խոսելուց առաջ արժե համառոտ կերպով կանգ առնել հայ Աստվածաշնչի առաջին հրատարակողի համառոտ կենսագրության վրա:

Ուկան վարդապետն իր հրատարակած 1669 թվականի «Գիրք պատմութեան շարադրեալ Առաքել վարդապետին Դաւթիթեցոյ», Ամստերդամ, 17-րդ գլուխում ավելացրել է իր կենսագրությունը՝ «Պատմութիւն վարդապե-

ար Ոսկանայ Երևանցւոյ և կենցաղավարութիւն նորին»: Դա մի ինքնակենսագրություն է:

Ոսկան մարդապետը Երևանի Ղլիջենց վաճառական ընտանիքից էր, ծնված 1614 թվականի հունվարին, Սպահանում: Նրա ծնողները Շահ-Արքասի օրով բռնի գաղթեցվուն են նոր-Քուլա, ուր ուսումնատենչ պատասխն մի հայ քահանայի առաջ առաջին անգամ ճանալում է հայ տառերը: Ապա նա սովորում է Ամենափրկիլ վանքի դպրոցում, Խաչատուր Կեսարացու առաջնորդության օրով: Ուսումն ավարտելուց հետո ձեռնադրվում է կուսակրոն քահանա, որից հետո Մովսես Տաթևացին նրան տանում է էջմիածին, ուր աշակերտում է կիմ անապատի առաջնորդ նշանավոր Մելքիսեթ վարդապետին: Ոսկանն ապա աշակերտում է էջմիածնում կաթոլիկ միսիոներ Պողոս Պիրոմալիին, Հատկապես նրանից սովորելով լատիներեն լեզուն, փիլիսոփայություն և քերականություն, ինչպես նաև աստղաբաշխություն: «Բայց այս բոլորը, — ավելացնում է Ոսկանը, — ոչ լիապես, այլ փոքր շափերով»: Այս ժամանակ Ոսկանն սկսում է «լատիներենից անհաջող թարգմանություններ կատարել, ընկնելով նույն ծայրահեղության մեջ, որ հատուկ էր լեզվի անկման դարերին»: Ոսկան վարդապետը, գրում է Լեռն, «սկսեց եռանդով «բարեփոխել» առանց այդ էլ անկենդան դրաբարն ունիթոռների մեթոդով» (էջ 447):

Ոսկան վարդապետը կատարել է նաև վարչական պաշտոններ, եղել է Ս. Սարգիս վանքի (Ուշի գյուղի մոտ) վանահայր, եպիսկոպոսացել է այդ պաշտոնի մեջ: Բայց նրա սրտի ամենամոտ գործն է եղել տպագրությունը, Նախքան Ամստերդամ մեկնելը, նա որպես օգնական եղբորը մոտ է ուղարկում իր աշակերտ Կարապետ վարդապետին:

1662 թվականին, Հակոբ Զուլայեցու հանձնարարությամբ և օրհնությամբ, Ոսկան վարդապետը մեկնեց Եվրոպա: Նա իր հետ էր տանում շատ հավանաբար կաթողիկոսի հավանությանը ենթարկված հայ Աստվածաշնչի ընտիր մի օրինակ, ինչպես նաև «մի ամբողջ հրատարակչական ծրագիր»: Ինչպես նշում է Լեռն, զիմաստը և հիմնական հարցը Աստվածաշնչի տպագրության միտքն էր: Դեպի Հոլանդիա իր ուղևորության ճանապարհին Ոսկանն այցելեց հայկական գաղութներ՝ մեկենասներ ճարելու համար:

Աստվածաշնչի տպագրությունը, ինչպես ծանօթ է, նյութական շատ մեծ գումար պահանջող տպագրական ձեռնարկ էր: Լիվոնիոյ հայ գաղութից ջուլայեցի երեք հայ վաճառականներ՝ «հանենց պարոն Ստեփանոս», Թիուշենց պարոն Թէոդորոսն և Տէր

Աւագենց պարոն Պետրոսն», ընդառաջում են Ոսկան Երևանցուն այն պայմանով միայն, որ գրեթե հրատարակության հասուցիթի շահը, «զաւելեալ շահսն որ ի վաճառմանէ... տալ էջմիածնի», իսկ Երուսաղեմի և Ռւշիի վանքերին ևս բաժին է հանվում: Ոսկանը համաձայնում է, պայմանագիր է կնքում նրանց հետ և մեկնում Ամստերդամ: Այստեղ Կարապետ Աղրիանացին, որ վաղուց սպասում էր իր «մեծ բարունապետ» ուսուցչի ժամանելուն, սիրով է հանձնում նրան տապարանը:

Ոսկանի առաջին իսկ հոգսը լինում է ձեռնարկել Աստվածաշնչի տպագրությանը: Նա պատվիրում է նոր տառեր, այդ թվում նոտրագիր, նոր տեսակի գլխատառեր, թոշնագրեր և այլ զարդեր: Միաժամանակ նա վերջացնում է Կարապետ վարդապետ Աղրիանացու արդեն մամուկի տակ եղած շարականը, որի հիշատակարանում նա համարվում է «շահակերտ մեծի բարունապետի տեսուն Ոսկանի Երևանցւոյ»:

Ոսկան վարդապետը Աստվածաշնչի տպագրությունից առաջ տպում է հայերեն լեզվով մի դասագիրք, որին միացնում է նաև կրոնի դասընթացը՝ «Այբբենարան և քրիստոնէկական»: Այս գրքերը լույս են տեսնում 1666 թվականին (Դ. Լևոնյան, էջ 102):

Աստվածաշնչի հրատարակության նախօրյակին, երբ Ոսկան վարդապետը զբաղված էր այսպիսի աղօգուտ գործունեությամբ, լեհաստանում կաթոլիկները և հատկապես պատի նվիրակ Ալյոհիսիոս Պետուն և Գալանոսը, երբ լսում են, որ Ոսկան Երևանցին Ամստերդամում սկսել է տպագրել հայերեն Աստվածաշնչը և այլ կրոնական գրքեր, կեղծավորաբար գիմում են նրան, նրա տպագրության ձեռնարկը ձախողեցնելու ստույգ մտադրությամբ, և հրավիրում կվով՝ այնտեղ շարունակելու համար իր տպագրական գործունեությունը: Կաթոլիկների անունից նիկոլ Թորոսովիչը, որը հետագայում պատճառ էր դառնալու լեհահայ մեծ գաղութի կորըստյան, վատարար նամակ է գրում Ոսկանին և հրավիրում նրան տպարանով հաստատվել կվով (տե՛ս այս մասին «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի», Պետերբուրգ, 1884 թ., էջ 45—46):

Ոսկան Երևանցին զգալով վտանգը, մերժում է այդ նենգամիտ հրավերը:

Մյուս կողմից, Ամստերդամում էլ ամեն ինչ հեշտ ու հարթ չէր ընթանուած: Ոսկան վարդապետը, սակայն, որպես տեսիլք ունեցող և իր գործին հավատացող, խանդակառ մարդ, քայլ առ քայլ հաղթահարում է Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության ճանապարհի վրա ընկած բոլոր դժվարությունները:

Աստվածաշնչի տպագրությունը տեսեց երկու տարի՝ 1666 թվականի մարտից մինչև 1668 թվականը:

Ուկանի հրատարակած Աստվածաշնչը ունի հետևյալ անվանաթերթը.

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Հնոց և Նորոց Կտակարանաց, ներ պարունակող շարակարգութեամբ նախնեացն մերոց և Եղմարտափրաց»:

Գ. Հեռնյանը իր հիշյալ աշխատության մեջ (էջ 105) այսպես է նկարագրում Ուկանյան Աստվածաշնչի սկզբի էջերը. «Աստվածաշնչի անվանաթերթը բավական լայն շրջանակ ունի, կազմված չորս փայտափորագիր կտորներից, աչ և ձախ զարդանկարների մեջ հավատ և հույս սիմվոլները ներկայացնող մարդկային կերպարանքները: Աս-



ՈՍԿԱՆՑԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԶՈՐՄ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶՆԵՐԸ

բարգմանշաց: Իսկ զինի նրամանաւ Վեհափառին Տեանք Յակօբայ Հայոց Կարուղիկոսի զիլսակարգեալ և տնատեալ ըստ Դաղմատացոցն. նա և զիամաձայնուրին Գրոց Աստուածաշնչից բեղ իրեարս առ բերեր կարգեալ ամենեցուն. նուաստի ումեմն բանի Տեանք սպասաւրի Ուկանի Երևանեցոյ: Յամստերդամ, ներ տպարանում Մերոյն Էջմիածնի և Մերոյն Սարգսի գօրակարի, իրուում Փրկչին 1666, իսկ Հայոց ՌՃՃե, նամսեանն մարտի մետասանի»:

տուածաշնչն բառը՝ թունագրերով: Ապա երկու տեսակ գլխագրեր և երկու տեսակ բոլորգիր: Անվանաթերթի թերեսում «Համարողական արհեստ ընդ Հայոց համեմատեալ» վերնագրի տակ առաջ են բերված արարական թվանիշերը, որոնց դիմաց համապատասխան թիվ ունեցող հայ այբուբենի տառերը. 1—1000000—Ա—ՌՌ: Երրորդ էջում Ուկանի բացատրական առաջաբանն է, ուղղված Հակոբ կաթողիկոսին՝ Աստվածաշնչի մմբագրական և տպագրական աշխատանք-

ների կարձառուս ծանոթությամբ. սկսում է այսպես.

«Բանահիւսութիւն առ Վեհագոյն Հայրապետն Հայոց Տէր Յակօր, ի նուաստէ ումեմնէ բանի սպասաւորէ Ուկան վարդապետէ՝ յաղագս տպագրութեան տառից աստուածայնոց»:

Սույն էջում, որն իրապես բացատրական մի առաջարան է, Ուկան վարդապետը վկայում է, որ ինքը Աստվածաշնչի տպագրության ձեռնարկել է Հակոր Հուղարքու Շմեծահամանի իշխողիդ՝ և Վեհափառի հրամանա և ապահովնած «մանաւանդ տուշութիւն Հոգուն Սրբու»:

Ուկան վարդապետը տպագրության ժամանակ շատ հավանաբար աշքի առուց է ունեցել էջմիածնից հետո բերած Աստվածաշնչի մի ընտիր ձեռագիր, ինչպես նաև լատիներեն տպագրված Աստվածաշունչ: «Քանզի, — գրում է նա առաջարանում, — պատահեցաւ ուրեք առաւելութիւն ի մերս, և պակասութիւն ի նոսա. նոյնայէս անդրադարձութեամբ առաւելութիւն ի նոսա և պակասութիւն ի մերս. առ այսպիսիս լոցցաք և ոչ իշխեցաք առաւելով կամ պակասեցուցանելո, որովհետեւ հայերեն Աստվածաշունչը թարգմանվել է հունարենից, իսկ Վուլգատան՝ երրայերենից, որով տարբերություններ շատ են. ճնակ զմերականս համար ընդ նոցայն համարոյ շարակարգել անհնար եղեւ»:

Ուկանի հրատարակած Աստվածաշունչը բաղկացած է երկու մասից՝ Հին և Նոր Կտակարաններից: Հին Կտակարանի մեջ են մտնում հետեւյալ գրեթերը. «Ծննդոց, Ելլայ, Դևտացւոց, Թուոց, Երկրորդ օրէնք, Ցեսուայ, Դատաւորաց, Հոռիթ, Թագաւորութեանց առաջին, Թագաւորութեանց երկրորդ, Թագաւորութեանց շրորդ, Մնացորդ նախորդ, Մնացորդ երկրորդ, Օվսեայ, Ցովելեայ, Ամովսայ, Արդիու, Ցոնանու, Միքիայ, Նաւումայ, Ամրակումայ, Սօփոնիայ, Անգեայ, Զաքարիայի, Մաղաքիայի, Մակարայելոց առաջին, Մակարայեցւոց երկրորդ, Մակարայեցւոց երրորդ, Եղրաս երրորդ, Եղրաս յորրորդ»:

Հին Կտակարանը գրավում է 628+429=1157 էջ:

Նոր Կտակարանի գրեթերն են հետեւյալները՝ «Աւետառան Մատթեոսի, Աւետառան Մատթեոսի, Աւետարան Ղուկասու, Աւետարան Յօհաննու. Երկրորդ գիրք Սրբոյն Ղուկասու՝ Գործո, Առաքելոց. Թուղթք Պօղոսի առաքելոյ՝ Թուղթ առ Հովմայեցիս, Թուղթ առ Կորընթադիս, Թուղթ առ Գաղատացիս, Թուղթ առ Եփսոսցիս, Թուղթ առ Փիղիպաեցիս, Թուղթ առ Կողոսացիս, Թուղթ առ Թեսաղոնիկեցիս թ, Թուղթ առ Տիմոթէոս Ա, Թուղթ առ Թեսաղոնիկեցիս թ, Թուղթ առ Տիմոթէոս Ա, Թուղթ առ Տիմոթէոս թ, Թուղթ առ Տիմոթէոս թ, Թուղթ առ Տիմոթէոս թ, Թուղթ

առ Տիմոթէոս թուղթ առ Փիղիմոն, Թուղթ առ Երրայեցիս. Թուղթք Կաթուղիկեայց՝ Յակօրու, Պետրոսի Ա, Պետրոսի թ, Յօհաննու Ա, Յօհաննու թ, Յօհաննու գ, Յուգայի. Տեսլեանն Յօհաննու»:

Նոր Կտակարանը գրավում է 288 էջ:

Ուկան վարդապետը Նոր Կտակարանի վերջում, Հայտնության գրքից հետո դրել է «Աղօթք Մանասէի արքայի Յուդայի» (էջ 719), և ապա, Վուլգատայից թարգմանելով՝ «Գիրք Եղրասայ Հորրորդ» (էջ 719—744):

«Ձերոնիմոսի (Հերոնիմոսի) առաջարանութիւն սաղաւարտեալը, լատիներենից Ուկանի թարգմանությամբ, գրավում է 745—759 էջերը: Ապա Կամ մի ընդարձակ «Ցանգ վկայութեանց ի Քրիստոսէ և յառաքելոց ներ Նորում Կտակարանում համառուցեցելոց ի հնոյն», էջ 760—765, ապա այրբենական կարգով «Երրայեցւոց, Քաղդէացւոց և Յունաց անուանց թարգմանութիւն»-ը, էջ 765—773, «Ցանգ մատենական, որ զիրս զայտուիկ՝ սակա որոշ ներ նուիրելոց մատենից կազմի, առ գլուխս հաւատիս այրուբենի կարգավ հակագրելով, վերաձայնեալս վեհագունի կարճառութեամբ շարափակի» (էջ 774—829): Այս ընդարձակ ցանկից հետո դրեւի, է հայոց Հեթում թ թագավորի գրած մի ոտանազորը, «Ուր ծառայեալս եմ թիւր ախտից սկզբնավորությամբ: Ապա Անը ընթերցողս վերնագրի տակ, Ուկանը խոսում է Աստվածաշնչի հրատարակության իր աշխատանքների մասին, շեշտելով, որ Դայ Աստվածաշնչի տպագրությունը «Կարգաւորեցաւ գլխագրութեամբ և տնատութեամբ ըստ Դաղմատացւոյն, նաև ցանգով և համաձնութեամբ»: Ուկանը մկանում է, որ ինքը Վուլգատայից նոր թարգմանել և Աստվածաշնչի մեջ է մտցրել նաև Սիրաքը: Սիրաքը, ինչպես հաւատնի է, մաս չի կաթում մեր Կանոնին: 767—775 թվականի Պարտավի ժողովը Սիրու կաթողիկոսի օրով, երր կամում էր Հին Կտակարանի գրեթերի կանոնը, Սիրաքի համար հրահնագում է. «Եւ արտաքուստ պատգամաւորեսից յուսուցանել զձեր մանկուն զուսումն բազմամասն՝ Սիրաքալ իմաստութիւնն»: «Մեր Աստվածաշուններուն մեջ Սողոմոնի հմաստության առընթեր իր դիրեց գրաված է առավելապես շնորհիմ Ուկան մարդապետի, որ իր հրատարակության մեջ ներմուծած է զաւու հետևողությամբ Վուլգատայի» (Սովական, «Սիրաք հինգայ թարգմանությունները, «Սիրոն», 1936 թ. մայիս, էջ 153»):

Ուկանյան Աստվածաշնչի 833—834 էջերում հիշատակարանն է, որտեղ Ամենասուրը Եղրորդության գործութիւն, ապատի և փառք հայտնելոց հետո, խոսմում է Աստվածաշընչի տպագրության առթիվ կատարված նյոււ-

թական օժանդակությանց մասին, իր կրած տառապանքների և ապա «իշխանութեամբ և հրամանաւ Վեհափառի Կաթողիկոսի և Պատրիարքի հայկազանս սեռի, ներ Պատրիարքարանում Սրբոյ էջմիածնի՝ լուսանկարի՝ և Քրիստոսահմանցելոյց, Տեառն Յակոբու», իր Ելորպա մեկնելու մասին, «յաղագու տպման մատենիս այսորիկ աստուածայնոյ»:

Ապա Ոսկան վարդապետը իր այսքան տրք-նաջան աշխատանքի փոխարեն խնդրում է բոլորից՝ «Տեարք սուրբք... յիշեսչիք Հայր մերով գվերոգրեալ Խանենց պարոն Ստեփանոսն, և զիանգուցեալ ծնօղսն նորին, զիայրն զպարոն Եղումն, և զիայրն զՓառանձեմն, և զայլ արեան մերձաւորս նորին:

Այլ և զթուէշենց պարոն Թէոդորոսն և զմայրն Աննամէլիքն, և զայլ համազունս նորին բոլորովին:

Նաև զպարոն Պետրոսն, և զհայր նորին զտէր Աւագն, և զմայր նորին զղլան Գարաքն, և զայլ հոմասեռս նորին զնոր և զհին:

Ընդ նոսին և հայրն իմ զպարոն Թորոսն, և զմայրն իմ զԳօհարազիզն, և զեղացն իմ զՅօհաննէսն զփոխեցեալն առ Քրիստոս, որոյ ընչլւքն մտի հս ի զործս յայս. այլ և զմիա եղացըն իմ զԱւետիսն, որոյ գրովն սկսաւ գիրքս, և ինքն ևս աշխատեցաւ ժամանակս ինչ ի խահարարութեան և ի տուրեառութիւն գործոյս, և զայլ ազգացեղս նոցին:

Ընդ որս և զհաւասարիմ աշակերտն իմ զկարապետ վարդապետ Անդրիանացի, ոռ միշտ և անձանձիր՝ տքնեցաւ ի վերայ սրբագրութեանն և ալլոց գործոց :

Այլև զձեռնասուն աշակերտն իմ զՅօհան սարկաւագ Երևանեցի, որ զառաջներորդ փորձն միշտ ընթերցաւ ընդ իս և ընդ վարդապետին՝ և աշխատեցաւ ի սփոյել զթովստն և ի ժողովեն, և ի կապելն՝ և զտնտեստան հոգան և զամենայն զարտաքին գործս հոգաց և ծառայեաց մտերմաբար:

Եւ զայլս զամենեսեան աշխատաւորս և զբարեմիտ զանացօղս յիշեսչիք, զի և դուք յիշեալ լիշիք յարբայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, լսելով զերանաւէտ բարբառ նորա, որ է օրհնեալ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգոյն յաւիտեանս, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն: Հայր մեր որ յերկինսա:

Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանը ևս իր «Պատմություն թարգմանության հայ Աստվածաշնչի» աշխատության մեջ (էջ 31) խոսում է Ոսկանի տպագրության աշխատանքների և «ոտնահամար»-ի մասին,

Ոսկանյան Աստվածաշունչը պատկերացարդ է: Այդ նկարների մասին խոսել են Գ. Լևոնյանը (էջ 104), Ա. Կարինյանը («Հայ պարբերական մամուկի պատմությունը», Երևան, 1956 թ., էջ 461), Հ. Քյուրտյանը («Բազմավեպ», 1957 թ., էջ 50):

Աստվածաշունչը «շարված է ցիցերո, 8×12-ի վրա, բոլորգիր տառերով, երկսյուն 4—4 քառակուսու վրա, լուսանցքի հետ միասին գիրքն ունի 21×26 սմ. Փորմատ և 11 սմ. հաստություն (կազմով): Տեքստի բուն շարվածքից դուրս, էջերի աջ և ձախ կողմերում մի քառակուսու լայնությամբ ունի նոտրագիր ծանոթություններ, այսպիսով էջերը կապված են 10 քառակուսու լայնությամբ: Ցուրաքանչյուր էջի ճակատին կա բոլորգիր վերտառություն 16 պոնկտի հասարակ տառերով: Գլուխները՝ նույն տառերի գլխագրերով և թունագիր սկզբնատառերով: Էջերը համարակալված են ներսի կողմից հայատառ և դրայի կողմից արարական թվանշաններով: Մեզ անհասկանալի պատճառով համարակալությունը կրկնվում է երկու անգամ. սկզբից մինչև գրքի համարյա կեսը (Մակարայեցվոց Բ գրքի վերը) առաջին թվայի կումն է Ա—ՌԻԼ կամ 1—628, ապա Հորի գրքից մինչև վերջը Ա—ՊԼԶ, կամ 1—836, այսպիսով՝ ամբողջ գիրքը բռնում է 1464 էջ (2928 սյունակ): Գրքի տպագրությունը կատարված է միջին հաստության սպիտակ-կաթնավուն վերքե թղթի վրա, քառածալ, այսինքն տպագրված է 4—4 երես, այսպիսով՝ 183 թերթի վրա, մամուլի տակ մտնելով 366 անգամ» (Գ. Լևոնյան, էջ 102):

Աստվածաշնչի հրատարակությունը, եղբակացնում է Գ. Լևոնյանը, «մի հոյակապ գործ է տպագրական-աեխնիկական տեսակատից և աննախընթաց աշխատանք մինչև իր ժամանակի հայերեն հրատարակությունները» (Լեռնյան, էջ 102):

Պատմաբան Լեռն ևս, բարձր գնահատելով Ոսկանի հրատարակած Աստվածաշնչի պատմական և մատենագրական արժեքը, գրում է. «մի արդար մեծ գործ, որ, ինչպես տեսանք, վաղուց ի վեր պահանջ էր զարձել Ազգի մեջ և շատերի տեխնագիտություններ էր, բայց մնացել էր երազ: Կարիք շնչա այստեղ մի առ չ' բացատրելու, թե ինչ ոժվարություններ էր ներկայացնում առաջին անգամ Աստվածաշունչ տպագրելը: Ոսկանը երկար ժամանակ աշխատանք էր թափել նրա վրա ոչ միայն իբրև տպագրող, այլ իբրև խմբագրող: Նա համեմատել է հայերեն Աստվածաշունչը լատիներենի հետ, տառատել է լատիներենի համաձայն, կազմել է բոլոր հատուկ անունների մի շատ մանրամասն ցանկ, նույնիսկ

նրա մի մասը (*Սիրաքի գիրքը*) նորից թարգմանել տվել Ստեփանոս Լեհացուն։ Գրքը վերցում Պուկանը զետեղեց մի քանի կտութարգմանություններ Ա. Հերոնիմոսից, որոնք, երկի, իր գործն էին։ Ավելացրեք այդ բոլորի վրա անսխալ, պատկերազարդ, մաքուր և գեղեցիկ տպագրությունը, և դուք հասկացողություն կկազմեք Պուկանի գործադրած մեծ շանքերի և հոգեկան մեծ կարողության մասին։ Տպագրական մամուլն առաջին անգամն էր լույս հանում այն փաստը, որ հայն էլ ընդունակ է երկար ու ժաման աշխատություններով խոշոր հրատարակություններ անել» (Ղեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 448):

Պուկանի մեծ վաստակի մասին ակադեմիկոս Ա. Կարինյանը իր 1956 թվականին հրատարակված «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» Ա հատորի մեջ (էջ 157—158) հետևյալն է գրում. «Հասկայական աշխատանք է տանում այդ գործիւը Աստվածաշնչի տպագրությունը գովու բերելու համար։ Նա բանսաերի նման է մոտենում նյութին։ ... Մատթեոս Շարեցու տառերը կոպիտ էին։ Պուկանն ընտրում է տպագրության համար ավելի ընտիր տառեր։ Ինքն է իմբագրում և սրբագրում ամբողջ գիրքը։ Հին օրերին այդ հրատարակությունը քննարկվում էր, որպես Հռոմի գեմուղղած յուրահատուկ ցուց։ Անկյուրացուն արգելել էին տպագրել «Աստվածաշունչը»։ Պուկանը ուղերձրվելով Հուսնդիթա, շատ որոշակի կերպով ընդգծում էր իր ելույթի իրական ընույթը։ Աստվածաշնչը հետպահ հրատարակիչներն ստիպված են լինում արձանագրել Պուկանի վաստակի նշանակությունը։ Առաքել Դավրիթեցու պատմության Ամստերդամի հրատարակության մեջ հատուկ էջեր կան նվիրված Պուկանին։ Դարացատրվում է նրանով, որ այս եռանդրութանասեր-տպագրիչը դառնում է լուսավորշական եկեղեցու ավանդները պաշտպանող պրոպագանդիստի տիպար, իսկ Ամստերդամը՝ կաթոլիցիզմի գեմ ծառացող հայ վաճառական-գրասաերների կայան։ Պատահական չեր այն, որ Ամստերդամյան տպարանը կը ըստ էր էջմիածնի անունը։ Հուանդահայ քաղաքում հաստատված կրոնական կուտուրտեգերները էջմիածնի հետ էին կապում «հայկական իդեոլոգիայի» նոր տեսությունը շահալով առանձին ուշադրությամբ արձագանքել վաճառական ընթերցողների պահանջներին։

Պուկան վարդապետի հրատարակությունը, շնայած իր որոշ թերություններին, մեծ արժեք էր ներկայացնում և բավարարում ժամանակի մարդկանց պահանջները։ Գրա-

պայծառ ապացույցն այն է, որ Աստվածաշնչի հաջորդ երկու հրատարակությունները՝ 1705 և 1733 թվականներին՝ վերահրատարակել են Պուկանյան Աստվածաշունչը։

Աստվածաշնչի տպագրությունից հետո Պուկանը հրատարակում է նաև նույն տպարանից հայ մատենագրության վերաբերյալ մոտ 12 անուն գիրք, այդ թվում նոր Կոտակարան, Մաշտոց, Աղվեսագիրք, Խորենակարան, Տաշտոց, Աշխարհացույցը, Զայնքաղ շարական հայկական խազերով և Առաքել Դավրիթեցու պատմությունը (նրա կենդանության օրով)։

1669 թվականին Պուկանը մի աղերսամիկոս է Ֆրանսիայի կուռովիկոս ԺԴ գրով դիմում է Ֆրանսիայի կուռովիկոս ԺԴ գրավորին և նրան նվեր ուղարկելով հայերեն Աստվածաշնչից մի օրինակ, խնդրում է նրանից հայկական տպարան բաց անել Փարիզում, Մարսսելում կամ Լիոնում։

1670 թվականին Պուկանը տպարան է բաց անում Մարսսելում, տպարանի անունը պահպելով դարձյալ «Ա. էջմիածնի և Ս. Սարգսի զօրավարի»։ Նույն թվականին նա տպում է երկու գրքով՝ «Քրիստոնէական» և «Պարտէզ հոգևոր»։ Ապա այդ տպարանը մատնըվում է անգործության և ընդմիջտ փակվում է կաթոլիկ Պրոռագանդայի մերենայությունների հետևանքով, իսկ Պուկանը մատնվում է նոր վշտերի և հուսահատության, Բայց, ասում է կեռն, նա իր մահից առաջ «պատրաստեց հայ տպագրիշների սերունդ, որ նրանից հետո շարունակեց գործը և այնքան եռանդու ու ժիր էր, որ նույնիսկ շարունակեց նրա պայքարը» (Ղեռ, «Հայոց պատմություն», Գ, էջ 458)։

Օրմանյան պատրիարքը «Ազգապատում»-ի թհատորում (էջ 2544) գրում է. «Տպագրության ձեռնարկին կատարելապես նահատակ մը եղավ տպարանի փոշիներու մեջ թավալող այդ սրբազան արքեպիսկոպոսը, մինչ շատ դյուրին էր իրեն, յուր ծագումով և աստիճանով՝ փառքերու և հեշտություններու մեջ անցնել յուր կյանքը, յուր զասակից եկեղեցականներու նման։ Պուկանի անձնավորությունը արժանի է մեր Ազգին մտավոր զարգացման տեսակետեն՝ մեծ երախտավորներու կարգը դասվիլ, և տպագրության իսկապես մղում տվող ճանցվիլ։ Պուկանի գործը իր տարաբախտ մահվեն ետքն ալ շարունակեց և լորցած բույսե մը թափված սերմերու նման բողոքները բազմացան»։

Պուկան վարդապետ Երևանցին մահացավ 60 տարեկան հասակում, 1674 թվականին, անմահ անուն թողնելով հայ մշակութի պատմության մեջ։

(Դարուեակելի)



ՊՐՈՅ.-ԴՈՒՏ. Լ. Մ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻ

(Գիտուրյան վաստակավոր գործիչ)

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԹՈՌԸ ՏԵՐ ՄՈՎՍԵՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՅԱԹՆՅԱՆՑ

(Մասնաւութեան 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎԸ)

«Են բանն արա՛, վուր Աստուծու շարժումն է,
Խրատնիքը՝ գրած Հարանց վարդումն է,
Ֆիրիք բան կա՛, հոմու, մարմնու կարգումն է,
Դիր սիրե՛, դալամ սիրե՛, դափրար սիրե՛»:
(ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ, Գ, 2)

Սայաթնովայագիտությունը, իբրև հայ (և՝ միայն հայ, այլև անդրկովկասյան երեք ազգերի) բանասիրության ուրույն բնագավառ, անտարակույս, երախտապարտ է անցյալ դարի երկու նշանավոր հայ գործիշների:

Նրանցից մեկն է Սայաթ-Նովայի թոռով՝ Տեր Մովսես ավագ քահանա Սայաթնյանցը (1810—1883), որի շնորհիվ կորստից և անհետացումից փրկվեց մեծ երգից ժառանգած ինքնաձեռագիր մատյանը (դավթարը), որն այժմ պահպամ է Հայկական ՍՍՌ Մինիստրուների Սովետին առընթեր Պետական ձեռագրատանը (Մատենադարանում):

Երկրորդը բժիշկ Գևորգ Ախվերդի Ախվերդյանն է, նույն Յուրի Ախվերդովը (1818—1861)¹, որը հիշյալ մատյանի հիման վրա 1852 թվականին Մոսկվայում հրապարակ հանեց Սայաթ-Նովայի 46 հայերեն խաղերը, մանրակրկիտ ժանոթագրություններով, բառարանով, առաջարանով և «Թիֆ-

լիզու բարբառի մեջ քանի հատկություններու վրա» վերնագիրը կրող հետազոտությամբ հանդերձ: Եվ այս հրատարակությունը, ինչպես հայտնի է, հիմնաքար հանդիսացավ, մի կողմից, սայաթնովայագիտության, և մյուս կողմից՝ հայ բարբառագիտության և, մասնավորապես, Թիֆլիսի հայոց հինավուրց (Թարագի թաղի) բարբառի ուսումնակրության համար:

Սակայն հիշյալ մատյան-դավթարը, որը աստիճանաբար գրվել էր մինչ Սայաթ-Նովայի աքսորը Սահնգիլո-Զաքաթալայի հայաբնակ Կախ-ավանը, հետևապես մինչ նրա ծխատեր քահանա ձեռնադրվելը Հաղբատի եպիսկոպոսի կողմից 1765 թվականին (Տեր Ստեփանոս անունով), չպիտի շփոթել նույն Սայաթ-Նովայի (Ստեփանոս քահանայի) մյուս ինքնաձեռագիր մատյան-ծաղկաքաղի հետ, որը գրվել է աքսորավայր Կախ-ավանում 1766 թվականին², և որը նույնպես պահպամ է Հայաստանի Մատենադարանում,

1 Գ. Ախվերդյանի մանրամասն կենսագրությունը տե՛ս «Հայ աշուղներ», լուս դցած աշխատասիրութենով Գևորգյան Ախվերդյան», հրատ. Մանե Ախվերդյանի, Թիֆլիս, 1903, էջ Ա—ԺԱ:

2 Մի ժամանակ անցել էր Թափրիզ՝ մի մասնակոր գերձակի ընտանիքը (տե՛ս Հ. Անապյան, «Ճուցակ Հայերեն ձեռագրաց Թափրիզի», Վիճակ, 1910, էջ 97 (—Հանդիս ամսօրյաց, 1908 թ., մարտ, էջ 82):

փոխադրվելով Թավրիզից (նախկին № 32,
այժմյան № 4720)^{3:}

Որ Սայաթ-Նովայի հայերեն խաղերի հրա-
տարակության զարկ տվողը, իրոք, Տեր Մով-
սեսն է եղել, երևում է, ի միշտ այլոց, և գ.
Ախվերդյանի հետեւյալ հայտարարությունից.

բիցն, որն որ երգչի մեծ որդին. Մելքիսեդին՝
Թիֆլիզից Մոզդոկ գնալիս տանում է հետո.
հետն էլ ժառանգած է ունենում նա իր հոր
քամանչեն ու շնորհքն: Մելքիսեդի որդին՝
Թիֆլիզու ջգրաշեն եկեղեցու ավագ քահա-
նա Տեր Մովսեսն, որ կրթությունն Թիֆլի-



S. ՄՈՎՍԵՍ ԱՎԱԿ ՔԱԶԱՆԱ ՍԱՅԱԹՆՅԱՆՑ
(1810—1883)

«Սայաթ-Նովու գրել-կարդալ իմանալն
պարզ տեսնում ենք նրա մեղ հասած դավթա-

գում ավարտելուց հետո Մոզդոկ ըլելիս՝
տեսնում է իր քրոջ որդու մոտ էս դավթարն,

վեր է առնում ու բերում Թիֆլիզ: Իմ հարգո
բարեկամ գիտնական բժիշկ Պոնդոյանց
Հովհաննեսն, որն որ գիտեր ինչ գժվարու-
թյուններով ձեռք են բերում մեր աշուղներու
խաղերն, տեսած էր դավթարն երախտավոր

3 Լ. Մելքիսեդ-Բեկ, «Սայաթ-Նովա», Թբիլիսի, 1930,
էջ 81—86, 03—015 (վրացերեն): — «Սայաթ-Նովա»,
Խմբագրությամբ Գ. Լենինականի, Երևան, 1932, էջ 29—
32: — «Սայաթ-Նովա», Խմբագրությամբ Մ. Հաօրար-
յանի, Երևան, 1959, էջ 304—305, 306.

Տեր Մովսեսի մոտ, հանում է սրանից աղաշանքով, ու մեկ սիրուն մայման առավոտն՝ ուրախ-ուրախ մտած սենյակս՝ պարզում է ինձ իր դիվանը»⁴:

Հետագայում, հավանական է, Գ. Ախվերդյանի մահից (1861) հետո, Սայաթ-Նովայի դավթարը վերադարձվել է Տեր Մովսեսին. իսկ վերջինիս մահից (1883) հետո այն, բնականաբար, անցել է նրա ժառանգներին (Տրդատ, Արգար և այլն), մինչև որ այն դնել է 1914 թվականի մոտերքում Արգարից Հայ գրողների Կովկասյան ընկերությունը. Վերջապես, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, նույն դավթարը, Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ, հանձնվել է Հայաստանի Թանգարանին, որտեղից էլ փոխադրվել է Մատենադարան:

Սայաթ-Նովայի մատյան-դավթարը Թիֆլիսից երևան փոխադրվելուց հետո, Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի առաջարկով, հանձնվում է քննության հայտնի սայաթ-Նովայագետ Գևորգ Ասատորիին, որը շի զանում իր հետախուզության արդյունքները ներկայացնել ըստ պատկանելուն:

Գ. Ասատորի ասելով, «ամենից առաջ հարց էր ծագում, արդյոք սա նույն դավթարը չէ», որ 3/4 դար սրանից առաջ հանգուցյալ Գևորգ Ախվերդյանը ստացել էր Սայաթ-Նովայի թոռը Տեր Մովսեսից և իր ուսումնասիրության նյութ դարձրելք⁵: Եվ ահա որոշ կասկածներ և տարակուսանքներ փարատելուց հետո Գ. Ասատորը գալիս է «այն եղրակացության, որ նա Ախվերդյանի ուսումնասիրած օրինակն է»⁶, ասել է՝ Տեր Մովսեսի ձեռքին եղածը:

Գալով Տեր Մովսեսին, պետք է ասել, որ սա Սայաթ-Նովայի ավագ որդի Մելիքսեթի (Մելիքսեղի) կամ, որ նույնն է, Մելքոնի զավակն էր, ծնված Թիֆլիսում 1810 թվակա-

⁴ «Սայաթ-Նովա», լուս գցած աշխատասիրությունով Փոլրգյան Ախվերդյան, Մոսկվա, 1852, էջ մի:

⁵ «Սայաթ-Նովա», հրատ. Հայ գրողների Կովկասյան ընկերության, Թիֆլիս, 1914, էջ I-II.—«Սայաթ-Նովա», Խմբագրությամբ Գ. Առնյանի, Երևան, 1932, էջ 20, ծան. 2:—Գ. Ասատոր, «Սայաթ-Նովայի մատյանը», «Բաները Հայաստանի Գիտական ինստիտուտի», գիրք Ա.-Բ., Էջմիածին, 1921—1922, էջ 230:

⁶ Գ. Ասատոր, հիշյալ աշխատաթյունը, էջ 230:—
7. Նույն տեղում:

Եփեն, ինչպես նշված է, ի միջի ալլոց, և նրա տապանագրի մեջ⁸:

Այս Տեր Մովսեսը կրում էր «Սայաթնյանց» աղջանունը, մինչդեռ Սայաթ-Նովայի այլ հետնորդները գործածում էին իրեն իրենց աղջանուն այլեայլ ձևեր:

Այսպես, օրինակ, Սայաթ-Նովայի կրտսեր որդին Հովհաննը, որը 1795 թվականի սեպտեմբերին ամրող ընտանիքի հետ (Հետեապես և Տեր Ստեփանոս Սայաթ-Նովան ներառյալ)՝ անցել էր Մողոնկ և ապա միայնակ զեպի Պետերբուրգ, որը 1823 թվականին ընդորինակել էր իր հոր վրացե-

⁸ Քննդքելով Տեր Մովսեսի ծննդյան 1810 թվականը, մենք սրանով, ի գեղ, ուզում ենք շեշտել, որ նախորդ դարի կեսերին Տեր Մովսեսից լած և գրի առնված ավանդությունները Սայաթ-Նովայի մասին, որ տեղ են գտել Գ. Ախվերդյանի 1852 թվականի հրատարակության մեջ, պատմակիսական ստույգ աղյուսություն շեն կարող նամարվել: Այսպիսի է, ի միջի ալլոց, և առասպելը Սայաթ-Նովայի սպանության մասին 1795 թվականին, որը գեմ է ընկնում Ժի դարի վերջների փաստաթղթերին և վավերագրերին և ոչ մի քննդատության չի դիմանում (սրա մասին տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Գ. Երևան, 1955, էջ 182—186, 241—249, 260): Օգտվելով առիթից, կուզնեային նշել, որ Սայաթ-Նովայի առասպելական սպանության շուրջը գոյացած սացցադաշտը կաթես թե սկսում է հետոցետե նալիքել, և սրա ապացուցյն է Երևանում վերշերս լրւյս տեսած հրատարակությունների շարքը, այն է՝ Վ. Նալբանդյան, «Թիֆլիսին հայ մատենագրության մեջ», 1958, էջ 168—169, ծան. 2 (նույն վրացերեն, Թիֆլիսի, 1959, էջ 169, ծան. 2), «Սայաթ-Նովա», Խմբագրությամբ Ա. Հաւարյանի, 1959, էջ 307: Հմմտ ։ նաև մեր հետեւյալ ժանոթագրությունը:

⁹ Աղա-Մահմադ-խանի 1795 թվականի 11 սեպտեմբերին արշավանքի նախորդ օրերին Թիֆլիսից հեռացել էին, ի միջի ալլոց, Հաղպատի թեմի առաջնորդ Դամիթի եպիսկոպոս Հավերդարյանը և լուսարար Ստեփանոս Վարդապետը (Սայաթ-Նովան), Թողելով Հաղպատի գործակալի, ալտինքն հսկողի, պաշտուել Թիֆլիսում Բեթղեհեմ եկեղեցու միաբան Միքրար ավագ բանանային, որին և ծոնում է իր հայտնի ուղղությունը Սերոբ գրիշը նույն 1795 թվականին, այսպես արձանագրելով Հաղպատի գործակալի սպանության գեղքը իր դավթարի տիտղոսաթերթի դիմացը. Այս է տապան Փէթղէմայ Սուրբ Աստուածածնայ աւաշ քահանայ և Հաղպատի գործակալ Տեր Տեր Մահմետարին է, որ Աղա-Մահմադ-խանի ծեռամբն Եհատակիցաւ վասն եկիղիցական երժարի և անօթի, ըստ ցոյց տալոյ համար տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, «Նոր նութերը Սայաթ-Նովայի առասպելական նահատակության շուրջը», «Պրոլետար» (Թիֆլիսի), 1935 թ., 17 օդուսուի, № 189):

րեն, հայերեն և բառալեզու (հայերեն-վրացերեն-ադրբեջաներեն-պարսկերեն) զույգ խաղերը, իրեն անվանում էր հվան Սելյադով կամ Սելիդով¹⁰:

Հովհանի (հվանի) թոռը, որը վաճառական էր Աստրախանում և, իրու մեկենաս, նյութապես օժանդակում էր ոռուահայոց մամուլին, աշխատակցելով երբեմն-երբեմն այս կամ այն ամսագրում («Հյուսիսափայլ», «Հյուսիս», «Արարատ» Թիֆլիսի, «Կոռունկ Շայոց աշխարհ»), սովորաբար ստորագրում էր, «Հովհաննես Սայադովյանց (Սայերնովյանց) կամ Սայաթնովյանց»¹¹:

Տեր Մովսեսի տղաներից մեկը, Տրդատը, որը պետական ծառայող էր՝ Կովկասյան շրջանային համբարակային (ինտենդանտական) վարչության մեջ Թիֆլիսում, կոչվում էր «Տրդատ Սայաթնով»¹², մինչդեռ նույն Տեր Մովսեսի մյուս որդին՝ Տրդատը և վերջինիս հետևորդները յուրացրել էին «Սայաթ-Նովա» պարզ ազգանունը¹³:

Ինչպես Գ. Ախվերդյանի վկայությունից երևում է, Տեր Մովսեսն իր «կրթությունն Թիֆլիսում» է ստացել, սակայն ո՞ր դպրոցում, հայտնի չէ: Համենայն դեպս, ներսիսյան դպրոցի առաջին տարիների շրջանավարտների ցանկերում նրա ազգանունը՝ Սայաթնյանց չի հիշվել¹⁴: Իսկ եթե նա սովորել է որևէ Հայկական տարրական դպրոցում, որոնց թիվը այն ժամանակ 15-ի էր հասնում, ամենահավանականն է այս դեպքում ենթադրել Զգրաշեն եկեղեցուն կից 1825: թվականին բացված Տեր Եսայի ավագ քահանա՝ Դանդուրյանի դպրոցը, որտեղ սո-

¹⁰ Վենիգրադի Արևելագիտական ինստիտուտի վրացերեն հայաբառնուի № 222 ձևագիրը:

¹¹ Մ. Նալբանդյան, «Անտիկ երկեր», խմբագրություն և կոմենտարիներ Աշոտ Հովհաննիսյանի, Երևան—Մոսկվա, 1935, էջ 550, 551, 559: — Աշոտ Հովհաննիսյան, «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք Ա. Երևան, 1955, էջ 141, 294, գիրք Բ. Երևան, 1956, էջ 95, 170: — «Հյուսիսափայլ»-ի պոեզիան», կազմեց Մերի Սառյան, Երևան, 1956, էջ 339—343, 436—439: — Մ. Միքրայան, «Հյուսիսափայլ» ամսագրը, Երևան, 1958, էջ 224: — Հովհ. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի թիվուորագիւա (1794—1900)», Երևան, 1956, էջ 139, 242, 245, 262, 294:

¹² Տե՛ս «Կովկասյան օրացույց»-ի (սեղանի) տարրեր՝ տարիների հրատարակությունները նախորդ դարի 70—80-ական թվականներին:

¹³ Հմմտ. հայտարարություն (ռուսերեն) «Զարյա Վոստոկա թիվթի, 1941 թ., 15 մարտ, № 62:

¹⁴ Ազենանդ Դ. Երիցյան, «Պատմություն 75-ամյակ դրության ներսիսյան հոգեւոր դպրոցի», որ ի Թիֆլիս (1824—1899 թ.), հատ. Ա (1826—1850 թ.), Թիֆլիս, 1898, էջ 114—118, 170—171 և այլն:

վորեցնում էին «Հայերեն և վրացերեն կարդալ, գրել»¹⁵:

Այսպես թե այնպես, Սայաթնյան Մելիքսեթի որդին, երիտասարդ հասակում ընդունում է հոգեւոր կողում և ձեռնադրվում է քահանա Մովսես անվան տակ, կապվելով հիշյալ՝ Զգրաշեն եկեղեցու հետ, որտեղ հետագայում ստանում է ավագ քահանայություն (և ավագերեցություն):

1839 թվականի սեպտեմբերի 8-ին (հին տոմարով) երիտասարդ Տեր Մովսես Սայաթնյանցին վիճակվում է լինել հանդիսադիր Թիֆլիսի վանքի առաջնորդանիստ մայր եկեղեցում կատարվող մի մեծաշուրջ արարողության, այն է՝ Խաչատուր Արովյանի պսակադրությունը թիֆլիսարնակ (Կուկիա արվարձանի) գերմանուհի էլմիրա Լոռզեի հետ¹⁶, երբ եկեղեցուց դուրս, բակում, հոծ բազմության ներկայությամբ, առաջին անգամ այսպիսի գեպքում Թիֆլիսում նվազել է զինվորական փողային նվազախումբը¹⁷:

1844 թվականին Տեր Մովսեսը նշանակվում է ներկայան դպրոցի տպարանի կառավարի և գրադարանապետ, սակայն երկար չի մնում այդ պաշտոններում: 1847 թվականին նա ազատվում է այդ պաշտոններից և նրա տեղը գրավում է էջմիածնի միաբան Կարապետ վարդապետ Շահնազարյանը, հետագայում հայտնի բանասերը:

1854 թվականին Տեր Մովսեսի հետ նաև մակագրություն է ունեցել, Մ. Նալբանդյանի վերաբերյամբ, մոսկվայարնակ Մսեր մագիստրոս Մսերյանը¹⁸:

Նույն ժամանակակից Տեր Մովսեսը ավագ քահանա Սայաթնյանը կամ հմերեթի թիմական ներկայան տեղայացում հայտնի բանասերը:

¹⁵ Անդր տեղում, էջ 271:

¹⁶ Ներս Տեր-Կարապետյան, «Խաչատուր Արովյան», Տիֆլիս, 1897, էջ 90—91: — Լ. Մելիքսեր-Բևկ, «Ե. Արովյանը Թիֆլիսում և Թուոքի ախսկը պատմությանը տեղադրություն», «Գրական հանդես» (Թիֆլիս), 1941 թ., № 1, էջ 32:

¹⁷ Հետաքրքրությունից երբեք էլ զուրկ չէ այն փաստը, որ հենց այս տարիներին (1839—1841) Խ. Արովյանը զբաղվում է Թիֆլիսի հայոց հարսանեկան սուլորությունի խնդրով, որին նվիրում է հատուկ ուսմենաբրություն գերմաներեն լեզվով՝ «Ակնարկը Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» (Խ. Արովյան, «Երկերի լիակատար ժողովածու», Հատ. Ը, Երևան, էջ 105—153 գերմաներեն, 154—190 հայերեն թարգմանությամբ):

¹⁸ Մ. Նալբանդյան, «Անտիկ երկեր», էջ 325: — Աշոտ Հովհաննիսյան, «Նալբանդյանը և նրա ժամանակը», Աշոտ Հովհաննիսյանը և նրա ժամանակը, Ա. էջ 65:

կոնսիստորիայի անդամ է¹⁹, երբ կառավարության կողմից պարգևատրվում է Ս. Ստանիսլավի 3-րդ կարգի շքանշանով:

Տ. Մովսեսը մեծ հեղինակություն էր վայելում հոգևոր բարձր իշխանության աշբում. ուստի և հաճախ Մայր Աթոռը նրան էր հանձնարարում բնություններ կատարել այլևայլ թեմերում այլևայլ խնդիրների առթիվ, մասնավորապես 1865 թվականին Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի գծով Թիոդոսիայի Խալիլյան դպրոցի շուրջը²⁰:

Իր ավելի քան 50-ամյա գործունեության ընթացքում Տեղ Մովսեսը բազմիցս պարգևատրվել է Հովհաննես Ը Կարբեցի, Ներսես Ե Աշտարակեցի, Մատթեոս Ա և Գևորգ Կաթողիկոսների կողմից, ներառյալ վարդապետական լանջախաչով, որը շատ հազվագյուտ դապրերումն է շնորհվում ամուսնացյալ հոգևորականներին:

Այս հոգվածում զետեղված նրա լուսանկարը, որը պատկանում է 1880-ական

19 «Կովկասյան օրացույց»-ի (սեղանի) տարբերակին հարատարակությունները 50—60-ական թվականներին:

20 Գարդիել արքեպիսկոպոս Այլվայան, «Պատմություն Խալիլյան ոստամնարանին ազգիս Հայոց (1858—1871), Տիֆլիս, 1880, էջ 180, 186, 192, 263 և այլն.

թվականներին, պատճենավորված է այն օրինակից, որ պահպում էր Տեղ Մովսեսի ժառանգների մոտ, և մեզ իրեւ սալաթնովագետի, նվիրաբերեց, ի հիշատակ իր մեծանուն նախորդների, Տեղ Մովսեսի թոռ Աննա Սայաթ-Նովան, որը թիֆլիսի փոստատան էր ծառայում և այժմ կենսաթոշակառու է²¹:

Տեղ Մովսեսը վախճանվել է Թիֆլիսում 1883 թվականին, 73 տարեկան հասակում, և թաղվել է Զգրաշեն եկեղեցու (այսպես կոչված «Միջին փողոց»-ում) բակում, եկեղեցու հարավ-արևմտյան՝ անկյան մոտ, ուր պատում ամփոփված էր սպիտակ մարմարյա հուշարձան 5-տողանի արձանագրությամբ՝ ոսկեզօծ գլխատառ նշանագրերով²².

ՀԱՆԳԻՍՏ ՈՍԿԵՐԱՑ

ՄՈՎՍԵՍ

ԱԻԱԳ ՔՀՆՅԻ

ՍԱՅԱԹՆԵՆՑ

1810—1883

21 Ներկայումս ապրում է Զգրաշեն եկեղեցու երեմնի միաբան հանգուցյալ Տ. Մարգիս ավագ քահանա Աղաջանյանի որդի, իրավաբան Արմենակի ընտանիքի խնամքի տակ:

22 Լ. Մելիքսեբ-Թեկ, «Սայաթ-Նովա», Թիֆլիսի, 1930, էջ 159.



Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

(Ավագ գիտական աշխատան)

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՍՅՐԵՆԸՐԱՆՆԵՐԸ ԺԵ-ԺԷ ԴԱՐԵՐՈՒՄ

Մեր մեծ լուսավորիչ, անմահ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ գրած հոդվածում¹ նշել էի, որ նա մեծ լեզվաբան և տաղանդավոր մանկավարժ է, մեր առաջին գրուսուցը, առաջին հայ այրբենարանի հեղինակը, հայերենի գրուսուցման հեգական մեթոդի հիմնադիրը, ուրիշ խոսքով՝ հայոց լեզվի առաջին մեթոդիստը։ Մեսրոպյան այրբենարանները 1500-ից ավելի տարիների ընթացքում լույս են տեսել «Քերական կամ այրբենարան», «Քերական որ է այրբենարան», «Տետրակ այրբենական» և այլ անուններով, երբեմն «յարմարեալ ի վաղ ժամանակաց» ենթավերնագրով, բայց միշտ առանց հեղինակի անոնց հիշատակելու։

Մեսրոպյան այրբենարանները ժամանակի ընթացքում ենթարկվել են բարեփոխությունների։ Այդպիսիները հնաձև, այրբենարաններից տարբերելու համար ես անվանել եմ նորաձև։

Մինչև այժմ ինձ հաջողվել է ուսումնասիրել 62 անոն Մեսրոպյան այրբենարան, որոնցից 13-ը հնաձև են, իսկ 49-ը՝ նորաձև։

Սույն հոդվածում խոսելու եմ միայն միջնադարյան ձեռագիր և տպագիր Մեսրոպյան 26 այրբենարաններից 8-ի մասին (մնացածները կամ չեն մնացել կամ չկան Սովետական Միության գործարաններում), որոնց մեջ ամենահինը 1430-ական թվականներին թուվմա Մեծոփեցու կողմից գըրված նորահայտ ձեռագիր այրբենարանն է, որի մանրազնին վերուժությունը տվել եմ 1940 թվականին «Սովետական մանկավարժա ամսագրի № 1-ում (էջ 145—150)։

Թուվմա Մեծոփեցին ոչ միայն ժե դարի հայ պատմագրության ամենափայլուն գեմքերից մեկն է որպես եկեղեցական գործիւն տաղանդավոր և անզուգական պատմիւն գրչության արվեստի նշանավոր ուսուցիչ և ընտիր գրիւ, այլև շնորհալի ուսուցիչ և նա 35 տարի ուսուցչություն է արել և զրա համար հայտնի է նաև Թուվմա վարժապետ անունվ։ Նրա աշակերտները հիացմունքով են խոսում իրենց ուսուցչի մանկավարժական ընդունակությունների մասին²։ Թուվմա վարժապետը, որպես լավագույն գրուսուց, իր աշակերտների խնդրանքով գրում է այրբենարան՝ «Յաղագ իմաստութեան անվարժ տղայոց ուսման» խորագրով։ Այս այրբենարանը իրենից ներկայացնում է գրուսուման ձեռնարկ-ուղեցուց դասատուների համար, չունի ո՛չ հեգարանի և ո՛չ էլ ընթերցարանի բաժիններ։ Հեղինակը նպատակ է դրել այս դասագրքով սովորողներին լոկ գրածանալ դարձնել, թողնելով, որ նրանք գրկապությունը (վանկեր և առանձին միավանկ բառեր) և վանկակապությունը (առանձին բաղմավանկ բառեր կարդալը՝ սկսած երկվանկերից) անցնեն Մեսրոպյան այրբենարանով։ Այսպիսով, Մեծոփեցին ոչ թե Մեսրոպյան ամբողջ այրբենարանն է բարեփոխել, այլ նրա միայն տառաձնաշության մասը՝ առաջին էջուն

Այրբենարանի վերլուծությունից պարզ երևում է, որ հեղինակը չի բավականանում այրութենը սովորական 2—3 տեսակ խառն դասավորությամբ (ախչ.... ածեռ....) անցնելով, ինչպես տրվում էր Մեսրոպյան այրբենարանի առաջին էջում, այլ այրութենի տառերու տալիս է 10 տեսակ համակցություններով, որպեսզի աշակերտները սկըզ-

¹ «Մեսրոպ Մաշտոցը որպես գրուսուց», «Էջմիածին», 1959, ԺԱ. էջ 38—44։

² Գարեգին վարդապետ Հովհանիսյան, «Թուվմա Մեծոփեցու կյանքը», Վաղարշապատ, 1914, էջ ԺԴ—հ,

բից և եթ այրութենը մեքենայաբար անգիր շանեն, այլ բոլոր տառերն էլ լավ ճանաշեն, որտեղ էլ պատահի, այսինքն՝ կարողանան անվանել ցուց տված տառը և ասված տառանունով՝ ցուց տան տառը:

Առողքանության հագագ ենթախմբի հաշորդ կետադրական նշանը սոսկն է: Այս նշանի մասին ևս առաջին հիշատակությունը գալիս է դեռևս Եղիշի քերականներից: Առողքանության բաժնում քերական Մովսես Քերթողը սոսկը բնորոշում է այսպիս: «Սոսկ, որ սուր անցանէ»: Հետագա շրջանում քերականությամբ զբաղվողներից Հ. Գ. Ավետիքյանը մի փոքր ավելի հանգամանորեն է անդրագանում այս հարցին. նա գրում է. «Հագագ է որակ ձայնի, որ եթէ թանձր իցէ և խոչոր, կոչի թաւ, իսկ լերկն՝ զուրկն ասի սոսկ¹: Խոսկելով նրա կոնկրետ գործածության մասին, Հ. Գ. Ավետիքյանը նշում է, որ սոսկը դրվում է «ի վերայ լերկիցն պ, կ, տ, դ, ն, ծ, շ, մ. բ»²:

Այստեղ Հ. Գ. Ավետիքյանը գրեթե նույնությամբ կրկնում է Սկեռացուն:

«Սոսկն ի հնումն վարէր ի վերայ այնց տառից, զորս առաւել նուրբ պարտ էր հընչել, քան զնորդատառս նմանաձայն նոցա», — գրում է Հ. Մ. Զամշյանը³:

Ինչպիս պարզվում է բերված բնորոշումներից, սոսկը պետք է գործածվեր ամ բազմայնների վրա, որոնք արտասանվում են ավելի նուրբ ու բարակ. թալը թանձրացնողն էր, իսկ սոսկը՝ նրբացնողը:

Հին զրչագրերում սոսկի գործածությունը խիստ հազվագեղազ ու սահմանափակ է եղել:

* Տե՛ս նաև Խորագով մեր Հոդվածը «Եղմիածին» ամսագրի 1958 թվականի № թում, էջ 54:

¹ Հ. Գ. Ավետիքյան. «Քերականութիւն հայկական», Վենետիկ, 1815, էջ 559:

² Խումբ տեղում, էջ 554:

³ Հ. Մ. Զամշյան, «Քերականութիւն Հայկական լեզուի», Մովսես, 1859, էջ 240:

Բաղաձայն տառերի արտաքերության մեջ նման ստորաբաժանումների կարիքը, ինչպես երևում է, մեր լեզուն չի ճանաչել, ուստի սոսկը և չնշին գործածություն է ունեցել, և արագորեն հանվել է գործածությունից:

Հին զրչագրերից մի քանիսում սոսկը գործածվել է իսկ, պէս պէս, արագ և ալ բառերի վրա (տե՛ս Հայկական ՍՍԸ Պետական մատենադարանի ձեռագիր № № 1390, 1920 և 2373):

ԱՊԱԹԱՐՑ

Ապաթարց նշանը ևս հին քերականների կողմից դասված է առողքանության նշանների շարքում: Այս նշանի մասին ևս առաջին հիշատակությանը հանդիպում ենք. Եւ է դարերի քերականական ձեռագրերում, որը նույնությամբ շարունակվում է քերականությանը նվիրված հետագա բոլոր աշխատություններում: Ապաթարցի մասին Դավիթ քերականը հետևյալն է ասում. «Իսկ ապաթարցդ եղեալ ինի նշան վասն ունելոյ զձայնաւորսն առ ի պարզ ասելոյ զրանն. առաջ իմն՝ հանեալ այրի և զնելոյ զդա ի վերայ տեղւոյն ասացես ապաթարց»⁴:

Հետևյալով հունական քերականությանը, հայ մեկնիլները ապաթարցի կանոնը նույնությամբ փորձել են կիրառել մեր լեզվում: Փաստորին մեր լեզվի հնագույն շրջանում ապաթարցի կիրառումը լայն տարածում չի ստացել և այնքան էլ գործնական նշանակություն չի ունեցել: Թերևս այս է պատճառը, որ հետագա շրջանի քերականներից մեկը՝ Հ. Վ. Զալըխյանը փորձում է այդ նշանը համարել ելքուպական ազգերից առած

⁴ Ն. Աղոնց, «Արուեստ Դիոնիսեալ քերականի և հայ մեկնութիւնը նորին», Պետերբուրգ, 1915, էջ 124:

Հետագա կոլխառություն։ Այդ մասին նա գրում է. «Թանի մ'ուրիշ նշաններ՝ նոր (արևմբայլա) ազգաց ուղղագրութենք առնված կործածվին որ են՝ ապաթարց» (1), շակերտ («») և փակագիծ («»)։

Ի դեպ, ամենք, որ ամեն բան եվրոպականի ազգեցությամբ բացատրելու միտումը սխալ է և բիել է մեր անցյալ շրջանի գրավոր խոսքի վերաբերյալ ուսումնասիրությունների բացակայությունից։ Օրինակ՝ շակերտը հայ գրչության մեջ շատ ավելի վաղ է երևցել (Թ դար), քան եվրոպական ազգերի գրավոր խոսքում։ Այս մասին մենք ավելի մանրամասն կիսուենք իր տեղում։

«Քիչ թե շատ, — գրում է գոկտոր Գ. Զահուկյանը, — գործնական արժեք կարող է ին ունենալ պարբեր նշանները միայն, թեև դրանցից պապթարցի կարիքը հայերենում համեմատարար ավելի քիչ էր զգացվում, քան հունարենում»⁶։

Ապաթարցի գործածությունը իրոք որ շափառանց սահմանափակ է հին գրագրերում։ Ապաթարց կոչվածը սովորական ստորակետի նման մի նշան է, որ դրվել է ի նախդիրի, օժանդակ բայերի և այլ բառերի վրա։ Այս ձևին զուգահեռ գործածվել է նաև գիծը։ Մեր կարծիքով, պապթարց նշանը չի գործածվել հայոց լեզվում նրա համար, որ սրան զուգընթաց հնում ձայնավորների սղման համար գոյություն են ունեցել համառոտագրության կամ սղման պայմանական այլևայլ նշաններ։

Քերականները, օրինակ, խոսելով առողջանության տաս նշանի մասին, պապթարցի համար որպես օրինակ հիշատակում են միայն արէնս՝ ուսույց բառը, մինչդեռ, ինչպես քերականական աշխատություններում, այնպես էլ այլ թեմաներով գրված ձեռագրերում, փոխանակ այդ ձևի հանդիպում ենք բազմաթիվ բառերի, որոնց մեջ ձայնավոր տառերը սղոված են և սղումը ցուց տալու համար այդ տառերի փոխարեն դրված են զանազան նշաններ։

Ապաթարց նշանի գործածության ծավալումը տեղի է ունենում աշխարհաբարի շըրջանում⁷։

5 Հ. Գ. Զալլիյան, «Քերականութիւն Հայկակեան լեզվի», Վիեննա, 1885, էջ 498։

6 Գ. Զանուլյան, «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայուսանում», Երևան, 1954, էջ 96։

7 Այս մասին տե՛ս մեր «Հայերենի կետագրությունը աշխարհաբարի շըրջանում» աշխատությունը, տպագրված «Հայոց լեզվի գասավանդման հարցեր» ժողովածուում, Երևան, 1958, էջ 139—145։

Ենթամասեն, ենթամաս զայ օսօռօս օս Տողագործի գաղափարը եղել է դեռևս ծղարից սկսած։ Տողագործի համար անցյալում հատուկ կանոն չի եղել Մինչև տղի վերջը տվյալ բարից քանի տառ տեղափորվել է, այնքանն էլ գրել են, իսկ մնացած տառը կամ տառերը տարել են հաջորդ տողը, եղել են գեղեցիք, երբ նախորդ տղում մնացել է բարի միայն մի տառը, կամ հաջորդ տղողի է տարվել բարի դարձալ միայն մի տառը։ Նշանակում է, տղագործի համար գործել է մեխանիկական տղագարձման սկզբունքը, այն է՝ գրել մինչև տղողի վերջը բարից այնքան տառ, որքան կտեղափորվի, իսկ մնացած տառերը տանել հաջորդ տղող։

Տողագործի համար որպես կետագրական նշան հին քերականական գրչագրերում հիշատակում է ներամայն, ենթամաս կամ ենթամաս տերմինը, որը սակայն, գործածության մեջ չենք տեսնում հին ձեռագրերում։ Այս առիթով պրոֆ. Ա. Արքահամյանը գրում է. «Մինչև 13-րդ դարը գրված ձեռագրերում գրեթե մեզ չի հանդիպում գործածաման նշանը — ենթամասն։ Մեզ հայտնի հնագույն ձեռագրերից մեկը, ուր հանդիպում ենք տղագարձման նշանի, Մովսես Կաղանկատվացու 1289 թվականի ընդորինակությունն է։ Տողագործման նշանը դրվում է ոչ թե վերջացող տղողի վրա, այլ տողով վերըում»⁸։

Տողագործի նշանի գործածության սկիզբը շ. Հ. Տաշյանը համարում է Ժե դարի սկիզբը. «Մյուս ամենքը՝ ըլլա երկաթագիր, ըլլա բոլոր կամ նոտր՝ առանց տղագարձի նշանի կգրեն։ Ալիշանի շորս համագրությունքն ալ հատկապես այս նախակով աշբե անցնելով և հայրյուրավոր ճշգրտապատկերներ պրատելով մինչև Ժե դար և ոչ մեկ ձեռագիր գտանք, որ գործածե նույնը։ Ամենքը բառերը տղավերշին կրածնեն ըստ կամս առանց կանոնի և առանց հատուկ նշանի»⁹։

Խոսելով առողջանության նշանների մասին՝ Դավիթ քերականը գրում է. «Եւ ենթամայն և ստորատդ հակառակին միմեանց. ենթամայնդ ի խաննեալ զրանդ իրը թէ ալքէնս ուսույց, իսկ ստորատդ ի բաժանել զոյն»¹⁰։

Իրոք, ենթամային, որպես տղագարձի նշանի, չենք հանդիպում հնագույն արձանագրություններում և ձեռագրերում։ Այդ նշանի գործածությանը հանդիպում ենք հետագա ձեռագրերում, Ժե դարից սկսած։ Ենթաման գործածվել է ոչ կանոնավորապես, մերթ

8 Ա. Արքահամյան, «Համառոտ ուրվագիծ հայկական պահուպարֆիայի», Երևան, 1940, էջ 53։

9 Հ. Հ. Տաշյան, «Ալիքարդ մը հայ հնագրության վրա», Վիեննա, 1898, էջ 162—163։

10 Ա. Աղոնց, հիշված աշխատությունը, էջ 124։

դրվել է, մերթ չի դրվել Որպես նշան՝ սկըզբում գործածվել է կիսաղեղի ձևով և դրվել է տողի ներքեւում, վերջին տառի տակը, երբեմն էլ՝ վերնում, իսկ հետագայում կամաց կամաց դարձել է ուղիղ գիծ և դրվել է տողի վրա: Եղել են գործածության այլ դեպքեր՝ երկու կետ, երկու ուղղահայց կամ շեղ գծիներ, ժամանակակից տարրերվելու համար նաև դաւնում է կիսաղեղաձև գծիկ:

Քերականներից ոմանց մոտ ենթամնան (ենթամանը) չնայած հիշատակված է, սակայն նրա գործածությունը ցուց է տալիս, որ այդ նշանը կիսաղեղի ձևով դրվել է բարդ բառերի առաջին բաղադրիչի վերջին և երկրորդ բաղադրիչի առաջին տառերի ներքեւում և ցուց է տվել՝ նրանց միացությունը, ճիշտ այն հասկացողությամբ, որ որոշ քերականներ գործածել են՝ սի խառնեալ զրանդ»: Այսպիսով, ենթամնան անցյալի քերականների մոտ կատարել է հողակապի դեր և միացը բառի, մասնիկը բառի, կամ բառի անշատ մասերը միմյանց հետ:

Վ. Սևանցու 1041 թվականի հիշատակարանում մի տեղ գործածվել է ենթամնա, սակայն դրվել է ոչ թե կիսվող, տողադարձ արվող բառի նախորդ տողում մնացող մասից հետո, այլ հաջորդ տողը տարվող մասի և նրան հաջորդող բառի միջև, որպեսզի կարդալիս նրանք միմյանց հետ չմիացվեն. օրինակ՝

ան

այցելու-թափառեալ:

Ուշադրության արժանի է այն, որ ենթամնան դրված է տողի վրա, իր սովորական տեղում:

Կան ձեռագրեր, որոնց մեջ ենթամնան գործածվել է վերևից բերանը բաց կլորակի (Ն. Լամբրոնացու «Մեկնությին պատարագի» աշխատության մեջ, 1332 թ.), կամ ուղիղ գծի ձևով (Հ. Դ. Ալիշան, «Սիսական», էջ 487):

Ուստատուրի արձանագրության մեջ որպես տողադարձի նշան գործածվել է երկու գծիկ (վանա=կան):

Ենթամնայի գործածությունը, սակայն, հետևողական բնույթը լի կրել, շատ ձեռագրերում գրիչները մերթ ենթամնա գործածում են, մերթ էլ չեն գործածում. օրինակ՝ Մաղարդա վանքի Ավետարանում յա բռակալարին, Մաղարդի, հարաւա կոյս և այլ բառեր տողադարձված են առանց ենթամնայի (Հ. Դ. Ալիշան, «Սիսական», էջ 552):

Եղիկարդի Մաշտոցում (1464 թ.) տողադարձի նշանը որպես ուղիղ գիծ դրված է նախորդ տողում մնացող վանկից հետո, առ-

դի վրա, օրինակ՝ եզմիա-ծին (Հ. Դ. Ալիշան, «Ալյարատ», էջ 198):

Տողադարձի կարգավորման, համատարած կիրառման և ենթամնայի գործածության հարցը ծավալվում և կանոնավորվում է միայն աշխարհաբարի շրջանում:

ՍՏՈՐԱԾ

Առողանության նշաններից վերջինը համարվել է ստորատը: Ստորատի մասին տեղեկություններ դարձյալ ստանում ենք քերականության հարցերին նվիրված աշխատություններից միայն:

Խոսելով առողանության նշանների մասին, քերական Մովսես Քերթողն ասում է, «Ստորատ ի խոնարհ կայ, որ է յետին (թէ արարից զայս)»¹¹: Հետագա որոշ քերականներ՝ Հ. Ա. Այտընյան, Հ. Մ. Զամշյան, Հ. Գ. Ավետիքյան և ուրիշներ, ստորատի մասին չեն խոսում: Առողանության մյուս նշանների համեմատությամբ ստորատը բոլորից քիչ է գործածվել և կարճ ժամանակից հետո որպես կետադրական ինքնուրույն նշան դադարել է գործածվելուց ու դուրս է եկել գրավոր խոսքից: Ստորատի գերը շատ անորոշ է և նսեմ: Ստորատի հարցը վերջին շրջանում քննության է առել բանասիրական գիտությունների դոկտոր Գ. Զահուկյանը: Առողանության նշանների քննության առնչությամբ, նա ստորատը քննորոշում է որպես երկու բառերի սահմանները ճիշտ որոշող մի նշան՝ Անդրադառնալով Սյունեցու քերականական հայցքների քննությանը, դոկտ. Գ. Զահուկյանը Սյունեցուց կատարում է հետևյալ մեջբերումը. «պատահման» նշանները («ապաթարց, ենթամայն և ստորատ») ցուց են տալիս «զբացարարձումն գրոյ ի միջոց վանդին, կամ կցեալ զգիրն ի յանգի վանդին, և կամ ի բաց բառնալ դարձեալ ի վանդին»¹²:

Հետագայում Գ. Զահուկյանը Սկեռացու աշխատության քննության կապակցությամբ միայն նշում է, որ Սկեռացին ստորատը շփոթել է ստորակետի հետ և մտցրել տրոհության խմբի մեջ: Սրանով վերջանում են տեղեկությունները ստորատի մասին:

Եթե ստորատը իրոք հնում, երբ գոյություն չուներ բառանշատ գրություն, գործածվել է բառերի սահմանները ճիշտ որոշելու համար, ապա այն պետք է դրված լինի գրեթե բոլոր բառերի վերջին տառերի վրա, մինչդեռ մերձեռագրերում չենք հանդիպում այլպիսի փաստի: Դժուախտաբար քերականները կետադրական յուրաքանչյուր նշան բացատրե-

11 Ն. Աղոնց, հիշակած աշխատությունը, էջ 178:

12 Գ. Զահուկյան, հիշակած ախատությունը, էջ 95:

13 Կուն տեղում, էջ 188:— Ն. Աղոնց, հիշակած աշխատությունը, էջ 217:

լիս շեն թերել համապատասխան օրինակներ, որպեսզի, զիտելով դրանք, մենք կարողանայինք ճիշտ եղանակացությունների հանգել թնական է, թ—ժ դարերի ձեռագրերում և պատափիկներում չել կարող գործածվել այս նշանը, որովհետև, ինչպես ասել ենք, այդ ձեռագրերում վերջակետից (մի կետ), միշտիկ կետից, ստորագրելուց, շակերտից և պատիվ կոչված նշանից բացի, ուրիշ և ոչ մի նշան չի գործածվել Հետաքա դարերի ձեռագրերում էլ այդ նշանի գործածությունը այնքան հազվագեց է, որ Ալինելու հավասարազոր է: Զեր տեսակետից ստորագր նման է ստորակետին: Դիտելով ձեռագրերը, մենք նկատում ենք ստորատի գործածությունը բառի վերջին տարի կամ էական բայի վրա:

№ 2371, 4268 և 1007 ձեռագրերում գործածված ստորատները գեռևս շեն կարող անվիճելիորեն ապացուցել եղած սահմանումը և ցուց տալ, որ եղած կետերը ստորատներ են:

№ 4268 ձեռագրում մեզ (վերջին) բառի վրա դրված նշանը ձեռվ նման է նույն նախադասության մեջ եղած աստ բառի վրա դրված նշանին: Եթե այն պետք է ցուց տար առանձին բառերը, այսինքն հանդես գար բառատրոհի դերում, ապա նշված օրինակի վերջին բառի վրա հարկ շկար դնելու այդ նշանը, որովհետև նախադասությունը վերջանում է և փակվում վերջակետով:

Նույն համոզման ենք գալիս, երբ դիտում ենք բառից գրությամբ գրված մի շարք ձեռագրեր: Այս ձեռագրերում չենք հանդիպում ստորատի, որպես ամեն մի բառի վրա դրվող բառատրոհի նշանի, որը ցուց տար այդ բառերի սահմանազատումը միմյանցից:

Մեր խորին համոզմամբ, այս նշանը բնակ չի համապատասխանել մեր լեզվի պահանջներին, չի ունեցել գործնական որևէ նշանակություն, ուստի՝ որպես օտար և մեխանիկական փոխառություն այն դուրս է ընկել մեր կետադրության սիստեմից: Կարծում ենք, որ քերական Սկեռացին իր ժամանակին միանգամայն ճիշտ է փառվել, երբ այդ նշանը դասել է տրոնության խմբի մեջ: Հետագա դարերում ստորատը ձուլվում է ստորակետի հետ:



Քերականների կողմից հիշատակված կետադրական երեք և առողջանության տաս նշաններից բացի, որոնց մասին խոսեցինք, գրավոր խոսքում հանդիպում ենք նաև կետադրական այլ նշանների, որոնք գրիշների և քերականների կողմից փաստորեն գործածվել են, սակայն դրանց վերաբերյալ քերականությանը նվիրված աշխատություններում

որևէ հիշատակություն չկա: Դրանք են՝ լերկը, մակակետը, չակերտը և գծիկը: Դրանցից, օրինակ, չակերտը ունի և՛ վաղ գործածություն, և՛ լայն տարածում: Արդ, ծանոթանանք այդ նշաններին:

Լերկ

Լերկը որպես կետադրական նշան չի հշատակվում ինչպես վաղ անցյալի, այնպիս էլ հետագա շրջանի քերականական աշխատություններում և ձեռնարկներում: Այս նշանի կոնկրետ գործածությանը չենք հանդիպում նաև մինչև ժդ դարը եղած ձեռագրերում:

Պրոֆ. Ա. Աբրահամյանն այդ մասին գրում է, թե լերկը ավելի ուշ շրջանում դրվել է աւ լրկարրապի վրա, այն օ կարդալու համար: Մյուս հեղինակներն էլ որևէ ակնարկ չեն անում այդ նշանի առաջացման մասին:

Լերկը որպես կետադրական նշան իրոք մուտք է գործել մեր գրավոր խոսքի մեջ հետագայում, ժթ դարից և գործածվել է ուղղագրական նպատակներով: Մրա գործածությունը նույնպես շարունակվել է մինչև ժթ դարի սկիզբը, որից հետո ամբողջովին հանվել է գործածությունից:

Լերկը դրվել է աւ լրկարրապի վրա, որպեսզի այն օ կարդացվի: յաշեցին—յօշեցին (ձեռագիր № 2371), յափք—յօդք (ձեռագիր № 1115), աւինաւր—օրինաւր (ձեռագիր № 1418):

«Ճորժամ որ սպանին տիտանեանքն զԴիոնսիոսին աստուածազին, և անդամ անդամ կոտորեցին և յաշեցին, նա տանէին զոլիսարս ի զոհն և յաշեցին անդամ անդամ, և գոռողածայն լային աստուածարար և ասէին, թէ զերդ զերզ՝ ո՞վ լինի և կամ ո՞վ լուո զքո տեղնա (ձեռագիր № 2371, 1268 թ.): Յեարն (եօթն) յեղանակի, եարներազ (եօթներորդ) (ձեռագիր № 1840, 1172 թ.): Նույն ձեռագրում կա նաև գրության լեօրն ձեզ, առանց լերկ նշանի (էջ 3ր), բարեխաւա, զարցութիւն, զալաւրս և ալլն (ձեռագիր № 7435):

Աւինեաց, աւձ (օրհնեաց, օձ) բառերի վրա չկա լերկ նշանը: № 1920 ձեռագրում (1569 թ.), «Յայնձամ տայր նմա պատիսը աւրինեաց» նախադասության մեջ ասինեաց բառի վրա դրված է թավ նշանը:

№ 1007 ձեռագրում (ժԱ. ժԲ դար) խաւսեց, զարինեաւր բառերը նույնպես գրված են առանց լերկի:

ՄԱԿԱԿԵՏ

Մակակետը որպես կետադրական նշան չի հիշատակվում գրաբարի շրջանի քերականների աշխատություններում: Մակակետ տեր-

մինը հորինել են հետագա շրջանի քերական-ները և անվանել են ի նախդիրի սեփական նշան:

Հայկական հին ձեռագրերում ի նախդիրը գրվում էր հաջորդ բառի հետ միասին և որպեսզի նախդիրն անջատ կարդացվեր կամ առհասարակ անջատ հասկացվեր, նրա գլխին կամ աշ ու ձախ կողմում դրվում էր ստորապետ, երբեմն էլ փոքրիկ գծիկի նման նշան: Այսպիսով, քերականական աշխատություններում այն չի ձևակերպվել, բայց կյանքում, գրավոր խոսքի մեջ գործածվել է: Քանի որ կատարված փաստի առաջ ենք կանգնած, ուստի պետք է խոսել նրա մասին:

Լազարյան ճեմարանի ավետարանում մակակետ նշանի կիրառման դեպքեր շնոր նկատում, օրինակ՝ «այլ իրեւ էջ նա ի լեռնէ անտի, եզիս զմի ի ծառայակցաց իւրց, խկ որ ելանէ ի բերանոյն ի նոցանէ թէ ուր ծեանի Քրիստոսն, ոչինչ կրտսեր ես ի յիշխանս Յուղայ, ի ժէն ելցէ ինձ իշխան» և այլ նման նախադասությունների գործածությունն սկսվում է ժ դարից, էջմիածնի Ավետարանից սկսած (989 թ.):

Ի դեպ, պետք է ասել, որ մակակետի գործածությունը ևս սիստեմատիկ բնույթ չի կրել. որոշ ձեռագրերում, կամ բոլորովին չի գործածվել մակակետը, կամ այնքան սակավ է գործածվել, որ այդ բանը աննկատ է յնում (օրինակ՝ № 2373, 2587, 4268, 1577, 3784, 2037, 1324 ձեռագրերում):

Մակակետի գործածությունը շարունակվում է նաև աշխարհաբարի շրջանում ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության գրավոր խոսքի մեջ: Հետագայում արևելահայերի մոտ (մամուկում, գրականության մեջ և քերականության դասագրքերում) կամաց-կամաց դադարում է այս նշանի գործածությունը և բոլորովին դուրս է գալիս գրավոր խոսքից, խկ արևմտահայության մամուկում և գրականության մեջ մինչև այսօր էլ դեռ շարունակվում է նրա գործածությունը զեղված ձայնավորների տեղ:

Աշխարհաբարի շրջանի ականավոր քերական Հ. Ա. Այտընյանը մակակետը համարում է հետին դարերի գյուտ և գտնում, որ այժմ, երբ սովորություն է դարձել ի նախդիրը նրան հաջորդող բառից անջատ գրել, իբրև ավելորդ նշան, մակակետն սկսել է դադարել գործածվելուց: Ինքը՝ Այտընյանն իր ստվարածավալ աշխատության մեջ մակակետ չի գործածում: Պետք է ասել, որ ի տառի վրա մակակետ չն գործածել արևմտահայ մտավորականներից շատերը, ինչպես նաև քերականության դասագրքեր կազմողների մեծ մասը:

Մակակետի գործածությունը հանդիպում ենք արևմտահայ գրականության մեջ ու մա-

մուլում, ինձիցյանի մոտ, «Բազմավեպ»-ում, «Միություն» թերթում, Հ. Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ում և հայ լեզվի երկու յուղերի քերականության դասագրքերի հեղինակներ Վ. Սրապի, Հ. Ա. Բագրատունու, Հ. Գ. Ավետիքյանի, Մելիք-Թանգյանի և այլոց աշխատություններում:

Սակայն քերականության որոշ դասագրքերի հեղինակներ իրենց գրքերում ավանդապահորն նշում են մակակետի գործածության մասին, իսկ իրենք չեն գործածում այն՝ հետևելով կենդանի լեզվի գործուն օրինաշափություններին:

Մակակետ չեն գործածել «Հանդես ամսօրյա»-ն, քերականության դասագրքերի հեղինակներ Զապելն ու Ասատուրը, արևելահայ հատվածից Բահամբյանը, Տեր-Ղևոնդյանը, Արաբաշյանը, Վանցյանը, Գ. Այվազյանը, Ս. Պալասանյանը, Մ. Աբեղյանը և ուրիշներ, արևելահայ մամուլը և արևմտահայ գրողների մի մասը:

Հ. Արսեն Բագրատունին իր «Տարերը հայրէնի քերականութեան» աշխատության մեջ (Վենետիկ, 1874 թ.), խոսելով մակակետի մասին, նշում է գործածության այնպիսի դեպքեր, որոնք խիստ հաղվաղեա են: Օրինակ՝ այդ, այլ, դանդին, դանլին, եղուզակ, ելուզակ, զամբար, լամբար, փիլիսոփայ, փիլիսոփայ և այլ բառերի ու և տառերի վրա նա մակակետ է դրել: Այլ բառի լտառի վրա անցյալու ևս դրվել է մակակետ, սակայն այնքան սակավ է դրա գործածությունը, որ միայն բացառություն կարող է կազմել: Հ. Ա. Բագրատունու կողմից նշանակած այս բառերի վրա գործածվող մակակետը ևս խիստ բացառություն է և գրավոր խոսքի մեջ գրեթե չկա: Հ. Ա. Բագրատունին ուղղակի ավանդապահության կարգով կրկնել է կետադրական օրենքի տակ գեռաւ շմտած և լեզվի էլությունից ըրխող մասնակի դեպքերը:

Այսպիսով, աշխարհաբարը չի ճանաչել ի նախդիրի վրա դրվող մակակետը, որի պատճառով այն գործածությունից դուրս է եկել:

ԶԱԿԵՐԸ

Զակերտը նույնապես գրաբարի շրջանի քերականների աշխատություններում չի հիշատակված որպես կետադրական նշան: Սակայն շակերտի գործածությանը մենք հանդիպում ենք թե՛ գրչագրերում և թե՛ քերականական որոշ աշխատություններում:

Զակերտի մասին հիշատակություն կահետագա քերականական աշխատություններում: Հ. Ա. Այտընյանը քերականությանը նվիրված իր ծավալուն աշխատության մեջ այդ հարցին հարևանցիորեն անդրադառնալով գրում է. «Հայերեն շակերտին հին ձև՝ որ հիմա խափանված է, նոտրագիրը շայի

միս շեն բերել համապատասխան օրինակներ, որպեսզի, դիտելով դրանք, մենք կարողանայինք ճիշտ եղակացությունների հանգիւ, Բնական է, թու—ժ դարերի ձեռագրերում և պատարիկներում չէր կարող գործածվել այս նշանը, որովհետև, ինչպես ասել ենք, այդ ձեռագրերում վերջակետից (մի կետ), միշակետից, ստորագրետից, շակերտից և պատիվ կոչված նշանից բացի, ուրիշ և ոչ մի նշան չի գործածվել Հետագա դարերի ձեռագրերում էլ այդ նշանի գործածությունը այնքան հազվադեպ է, որ Ալինելու հավասարազոր է: Զեկ տեսակետից ստորատը նման է ստորակետին: Դիտելով ձեռագրերը, մենք նկատում ենք ստորատի գործածությունը բառի վերջին տառի կամ էական բայի վրա:

№ 2371, 4268 և 1007 ձեռագրերում գործածված ստորատները զեռևս շեն կարող անվիճելիորեն ապացուցել եղած սահմանումը և ցուց տալ, որ եղած կետերը ստորատներ են:

№ 4268 ձեռագրում մեզ (վերջին) բառի վրա դրված նշանը ձևով նման է նույն նախադասության մեջ եղած ասա բառի վրա դրված նշանին: Եթե այն պետք է ցուց տար առանձին բառերը, այսինքն հանդես գար բառատրոհիչի դերում, ապա նշված օրինակի վերջին բառի վրա հարկ չկար դնելու այդ նշանը, որովհետև նախադասությունը վերջանում է և փակվում վերջակետով:

Նույն համոզման ենք գալիս, երբ դիտում ենք բառկից գործիւամբ գրված մի շարք ձեռագրեր: Այս ձեռագրերում չենք հանդիպում ստորատի, որպես ամեն մի բառի վրա դրվող բառատրոհիչի նշանի, որը ցուց տար այդ բառերի սահմանազատումը միմյանցից:

Մեր խորին համոզմամբ, այս նշանը բնակ չի համապատասխանել մեր լեզվի պահանջներին, չի ունեցել գործնական որևէ նշանակություն, ուստի որպես օտար և մեխանիկական փոխառություն այն դորս է ընկել մեր կետադրության սիստեմից: Կարծում ենք, որ քերական Սկեռացին իր ժամանակին միանգամայն ճիշտ է փառվել, երբ այդ նշանը դասել է տրոնության խմբի մեջ: Հետոսդա դարերում ստորատը ծովալում է ստորակետի հետ:



Քերականների կողմից հիշատակված կետադրական երեք և առողջանության տասնշաններից բացի, որոնց մասին խոսեցինք, գրավոր խոսքում հանդիպում ենք նաև կետադրական այլ նշանների, որոնք գրիյների և քերականների կողմից փաստորեն գործածվել են, սակայն դրանց վերաբերյալ քերականությանը նվիրված աշխատություններում

որևէ հիշատակություն չկա: Դրանք են՝ լերկը, մակակետը, շակերտը և գծիկը: Դրանցից, օրինակ, շակերտը ունի և վաղ գործածություն, և լայն տարածում:

Արդ, ծանոթանանք այդ նշաններին:

ԼԵՐԿ

Լերկը որպես կետադրական նշան չի հիշատակվում ինչպես վաղ անցյալի, այնպիսի էլ հետագա շրջանի քերականական աշխատություններում և ձեռնարկներում: Այս նշանի կոնկրետ գործածությանը չենք հանդիպում նաև մինչև ժդ դարը եղած ձեռագրերում:

Պրոֆ. Ա. Արքահամյանն այդ մասին գրում է, թե լերկը ավելի ուշ շրջանում դրվել է աւ լրկարրատի վրա, այն օ կարդալու համար: Մյուս հեղինակներն էլ որևէ ակնարկ չեն անում այդ նշանի առաջացման մասին:

Լերկը որպես կետադրական նշան իրոք մուտք է գործել մեր գրավոր խոսքի մեջ հետագայում, ժի՞ դարից և գործածվել է ուղղագրական նպատակներով: Սրա գործածությունը նույնպես շարունակվել է մինչև ժժ դարի սկիզբը, որից հետո ամբողջովին հանվել է գործածությունից:

Լերկը գրվել է աւ լրկարրատի վրա, որպեսզի այն օ կարդացվի: յաշեցին—յօշեցին (ձեռագիր № 2371), յալք—յօլք (ձեռագիր № 1115), աւրինաւոր—օրինաւոր (ձեռագիր № 1418):

«Յորժամ որ սպանին տիտաննեանքն զԴիոնիսիոս աստուածազին, և անդամ անդամ կոտորեցին և յաշեցին, նա տանէին զոշխարսն ի զոհն և յաշէին անդամ անդամ, և գոռզածայն լային աստուածաբար և ասէին, թէ զերդ զերզ՝ ո՞վ լինի և կամ ո՞վ լու զքու տեղն» (ձեռագիր № 2371, 1268 թ.): Յեալին (Յօթին) յեղանակի, եալրներադ (Յօթներորդ) (ձեռագիր № 1840, 1172 թ.): նույն ձեռագրում կա նաև գրության լեօրն ձեր, առանց լերկ նշանի (էջ 3ը), բարեխաւ, զարութիւն, զարաւրս և այլն (ձեռագիր № 7435):

Աւրինեաց, աւձ (օրհնեաց, օձ) բառերի վրա չկա լերկ նշանը: № 1920 ձեռագրում (1569 թ.), «Յայնձամ տայր նմա պատին ըստ աւրինաց» նախադասության մեջ աւրինաց բառի վրա դրված է թավ նշանը:

№ 1007 ձեռագրում (ժԱ—ժԲ դար) խաւսեց, զարինեաւոր բառերը նույնպես գրված են առանց լերկի:

ՄԱԿԱԿԵՏ

Մակակետը որպես կետադրական նշան չի հիշատակվում գրաբարի շրջանի քերականների աշխատություններում: Մակակետ տեր-

Մինը հորինել են հետագա շրջանի քերական-ները և անվանել են ի նախդրի սեփական նշան:

Հայկական հին ձեռագրերում ի նախդրը գրվում էր հաջորդ բառի հետ միասին և որպեսզի նախդրն անշատ կարդացվեր կամ առհասարակ անշատ հասկացվեր, նրա գլխին կամ աշ ու ձախ կողմում դրվում էր ստորակետ, երբեմն էլ փոքրիկ գծիկի նման նշան: Այսպիսով, քերականական աշխատություններում այն չի ձևակերպվել, բայց կյանքում, գրավոր խոսքի մեջ գործածվել է: Քանի որ կատարված փաստի առաջ ենք կանգնած, ուստի պետք է խոսել նրա մասին:

Լազարյան ճեմարանի ավետարանում մակակետ նշանի կիրառման դեպքեր չենք նկատում, օրինակ՝ «Ալ իրեւ էջ նա ի լեռնէ անտի, եզիս զմի ի ծառայակցաց իւրց, խկ որ ելանէ ի բերանոյն ի նոցանէ թէ ուր ծեանի Քրիստոսն, ոչինչ կրտսեր ես ի յիշխան Յուղայ, ի ժէն ելցէ ինձ իշխան» և այլ նման նախադասությունների գործածությունն սկսվում է ժ դարից, էջմիածնի Ավետարանից սկսած (989 թ.):

Ի դեպ, պետք է ասել, որ մակակետի գործածությունը ևս սիստեմատիկ բնույթ չի կրել. որոշ ձեռագրերում, կամ բոլորովին չի գործածվել մակակետը, կամ այնքան սակավ է գործածվել, որ այդ բանը աննկատ է յնում (օրինակ՝ № 2373, 2587, 4268, 1577, 3784, 2037, 1324 ձեռագրերում):

Մակակետի գործածությունը շարունակվում է նաև աշխարհաբարի շրջանում ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության գրավոր խոսքի մեջ: Հետագայում արևելահայերի մոտ (մամուկում, գրականության մեջ և քերականության դասագրքերում) կամաց-կամաց դադարում է այս նշանի գործածությունը և բոլորովին դուրս է գալիս գրավոր խոսքից, խկ արևմտահայության մամուկում և գրականության մեջ մինչև այսօր էլ գետ շարունակվում է նրա գործածությունը զեղչված ձայնավորների տեղի:

Աշխարհաբարի շրջանի ականավոր քերական Հ. Ա. Այտընյանը մակակետը համարում է հետին դարերի գյուտ և գտնում, որ այժմ, երբ սովորություն է դարձել ի նախդրը նրան հաջորդող բառից անշատ գրել, իրեն ավելորդ նշան, մակակետն սկսել է դադարել գործածվելուց: Ինքը՝ Այտընյանն իր ստվարածավալ աշխատության մեջ մակակետ չի գործածում: Պետք է ասել, որ ի տառի վրա մակակետ չեն գործածնել արևմտահայ մտավորականներից շատերը, ինչպես նաև քերականության դասագրքեր կազմողների մեծ մասը:

Մակակետի գործածությանը հանդիպում ենք արևմտահայ գրականության մեջ ու մա-

մուլում, ինձիմանի մոտ, «Բազմավեպ»-ում, «Միություն» թերթում, Հ. Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ում և հայ լեզվի երկու ճյուղերի քերականության դասագրքերի հեղինակներ Վ. Սրապի, Հ. Ա. Բագրատունու, Հ. Գ. Ավետիքյանի, Մելիք-Թանգյանի և այլոց աշխատություններում:

Սակայն քերականության որոշ դասագրքերի հեղինակներ իրենց գրքերում ավանդապահութեան նշում են մակակետի գործածության մասին, իսկ իրենք չեն գործածում այն՝ հետևելով կենդանի լեզվի գործուն օրինաշափություններին:

Մակակետ չեն գործածել «Հանդես» ամսօրյաց-ն, քերականության դասագրքերի հեղինակներ Զապելն ու Ասատուրը, արևելահայ հատվածից Բահամբյանը, Տեր-Ղևոնդյանը, Արաբաշյանը, Վանցյանը, Գ. Այվազյանը, Ս. Պալասյանը, Ա. Աբեղյանը և ուրիշներ, արևելահայ մամուլը և արևմտահայ գրողների մի մասը:

Հ. Արսեն Բագրատունին իր «Տարերք հայրէնի քերականության» աշխատության մեջ (Վենետիկ, 1874 թ.), խոսելով մակակետի մասին, նշում է գործածության այնպիսի դեպքեր, որոնք խիստ հազվադեպ են: Օրինակ՝ այդ, այլ, դանդին, դանիին, եղուզակ, կամբար, լամբար, փիլիսոփայ, փիլիսոփայ և այլ բառերի ու և տառերի վրա նա մակակետ է դրել Այլ բառի լ տառի վրա անցյալում ևս դրվել է մակակետ, սակայն այնքան սակավ է դրա գործածությունը, որ միայն բացառություն կարող է կազմել: Հ. Ա. Բագրատունու կողմից նշան այս բառերի վրա գործածվող մակակետը ևս խիստ բացառություն է և գրավոր խոսքի մեջ գրեթե չկա: Հ. Ա. Բագրատունին ուղղակի ավանդապահության կարգով կրկնել է կետադրական օրենքի տակ գեռևս շմտած և լեզվի էությունից ըրխող մասնակի դեպքերը:

Այսպիսով, աշխարհաբարը չի ճանաչել ի նախդրի վրա դրվող մակակետը, որի պատճառով այն գործածությունից դուրս է եկել:

ԶԱԿԵՐԸ

Զակերություն նույնակա գրաբարի շրջանի քերականների աշխատություններում չի հիշատակված որպես կետադրական նշան: Սակայն շակերութիւն գործածությանը մենք հանդիպում ենք թե՛ գրչագրերում և թե՛ քերականական որոշ աշխատություններում:

Զակերութիւն մասն հիշատակություն կա հետագա քերականական աշխատություններում: Հ. Ա. Այտընյանը քերականությանը նվիրված իր ծավալուն աշխատության մեջ այդ հարցին հարևանցիորեն անդրադառնալով գրում է. «Հայերեն շակերութիւն հին ձև՝ որ հիմա խափանված է, նոտրագիր շայի

(շի) գլուխ մըն էր (7), որմե յուր անունն ալ առած է: Հիմբկվան ձևն եվրոպական է»¹⁴:

Այս հարցին հետագայում ավելի մանրայասն անդրադարձել է պրոֆ. Ա. Արքահամբյանը: «Չակերտը, — գրում է նա, — գործ է ածվում ուրիշի խոսքերը բերելու ժամանակ, ըստ որում, նա դրվում է ոչ թե տեքստի առջեցից միայն, ինչպես այժմ, այլ բերված տեքստի բոլոր տողերի միայն առջեցից: Նա ունի լատինական էս տառի ձև»¹⁵:

Այս ասածներից մեզ համար դեռևս շիպարզվում, թե հայերի մոտ ո՞ր դարից է սկսվել շակերտի գործածությունը, բացի մեջբերումներից էլ ի՞նչ դեպքերում է գործածվել և, վերջապես, ի՞նչ ձեւ է ունեցել նա:

Զակերտի մասին, ասացինք, որ հիշատակություն չկա հայ առաջին բերականների աշխատություններում: Բարեբախտաբար շակերտի գործածությանը մենք հանդիպում ենք հասած ամենահնագույն գրչագրերում՝ կազմարյան ճեմարանի լուսատիպ Ավետարանում և նույն դարի, թերևս մի քիչ էլ վաղ շրջանի, պատառիկներում:

Զակերտը հայ գրչագրերում գործածվել է երեք տեսակ՝ լատինական էս տառի, հայկական ստորակետի և հայկական շտառի գլխամասի ձևով, առանց ներքեւ ծալվող մազագծիկի:

Մենք հավանական ենք համարում Հ. Ա. Այտընյանի այն պնդումը, որ շակերտ անունը ծագած լինի շտառից, որովհետև նա որոշ տեղերում շատ նման է շին, միայն ներքեւ մազագծիկը կրնատած, Սակայն կարերն այս չէ, այլ այն, որ շակերտի գործածությունը մեր կետադրության սիստեմում մտել է շատ ավելի վաղ ժամանակներից, քան եվրոպական լեզուներում: Բացի այս, շակերտը մեր գրավոր խոսքի մեջ մերթ գործածվել է մեզ նշանով, մերթ էլ կրկնակի նշանով: Հատկապես շի գլուխ նմանվող ձևի կրկնակի գործածությունը շատ նման է արդի լեզվում գործածվող շակերտների ձևին, ուստի մենք համոզված ենք, որ նրա հետագա գործածությունը ևս պետք է ինքնուրույն համարել, հին ձևի վերամշակված տիպարը և ոչ թե «եվրոպական» փոխ առնվազաւությամբ:

Ուսաց լեզվին նվիրված աշխատություններից հայտնի է, որ եվրոպական գրականության մեջ շակերտները որպես կետադրական նշան մուտք են գործել հետագա ժամանակներում՝ ԺՇ դարի վերջերին, հե-

¹⁴ Հ. Ա. Այտընյան. «Քննական բերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի», Վիեննա, 1866, էջ 931.

¹⁵ Ա. Արքահամբյան, հիշված աշխատությունը, էջ 52:

տեապես մենք եվրոպացիներից այն փոխառնել չէինք կարող: «Արդեն տասնութերորդ դարի վերջերին, — մենք նկատում ենք նոր կետադրական նշանների՝ գծիկի, չակերտների և բազմակետի հանդես գալը: Այդ կետադրական նշանները գրավոր խոսքի մեջ են մտնում գրողների կողմից, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև բերականության և ուղղագրության դասագրքերում ու ձեռնարկներում»¹⁶:

Մեր ասածն ավելի է հիմնավորվում, եթե հետևում ենք հայ գրավոր խոսքի հետագաշրջանին: Աշխարհաբարի շրջանում դեռ երկար տարիներ հայ գրողները շարունակում են շակերտների գործածության հայկական ժին ձևով՝ շակերտները գնելով մեջբերումների յուրաքանչյուր տողի սկզբից և ոչ թե միայն սկզբից ու վերջից: Զեկի տեսակետից էլ մեր շակերտները շեն նմանվում եվրոպականներ: Եվրոպական լեզուներում գործածվելի է երկու ստորակետ, հակառակ ուղղություններով դրված, իսկ հայկականը անկյունավոր գծիկներ են, որը շատ նման է գրաբարի շրջանում եղած ձևին:

Մենք հաստատ համոզված ենք, որ հետագյում շակերտի մեջ մտցվել է միայն որոշ տեխնիկական փոփոխություն և ուրիշ ոչինչ: Այսպիսով, հայերենի շակերտը պետք է համարել միանգամայն ինքնուրույն կետադրական նշան և այն էլ շատ վաղ անցյալից գործածված:

Զակերտները մեր հնագույն ձեռագրերում, ինչպես և հետագա շրջանում, գործածվել են երեք իմաստով:

ա. Մի գեպօւմ դրվել են ուրիշից բերվող հատվածի յուրաքանչյուր տողի սկզբից՝ ցուց տալու համար, որ դա մեջբերում է (ցիտատ):

բ. Մի այլ գեպօւմ դրվել են հեղինակի խոսքի յուրաքանչյուր նոր հարցի կամ տըլյալ հարցի որեւ նոր հատկանիշը շարադրելու ժամանակ, որպեսզի լուսանցքի շակերտներին նայելով՝ ընթերցողը հետադիմար նկատի, որ նոր խոսք է ասվում, կամ տվյալ խոսքի մի նոր, այլ հատկանիշն է նշվում:

գ. Վերջապես, գործածվել է ուղղակի խոսքի գեպօւմ:

Բացի այս, հայերենում գործածվող շակերտի մասին պետք է ասել նաև այն, որ հնում ձեռագրերը գրվում էին երկու սյունակով, ուստի երկրորդ (աշ կողմի) սյունակի համար շակերտները դրվում էին աշ լուսանցքում:

¹⁶ Ա. Բ. Շապիր, «Թուաց կետադրության հիմունքները», Մոսկվա, 1955, էջ 17 (ուսւերեն):

Հայկական ձեռագրերում հանդիպում ենք նաև շակերտի ու պատիվ կոչված նշանի համատեղ գործածության: Լինում են նաև դեպքեր, երբ հեղինակը նոր պարբերության է անցնում և լուսանցքում մեկի փոխարեն դնում է երկու շակերտ, սակայն միմյանց տակ, ինչպես կոտորակալին թիվը, միմյանցից տրոհված գծիկով: Գրչագրերից մեկում նկատում ենք շակերտի գործածության հետաքրքիր մի այլ զեպք: Մերժությունը նախադասության սկզբում գրիշը շակերտի փոխարեն դնում է լատինական և նշանը: սա հավանաբար փոխարինում է համարակալության ձևին և ցուց է տալիս նախադասությունների անկախությունը:

Որոշ հեղինակներ նման շակերտները դնում են վերնադրի դիմաց, լուսանցքում, այն ավելի ցցում դարձնելու համար:

Վերջապես, գրիշները շակերտ են դնում այն ժամանակ, երբ ցուց են տալիս օգտագործված ցիտատի հեղինակն ու աղբյուրը:

Զակերտի գործածությունն ըստ էության ծավալվում, զարգանում և կանոնավորվում է միայն աշխարհաբարի շրջանում:

Սակայն այն, ինչ կա մեր ձեռագրերում, մեզ բավական հիմք է տալիս շակերտը համարելու գրավոր խոսքում գործածված կետագրական հիմնական նշաններից մեկը, որը մուտք է գործել մեր գրավոր խոսքի մեջ բավական կանոնի և որի գործածությունը շարունակվել է մինչև մեր օրերը, սակայն կրելով որոշ փոփոխություն և ձեռք բերելով նոր իմաստ ու ֆոնկցիա:

ԳԾԻԿ

Հստ բանասերների տվյալների, գծիկը կամ ուղիղ գիծը աշխարհի մեջ ծանոթ գրեթե բոլոր լեզուներում շատ ուշ շրջանում է մուտք գործել կետագրական նշանների մեջ: Հ. Ա. Այտբնյանի կարծիքով, «Վերջին ատեններու եվրոպացոցմեն քանի մ'ուրիշ կետագրության նշաններ ալ մտած են մեր մեջ, որ են՝ միության գիծ, անշատման գիծ, կախման կետք, կրկին փակագիծ»¹⁷:

Դատելով ընդհանուր շարադրանքից, պետք է «վերջին ատեններա» տերմինը հասկանալ ԺՌ—ԺԹ դարերը: Ա. Ի. Սորոլկսկին

17 Հ. Ա. Այտբնյան, հիշված աշխատությունը, էջ 931:

արդեն որոշակիորեն գծիկի հանդես գալը և տարածվելը համարում է ԺՌ դարի վերջին գործ:

Գծիկը որպես կետագրական նշան ու միայն չի հիշատակվում վաղ շրջանի քերականների աշխատություններում, այլև հետագա շրջանի քերականությանը նվիրված դասագրերում և ձեռնարկներում: Կետագրության հարցերն ուսումնասիրելին, մենք ցանկանում էինք գրչագրերում գոնե մի քանի տեղ հանդիպել գծիկի: Եվ ահա հանդիպեցինք: Ճիշտ է, այդ նշանի գործածությունը շափաղանց սահմանափակ է, մեր գրչագրերի համեմատությամբ՝ աննշան, գուցե և պատահականություն, այնուամենայնիվ նրա գոյությունը կետագրության սիստեմում փաստ է: Թերևս հետագա ուսումնասիրողներին հաջողվի գտնել ուրիշ շատ փաստեր, սակայն մենք ուզում ենք նշան արդեն եղածը:

№ 1890 ձեռագրում (1172 թ.), երբ գրիշը թվում է Վարդանանց պատերազմին մասնակցած տոհմերը և այդ տոհմերի ներկայացուցիչների անունները, որպես տրոհական նշան գործածում է գծիկը: «Ի տոհմէն՝ Ռշտուննեաց—Արտակ անուն. ի տոհմէն՝ Սիմեաց—Վասակ անուն (ձեռագիր № 1890, 42ա):

Ամենայն հավանականությամբ եվրոպական գրականության մեջ էլ այս նշանը երեխի ինքնածին չէ, գուցե եղել է հին գրչագրերում և գրողները, որոնք ուսումնասիրել են հին ձեռագրերը, նկատել են այդ ու վերականգնել՝ տալով նրան նոր նշանակություն և գործածության նոր ձավալ:

Նոր կետագրական նշաններն ուսումնասիրելիս, պետք է ճիշտ հաշվի առնել անցյալը, հների թողած ժառանգությունը, որպեսզի մեզ համար պարզ լինի և այն նորը, որ ստեղծել են հետնորդները:

Գալով գծիկին, որի գործածությունը հայ գրավոր խոսքի մեջ խիստ սահմանափակ ձևով նկատում ենք դեռևս ԺԹ դարից սկսած, պետք է ասել, որ նա առանձին դեմ չի խաղացել մեր կետագրության սիստեմում, կրել է պատահական բնույթ և ոնեցել է սահմանափակ ֆոնկցիա, մինչդեռ նա հետագյում գործածվում է բոլորովին նոր նշանակությամբ և լայն ծավալով:





ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԻՆԹՈՒՍ ՆԿԱՐՁԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ.—
Հայաստանի Արվեստի աշխատողների տանը բացվեց
ինքնուս նկարիչ Հ. Աթոյանի գործերի ցուցահան-
դեսը, որն ընդգրկում է ավելի քան հիսում արժեքա-
վոր գործ: Այդ յուղանկարներում ճեղինակը պատկերել
է Սովետական Հայաստանի բնաշխարհը:

Աթոյանի նկարները ուշադրության են արժանացել
1937 թվականից, երբ նա պարբերաբար մասնակցում
էր ինքնուս նկարիչների ցուցահանդեսներին, ուստուր-
լիկական և համամիտվննական ցրշանակներում:

Աթոյանի «Ժայռը», «Հրազդանի ձորը», «Հինա-
վուրց ջրաղացը» նկարները, ինչպես նաև «Կողմը»,
«Հարսանիք» կենցաղային կոմպոզիցիոն աշխատանք-
ները արժանացել են մրցանակի:

ԳՎԱԼԻԱԿՐԻՏԱԿԱՆ ԹԱՐԱՐԱԾՈՒՄ.—
Էջմիածնում հիմնադրվեց գալաքափառական թանգա-
րան: Այստեղ կհանդարվեն նոյւթական կուտուրայի
նմուշներ, պատմական փաստաթղթեր, քանդակներ,
գեղարվեստական կտավներ, որոնք կարտացոլեն Արա-
րատյան դաշտավայրի գույզերի և ավանների անցյալի
ու ներկան, բնակչության կենցաղը, սովորություններն
ու մշակութը:

ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ.— Վերջերս մեծ թա-
փով առաջ են գոյում երևան քաղաքի Պատմության
թանգարանի վերակառուցման աշխատանքները, որ-
տեղ վերակառուցվում են բաժինները, համալրվում
ցուցանմուշները:

Բազմահարուստ և բովանդակալից են գարձել հին
և միջին դարերի երևան պատկերող բա-
ժինները, որոնց ձևավորումն արդեն ավարտել է: Ու-
շագրագ են Արին-բերդի պեղումներից հայտնաբերված
իրերը՝ կենցաղային զանազան իրեր և արձանագրու-
թյունները:

Առաջին անգամն են ներկայացվում Հայաստանի
1751 և 1849 թվականների աշխարհագրական քար-
տեզները, որոնցում մանրամասն վերարադրված են
ժամանակի բնակվայրերը, առևտուրական ճանա-
պարհները, Զգալի տեղ է հատկացված հին երևանի
կենցաղային և ազգագրական նյութերին:

Թանգարանի հուեկտիվը այժմ աշխատում է «Երևա-
նի նախասովետական ցրշանում» և «Սովետական
երևանը» բաժինների ձևավորման վրա: Լայնորեն ցու-

ցադրվելու են 40 տարում ուսուպուրիկայի մայրաքա-
զաքի հոյակապ նվաճումները արդյունաբերության,
գիտության, արվեստի, մշակութի բնագավառներում:
Պատրաստվել է էլեկտրականությամբ գործող մի մա-
կետ, որը ցուց է տալիս ուսուպուրիկայի արդյունա-
բերության զարգացումը ըստ տամամյակների:

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ.— Հայաստանի Պե-
տական պատմական թանգարանի ազգագրական բաժ-
նի արշագախումբը եղավ Ալավերդու ցրշանում: և
կատարեց կոռու բնակչության ժթ գարի կենցաղին ու
մշակութին վերաբերող ուսումնասիրությունները:

Շրջանի բազմաթիվ գյուղերից հաջողվեց ձեռք բե-
րել մոտ 120 զանազան իրեր, որոնք պատկերացում են
տալիս անցյալ դարում լոռեցիների արվեստի, արհեստ-
ների, առևտուրի, ընտանեկան քաղաքացիական և հո-
գելոր ծեսերի, նրանց ազգային ավանդությունների,
հագուստների և նիստ ու կացի մասին:

Թանգարան բերված իրերի մեջ կան հնատախակ գյու-
րեր, տնայնագործական գորգեր, պղնձա նախշա-
զարդ և փորագրված ամաններ, արհեստներին վերա-
բերող գործիքներ, զենքեր, բրուտագործական իրեր,
զգեստներ ու զարդեր:

Նման գիտական արշագիներ կազմակերպվելու են
նաև հշեանի և Շամշադինի ցրշաններում:

ՆՈՐ ԳՐԹԵՐ.— Հայաստանի Գիտությունների ակա-
դեմիայի հրատարակությունը լույս ընծայեց ակադե-
միկու Արտաշես Կարինյանի «Ալինարիներ հայ պար-
երական ժամուկի պատմության» աշխատաթղյան երկ-
րորդ մասը: Գրքում մանրամասն բնութագրվել են
գաղութահայ այն պարբերականները, որ լույս են տեսել
Արևմտյան Ելրոպայում ժթ գարի սկզբից մինչև
70-ական թվականները:

Աշխատության մեջ Ա. Կարինյանը կանգ է առել նաև
արևմտահայ գաղութների անվանի գործիչների և
խմբակցությունների գործունեաւթյունը բացահայտող
նշանակալից դեպքերի, փաստերի և վավերագրերի
վրա:

Մանոթագրություններում տրված են գաղութահայ
պարբերականների պատմությունը բնորոշող առանձին
տեղեկություններ:

Հայաստանի Պետական հրատարակչությունը լույս
ընծայեց «Ճիշտանու բնարը» ժողովածուն, որը հանրա-

ճանաչ գուսան Զիվանու մինչև օրս հրատարակված ստեղծագործությունների ամենաստվար ու ամբողջական ժողովածուն է: Այն ընդգրկում է նաև մի շաբթ անտիկ ստանավորներ ու երգեր ժողովածուն ինամբով ու բարեխզնորեն կազմել, տեքտուրը համեմատել ու ժանօթագրել, ինչպես նաև ընդդրձակ առաջարան է գրել Աղասի Սահակյանը:

Թանասիրական գիտությունների թեկնածու Դ. Գրիգորյանի «Հայ ժողովրդական հերոսական էպոս» ժամանակակից մենագրությունը նվիրված է մեր անմահ էպոսի գաղափարական և գեղարվեստական բարձր արժանիքների բացահայտմանը: Հեղինակը հայ բանասիրական պատմության մեջ առաջին անգամ լայն պլանով ու բազմակողմանի բննարկում է «Սասունցի Դավթ»ի ժողովրդականության պրոբլեմը, նպատակ ունենալով ցույց տալ, որ այս հանդիսանում է իսկական ժողովրդական էպոսի լավագույն օրինակներից մեկը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ 40 ՏԱՐԻՆ» ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Հախմապահու գործարանը գեղարվեստական իրերի նոր տեսակներով է պատրաստված գիմավորելու Հայատանում սովորական կարգերի հաստատման 40-ամյակը: Տօնի առթիվ գործարանը Հայկական ՍՍՌ Առկարի մինիստրության պատվերով պատրաստված է 13 տեսակի հուշանվերների Գործարանի կոլեկտիվը աշխատում է նկարի Զարժաքլյանի «Սասունցի Դավթ»-ը, «Սափորով Աղբիկ»-ը, ճարտարաբանետ Խորացվանի «Դվին», նկարի Բույանի «Եղիշերու» արձանիկների էսքիզների նոր տարրերահների մշակման վրա: Հուշանվերների այս նոր տեսակները արքի են ընկույտ իրենց թեթև քաշով, պարզ ձևով և արտահայտականությամբ: Հորեւանական հուշանվերները վաճառվելու են «Հայաստանի 40 տարին» մակագրությամբ գեղեցիկ ձևագրաված փաթեթների մեջ, չնորդագորական բացիկների հետ:

ՆՈՐ ՀԱՅՏԱԿՈՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — ԿԱՐՄԻՐ ԹՂՈՒՐՈՒՄ. — Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Լենինգրադի Պետական էկոլիտամի համատեղ գիտական արշավախումբը այս տարի էլ պեղումներ կատարեց Կարմիր Բուրում և հայտնաբերեց արժեքավոր նյութեր: Գիտական արշավախմբի պետ, պատմական գիտությունների դոկտոր Բ. Պիտորովսկին այդ ժամին հայտարարեց.

— Այս տարի ուրարտական բերդի պեղումները ինտերնացիական էին միջնաբերդի գլխավոր դարրաս.

Ների մոտ թացվել է մոտ 370 քառակուսի մետր տարածությամբ մի ընդարձակ դաշլիճ, որը կենտրոնում ունի լորս զանգվածային սյուն: Պեղված են նաև միշանցների տեսք ունեցող շինություններ:

Եինությունները կրում են ուժեղ հրդեհի հետքեր: գիտնականները գտնում են, որ հրդեհը տեղի է ունեցել մեր թվականությունից առաջ Զ դարում՝ ամբողջ վրա սկզբությունից գրունելու ժամանակ:

Միջնաբերդի մոտ գտնվող բնակվայրը պեղելիս հնագոտված են ներքին շերտերը, որոնք ժամանակի տեսակետից նախորդում են ուրարտացիներին Ամրոցի փլատակների տակ հայտնաբերվելուցին բարե տներ, որոնք ունեն հացանատիկ պահելու տնտեսական փոսիր, ինչպես նաև բարե կուռերե և այլ առարկաներ, որոնք վերաբերում են մեր թվականությունից առաջ երկրորդ հազարամյակի վերջին և առաջին հազարամյակի սկզբին Զափազանց հնատարբարական է մի հայտնագործություն՝ բրոնզի զնների պատրաստման արհեստանոցից մնացորդները: Այստեղ գտնվել են մետաղի հալբանոթներ, խարամներ և բարե ձուլակապարներ:

ԸՆԴՈՒՆԵՎՈՒԹՅՈՒՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. — Օգոստոսի 1-ին ռեսպուբ լիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում ու տեխնիկամներում սկսվեցին 1960-1961 ուսումնական տարվա ընդունելության բննությունները: Երևանի Պետական համալսարան և 10 ինստիտուտներ, կընդունվեն 4575 պատանեներ և աղջիկներ՝ 1300-ով ավելի, քան ընդունվել են անցյալ ուսումնական տարրում: Նրանցից ավելի քան 2000-ը ուսումը կհամարեն արտադրության հետ:

Հայէկեկարուգործարանում այս տարի ստեղծվել է Կարլ Մարքսի անվան Պոլիտեխնիկ ինստիտուտի առանձին ֆիլիալ, Զգալիորեն ավելացվել է բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների երեկոյան և հետակա բաժիններում, ինչպես նաև հեռակա ուսումնական հաստատություններում ընդունվողների թիվը:

Նոր ուսումնական տարրում Երևանի Պետական համալսարանում և մի շաբթ ինստիտուտներում կգործ են ութ նոր ամբիոններ:

1300-ով ավելացվել է նաև 35 տեխնիկումներում ընդունվողների թիվը: Ընդամենը այս տարի տեխնիկումներում կընդունվեն 5600 պատանիներ և աղջիկների Երևանում ստեղծվել են կապի և մաթեմատիկական հաշվի մերենաների նոր տեխնիկումներ:





Երկարատև հիվանդությունից հետո վերցիրս Բեյրութում վախճանվել է լիբանանի հայության ծանօթ և սիրված դեմքերից, Մայր Աթոռի բարերար Ապրո Ապրոյանը:

Հանգուցյալը ծնվել է 1896 թվականին Կոստանդնուպոլսում, ուր և ստացել է իր նախնական և միջնակարգ՝ կրթությունը, ապա մտել կյանքի ասպարեզ՝ որպես ուշիմ, ձեռներեց գործի մարդ, և իր զուսապ ու բարեմուն նկարագրով, ուղղամտությամբ և անխարդախ գործիմացությամբ, սիրվել և հարգվել է հայ և օտար առևտրական շրջանակներում:

1920 թվականին վերջնականապես հաստատվում է Բեյրութ, ուր և հաճախ գործուն մասնակցություն է ունենում տեղի ազգային-եկեղեցական կյանքի մեջ, եղել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միու-

թյան հավատավոր անդամներից մեկը, մասնակցել է Բեյրութի հայոց ազգային առաջնորդանի Քաղաքական ժողովներին ու Տնտեսական խորհուրդներին և մեծապես օգտակար եղել իր անշահախնդիր և ազգանվեր խորհուրդներով ու թելադրություններով:

Հանգուցյալը եղել է հատկապես վստահելի, մտերիմ աշակեցը Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս լուսահոգի Գարեգին Հովսեփյանցի:

Հանգուցյալը մեկն էր նաև Բեյրութի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովի կարգառում և նվիրված անդամներից:

Ապրո Ապրոյանի վաղաժամ մահվան առթիվ, Բեյրութում կազմակերպվել է համագոգային հուղարկավորություն՝ բարձրապատիվ Տ. Խաղում արքեպիսկոպոսի նախագահությամբ, Թաղման տիտուր արարողությանը մասնակցել են նաև գերազնորհ Տ. Դերենիկ և գերազնորհ Տ. Գնել և պիտի կոպոսները, Հոգեղնորհ Տ. Գևորգ և Հոգեղնորհ Տ. Գյուտ վարդապետները, քահանա հայրեր, ազգային մարմինների և մամուլի ներկայացուցիչներ, բարեկամներ և բազմաթիվ օտար անձնավորություններ: Հանգուցյալի թարմ հողակուտի վրա դամբանականներ են խոսել գերազնորհ Տ. Խաղում արքեպիսկոպոսը, բանաստեղծ Վահե Վահյանը, Միհրան Սեֆերյանը և ուրիշներ:

Հանգուցյալի մարմինը ամփոփվել է Բեյրութի Ֆըրն-էլ-Շուքքեթի ազգային գերեզմանատանը:

Հանգուցյալի մահը խոր վիշտ պատճառեց նաև Վեհափառ Հայրապետին, որի հետ նա կապված էր խորունկ բարեկամությամբ և հարգալիր մեծարանքով: Հանուն Վեհափառ Հայրապետի, ցավակցական հեռագիր ուղղվեց Ապրոյան ընտանիքի հարազատներին՝ միխթարության սրտագին խոսքերով և բարեմաղթություններով:

Հանգուցյալի մահվան քառասունքի առթիվ Մայր Տաճարում մատուցվեց սուլր պատարագ և կատարվեց Հոգեհանգիստ:

Թող Տերը իր անթառամ պսակին արժանացնի հանգուցյալի Հոգին և նրան դասի արդարների շարքում,



**ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ
(1894—1960)**



Օգոստոսի 18-ին, հինգշաբթի օրը, երեանի իր բնակարանում մահացավ Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նախկին վերատեսուչ Մարտիրոս Տեր-Ստեփանյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1894 թվականի մայիսին Կիլիկիայի (Աղանայի նահանգ) Չորք-Մարզպանում (Դյորտ-Ցոլում), հողագործի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում մինչև 1908 թվականը, ապա ինքնակրթությամբ կատարելագործել: 1909 թվականին ապրել

է Կիլիկյան եղեռնի սարսափը իր ծնողների և հայրենակիցների հետ:

1910 թվականին ուսման սերը նրան տանում է Կոստանդնուպոլիս, որտեղ ընդունվում է Մաքրի-գյուղի Պեղազյան միջնակարգ դպրոցում, որն ավարտում է 1912 թվականին և նույն թվականին ընդունվում Կոնստանդնուպոլիսի Երկրաշախական բարձրագույն դպրոցը և ապա նվիրվում ազգային-հասարակական, մանկավարժական գործունեության ծննդավայրում, Աղանայում, Օսմանիեյում, Հաջընում, Մերսինում, Ալեքսանդրիայում, Բեյրութում:

1921 թվականին ընտանիքի հետ լրում է իր ծննդավայրը և հաստատվում Ալեքսանդրիայում, ապա Բեյրութում, ուր զրադվում է նույնպես ուսուցչությամբ: Որոշ ժամանակ խմբագրում է «Զարթոնք» օրաթերթը Բեյրութում և «Եփրատ»-ը Հայեպում, գործուն մասնակցություն ունենալով միշտ ազգային-հասարակական աշխատանքների մեջ:

1946 թվականին ընտանիքը ներգաղթում է Հայրենիք, իսկ ինքը՝ 1951-ին:

1954 թվականին երջանկահիշատակ Տ. Գելվորդ Զ Կաթողիկոսի մահից հետո նշանակվում է Գերագույն Հոգևոր հորհրդի անդամ և միաժամանակ Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ, մինչև 1956 թվականը:

Հանգուցյալը ունեցել է նաև գրական-հրապարակախոսական գործունեություն:

Հստ հանգուցյալի ցանկության, նրա անցյանը ամփոփվեց Ս. Գայանեի վանքում, որտեղ օգոստոսի 21-ին, կիրակի օրը, թաղման արարողության նախագահեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և իր դամբանականի մեջ ժանրացավ Հանգուցյալի ազգային-հասարակական գործունեության վրա:

Թաղմանը մասնակցում էին նաև Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և Հանգուցյալի հարազատներն ու բարեկամները:

Հանդիսատ նրա տառապած ուկորներին:

